


ՍՈՂՈՄՈՆ ՏԱՐՈՆՅԻ

ԴԱԺԻԵՐԳԻԸ



ՀԱՅՈՒՆՏՆՐԱՏ

891.99

8970

S-26

Suprtyh, Hnyn Dn.


Suprtyh kpgg.

10 m.

12/xii

249





891 99

5-26

ՍՈՂՈՄՈՆ ՏԱՐՈՆՅԻ

ԱՅՈՒԳԱՄ Է 1961 թ.

8980
A II
29913


Դ Ա Վ Թ Ի Ե Ր Գ Ը



С. ТАРОНЦИ
ПЕСНЯ ДАВИДА
(На армянском языке)
Аргиз, Ереван, 1946 г.

ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔ

Դ իմ հի՛ն կտրին, իմ վե՛ն ու վե՛ս:
ՍՈՂՈՄՈՆ ՏԱՐՈՆՑԻ



Ա.Ռ.Ա.ԶԻՆ ՅԵՐԵՆԷ

Այնքան պայծառ եմ հիշում... Կարծես երեկ էր, երեկ,
Այնքան մոտ է հուշն այդ ինձ, որ կարծես նոր եմ ապրում.—
Երբ բացվեց մեր լեռներին գերահրաշ մի ցերեկ,
Այն առաջին ցերեկը— իմ Նաիրյան աշխարհում:

Եվ չորնդաց ցնծության մի նոր խոսք ու մի նոր երգ՝
Ծերունու և մանկան մեջ, որպես հորդ գետ ու գարուն.
Սերսուի սրբեց մեր սարերն ու դաշտերը արնաների,—
Այն առաջին ցերեկը— իմ Նաիրյան աշխարհում:

Հաղարամյա փնտռած բախտ, որ բացվեցիր դու այնօր,
Նոր ոսկեղար կերտելով մեր պատմության մեջ չեղած,—
Մեր քաջավանդ պատմության նոր էջ, նոր ու գորավոր:

Այն լույսով է մեր մեջն ու մեր շուրջն ահա հեղեղված,
Այն լույսով ենք շնչում մենք ստալինյան մեծ դարում,—
Ներկայի մեջ, որ զեպի Ապագան է երկարում:

1945.

ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔ

Իմ Հայրենիք ջահել ու պերճ,
Կանգնել ես դու հաղթահասակ
Տիեզերքի հյուսվածքի մեջ:

Ոսկունքերդ արյունակալ
Փռչիացան, ու՛ղեռ պիտի
Փռչիանան, կորչեն անհետ:

Արյան միջից ու երկաթի
Դուրս եկար դու, որպես ասպետ,
Դյուցազն Հայկի նիզակի պես:

Իմ հին կտրիճ, իմ վեհ ու վես,
Իմ հաղթագեն, իմ մտերիմ,
Ստալինի խոսքին, գրքին —

Հավերժորեն հավատարիմ:

1945.

ԱՐԵՎԱՅԻՆ ԵՐԵՎԱՆ

Արևային Երևան, արևային դու քաղաք,
Քնձ թվում է, թե արևն, իր իսկ օրից առաջին,
Երբ ճառագեւ է երկրին հանդիսավոր ու խաղաղ,
Ճի ողջ լույսը թափել է քո քարին ու կանաչին:

Ի՞նչ էիք դու, Երևան, — Հյուղերի մի կավե թանդ,—
Նեղ փողոցներ հորանջող, կեղտադալար ու չնչին:
Ահա այսօր կանգնել ես նոր շենքերով երկնաբախ,
Եվ խառնել ես քո երգը աշխարհների շառաչին:

Արևային Երևան, դու անգին մայր, դու սուրբ հող,
Դու օրորան— հրաշունչ մեր երգերի նորակերտ,
Եվ գանձերի հնօրյա՝ աշխարհներին հիացնող:

Դու հայրենիք կարմրասիրտ, գրանիտյա անառ բե՛րդ,
Դու շողշողուն ու շապլ, շողի. շողու օթևան,
Իմ Երևան, Երևան, արևային Երևան:

1945.

ՍՈՎԵՏՍԿԱՆ ՄԱՅՐԵՐ

Սովետական մայրեր, լցված հույզով անեզրական,
Իմ այս երգով, անարժան ձեր սիրո գեթ մի կայծին՝
Ուզում եմ սփռվել սիրտը ձեր մայրական.
— Խաղաղություն կուզում քաջ ընկածին:

Սովետական մայրեր, հերոս, հերոսածին,
Դուք, որ համբերելով արցունքեցիք այսքան,
Մաքառեցիք ի սեր օրվա այս հաղթական.
— Փանք ու պատիվ կենդանի մնացածին:

Մայրեր ձեր և երիտասարդ, ով էլ լինեք և ուր,
Թողեք, հանուն ապագայի լուսաշառաչ,
Որպես զրոշ՝ խոնարհվեմ ձեր վշտի առաջ:

Որպես հարգանք՝ համբուրեմ ձեր հողին մաքուր,
Ձեր սրտերի ուժով համբուրեմ ձեռքը ձեր,
Սովետական մայրեր:

1945.

ՓՈՍՏԱՅԱՐ

Օ՛, փոստատար, փոստատար, դուստ թակիր դու գգնւյշ,
Թե նամակ, թե հեռագիր ուրախ տուր ինձ, փոստատար...
Նամակների մեջ այսքան դեթ մի նամակ չգտամ,
Մի երկտող, որ փարատեր ամեն կասկած ու մշուշ:

Դու գալիս ես ամեն օր, մի օր՝ շատ վաղ, մի օր՝ ուշ,
Եվ գամում եմ հայացքիդ հայացքս լուռ ու մթաք.
Մի նամակ... ո՛չ, դեթ մի խոսք, որ լինի ինձ մխիթար՝
Անհայտի մեջ տեսնելու կորած եղբորս անուշ:

Բայց ամեն օր, լուռթյամբ, տխրությունս բաժանած,
Դու հեռանում ես արագ, մեկին ուրախ լուր տալու,
Մի ուրիշի աչքերում բոթի սև բոց վառելու...

Օ՛, փոստատար, փոստատար, դուստ թակիր դու կամայ,
Սրտիս դուրը առավել՝ թակիր խղճիդ նուրբ ձեռքով,
Որ գոնե իմ խեղճ հույսը չհեկեկա արցունքով:

1945.

ՎԵՐԱԴԱՐՁ

Դու վերադարձար հզոր, հաղթագին,
եվ վերադարձար նոր խնդությունով,
Դու Ծոերի զանգ, կարմրասիրտ բազե,
Քանկադին ընկեր, սիրելի Տոնո

Կարո՞ղ եր կայդեր Վիրինն երազել,
Որ պիտի անցնես մի օր Բեռլինով,
Պիտի հատուցվի մեր արյունը ծով՝
Մեր հավերժական գոյությանն ի սեր։ — Կ 8

Մեծ Առաջնորդի հաղթ ձեռքը՝ որ մեր
Հակառից սրբեց որք անունն անարդ,
Դեռ պիտի բերե մեզ նոր գարուններ

Կա արդարություն հին արևի տակ
Տոնո, իմ կանաչ մանկության ընկեր,
Բարի վերադա՛րձ, բարի հաղթանակ

1945.

ՁԵՆՔԵՐԸ

Թե ձեռքերն այս չլինեին,
Զլինեին այս ձեռքերը՝
Մեր այգին ու մեր երգերը
Հուր ու մոխիր կդառնային:

Եվ երկիրը ճաղատար ու հին,
Հանճարակերտ մեր վանքերը, 1, 17, 5
Եվ գլխաթուն այս շենքերը,
Եվ երևանն արևային: — 47

Արդ՝ ուզում եմ համբուրել այս
Հաղթանակած ձեռքերը պարզ
Եվ ձեռքեր՝ որ չկան այսօր:

Եվ ձեռքերի ձեռքը հզոր,
Որ կերտեց օրը հաղթության՝ 113
Հանուն ներկա և հեռավոր—

Արդար կյանքի գլխաթու թյան:
1945.

ՀՈԿՏԵՄԲԵՐ

Օ՛, Հոկտեմբեր, աշնան երկրորդ ամիս,
Անհունորեն շուայ, շեկ, շողշողուն.
Մայրացնում ես դու անընկճելի երկրիս
Ամեն ծաղիկ ու ծառ, ամեն ցողուն:

Ահա բացվում է քո այգը սուտակ ու վարդ,
Եվ, ոսկի սանդալներով օրը, կանգուն,
Արեհանդերձ հասակով, հասունությամբ հպարտ
Շրջում է արտերով և կանգնում է այգում:

Քանի Հոկտեմբեր է բացվել Արարատյան
Դաշտի վրա և մեր Զանգվի ձորին.
Եվ Սեանի վրա մեր կապուտան,
Եվ սարերին և մեր բլուրներին:

Քանի Հոկտեմբեր է, որպես քաղցր խաղող,
Վայելել շուրթը մեր և բիծքը մեր.
Բայց դու այլ ես հիմա,—տենդոտ և հարձակվող,
Աշնան երկրորդ ամիս, օ՛, Հոկտեմբեր:

Ահա բացվում է քո օրը՝ որպես
Էջը ըղձալի և գերող զրքի.
Եվ հազեցնում է կապույտ օդը արեակեղձ
Համբավով կովի և հաղթանակի:

Ահա անեղր Ուկրաինան,—Ահա կրճքից նրա
Ես է քաշում թշնամին թաթը Տեվտոն.
Եվ նորից կանգնում են պատվանդանի վրա
Խմելնիցկին և Շեվչենկոն:

Եվ մայր Կիև է դառնում Պավլո Տիչինան,
Եվ դառնում է տունը (դուցե և ավերակ).
Եվ երգ է գեղգեղում նոր հաղթության՝
Հայրենի պարտիզում, որպես սոխակ:

Եվ տեսնում եմ նաև կույսերն Ուկրաինայի,
Բելուսուս գուտորերը, յե՛հ կի՛նը տնճամբեր՝
Սրբելով արցունքը սարսափի ու մահի,
Ողջունում են քեզ, օ՛, Հոկտեմբեր:

Ողջո՛ւյն քեզ, Հոկտեմբեր, աշնան երկրորդ ամիս,
Ամիս հասունության և հաղթության.

Այսօրըդ ապրում եմ Հայոց երկրիս

Ամենախի՛նդ խրախճանքով նախասարդյան: *Վ. Կարաման*

Քանզի հաստատ զիտեմ, որ քեզանից հետո
Եկող ձմռան միջից, ինչպես բացված անհունը,
Անեղրական ուրախությամբ՝ ողջունելու ենք խանդով
Խաղաղության դարձնը: —

1943.

ՀԱՅ ՄԱՐԹԻԿՆԵՐԻՆ

Ձեզ համար եմ այսօր այս տողերս գրում,
 Այս տողերս՝ նետած ձեր երազին.
 Հայ մարտիկներ մղման այս օրերում,
 Հիշեցեք մեր երկրի աշնան մասին—
 Հիշեցեք մեր դեղձան այգիները զով,
 Եվ ծառը, և ծիլը, և որթը լուսողի,
 Որ ահա շիկնել են կարմիր հույզերով
 Ի վերա մեր Հայկյան հողի: — *Ապրիլ*
 Եվ նայելով մեր այս չքնաղ աշնան,
 Ես իմ եղբայրական սիրտն եմ նետում ձեզ մոտ,
 Ձեզ մոտ, հայ մարտիկներ Թամանյան,
 Ընկերներ ծանոթ և անծանոթ—
 Որպեսզի առավոտը բացվի զոհար ցողով,
 Որպեսզի տերեւը շշնջա տերեւին,
 Որպեսզի կռուներեն անցնեն տաղով,
 Հրաժեշտ տալով Մամին և արևին,
 Որպեսզի մեր ծուխը պայան-պալան
 Ելնի երդիքներից և ծխնելույզներից,
 Որպեսզի մեր մանգաղն ու մեքենան
 Ձվշուկեն գերմանական կռուներին,
 Որպեսզի կյանքը մնա միշտ բերքուն,
 Որպեսզի մնա հեքը հայ բարբառի,
 Որպեսզի գնգա քաղաքը աղմուկուն,
 Մեր թոնրի անթեղը չսառի,
 Առաջ մղվեցեք միշտ— Միշտ զարկեցեք
 Հին ոտխին—գերմանացուն—
 Ձեր ամեն մի զարկը՝ ծավալում է կապույտ մի ձեզ—
 Արդարության արշալույսով ցնծուն:
 Ջարկեցեք, և երբ մեր հորիզոնին անեզը
 Այլևս չմնա և ոչ մի ամպ՝
 Ձեր մայր ժողովուրդը կհամբուրե ձեզ—
 Աշնան ուրախաբար քաղցրությամբ...

1943.

ՀԱՅՈՒՅՈՒՄ

Ահա վասիկ աչքովն իմ քինավան խնդության՝
Տեսնում եմ, ինչպես լույսը հստակ,
Որ ձեր առասպելը անպարտության—
Նետված է պատմության ոտքերի տակ:

Ձեզ շանթահարում է մեր ձեռքը քաջարդար,
Եվ, արդ, ճարճատելով, դուք ետ եք գնում.
Բայց մենք դեռ կփշրենք ձեր մեջքը չարաչար—
Այնտեղ, Բեռլինում:

Դուք հիշում եք Մոսկվայի մատուցներն արդյոք,
Եվ Տիբվինը, և Լենինգրադն արի.
Եվ Ստալինգրադն անհողողդ և անողոք.
Առաջին փշրումը ձեր բանակների:

Իհարկե, հիշում եք, վատասիրտ Վոթանի թռռներ,
Որդիներ խաղմիկ Շլիֆֆենի և Հոֆմանի.
Որդիներ Վիլհելմի մարդակուլ ու նեռ,
Դուք, խաչողներըդ ոգու և մարմնի:

Չարությամբ լցված ներքինու ցաւամբ՝
Ոոնաց ձեր մեծ ոճրագործն անամոթ.
Եվ մղեցիք մեր հորիզոնին, ինչպես սևակնած ամպ,
Երկաթված բանակները ձեր հորդ...

Մեզ վրա թափեցիք մաղձը ձեր պրուսական,
Մեզ վրա թափեցիք երկաթը ողջ Եվրոպայի—
Բայց չթեքվեց հասակը մեր հսկայական,
Մեր անկող ոգին ամենի:

Մենք կանգուն մնացինք ինչպես կաճքն Առաջնորդի մեծ,
Եվ անա, շառաչով մի աշխարհացնցուն՝
Շարժում են բանակաները ձեր արնանեղձ—
Դեպի մահ և ոչնչացում:

Ահա քաղաք քաղաքի, գյուղ գյուղի ետևից
Նվաճում է մեր անծալ քաղուկը, և դուք,
Սեկտաբար, ինչպես առնետները, հանված ընկերից,
Ճողգողում եք զեպի Արևմուտք:

Չիք ձեզ փրկություն—Մոտ են ձեր վերջին օրերը:
Եվ մեր երկաթյա մատները շուտով
Դիտի աքցանեն զերմանական ձեր կոկորդները—
Մահվան սեղմումով:

1943.

ՈՐՈՏԱ՛, ԻՄ ՆՐԳ

Այս տենդոտ օրերում՝ որոտան, իմ երգ,
Կոփվիր, ինչպես անկողնում կամք.
— Կարմիր մարշալներին. գեներալներին մեր,
Ֆոլմր մարտիկներին՝ հաղթանակ


Մեր բոլոր քնարներն ու սրինգները սեգ
Շունչներին բացած՝ թող երգեն, երգեն,—
Թող հնչեն ի լուր աշխարհի, սշխարհով մեկ—
Քաջություն ու կորով կայծակեն:

Ահավասիկ ճարճատում է պրուսական ողնաշարը,
Եվ դեռ, մեր Բանակ, ծովացած ափունքից ափունք,
Մղում ես հարձակման մրկաշունչ երկվարը
Ինայի Արևմուտք:

Եվ այսօր, երբ երգես հնչում է ավելի առնական,
Ես, վերջին զինվորս, պոետ և քաղաքացի,
Խնդությամբ եմ երգում ձեզ, գնդեր գվարդիական,
Եվ քեզ, կարմիր այրուծի:

Եվ ձեզ եմ երգում նաև հայ քաջեր, հզոր և թխաշվի,
Դուք կռվում եք, որ հացն ու գինին մեզ մնան.
Որ մեր անցյալ դառնությունը հատուցվի,
Որ շողա ավելի երկինքը մեր ազատության:

Դուք կռվում եք հանուն Մեսրոպի բարբառի,
Սեր հանճարեղ քանդակի և դայրության երկնահոր.
Մեր քարի, մեր ծառի, մեր ծաղկի, մեր ջրի,
Մեր ածվի լայնացման համար—մարդկային բախտի մեջ հանուր:



Դուք զրոհում եք, և ես տեսնում եմ ամենի
Մեր հողն էլ է ձեզ հետ ծալալվում առաջ.
Սեղմեցեք, սեղմեցեք կողերը Գերմանիայի,
Սեղմեցեք կոկորդը ահառած:

Սեղմեցեք հանձն մեր աղատության,
նվ թող փողփողա փառքը արևածին —
Նրանց, որ անգոյացան՝ հանուն մեր զոյության,
Բայց անմահությամբ արձանակցին: 2

Այս տենգոտ օրերում՝ որոտն, իմ երգ,
Կոփվիր, ինչպես անկոտրում կամք.
— Կարմիր մարշալներին, զինեղալներին մեք,
Բոլոր մարտիկներին՝ հաղթանակ:

1943.

ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՄԱՂԱԿՆԵՐ

Ուկրաինական ծաղիկներ, քնքռւշ, քնքշազկէշ,
Շեփչենկոյի խոհերի պէս դունազեղ,
Լեսյա Ուկրաինկայի երգի պէս տխրազին,
Տիչինայի երգի նման սրտազեղ:

Ո՞ւր են հիմա վարդերը ոսկեզեղմ,
Ո՞ւր են սոխակները միշտ երգունակ,
Ո՞ւր են մանուշակները բիլ ու մեղմ,
Կապուտաշյա կույսի արցունքի պէս հստակ:

Ահա տեսնում եմ ձեզ՝ իմ մտքի աչքերով,
Եվ ինձ պաշարում է ըմբոստ մի տխրութիւն:
Ձեզ... Ձեզ ջարդեց Մոլոխը բիրտ ոտքերով,
Հագած երկաթ ու խարդախութիւն:

Սակայն ամեն ծաղկի համար նրանք կհատուցեն,
Կհատուցեն ամեն թուփի համար.
Եվ թող հանգիստ մնան սերմերը ձեր,
Սերմերը ձեր—ճգմած և հողմահար:

Երբ անցնի ձմեռը դրոհի և մղման,
Կծաղկե՞ք դուք նորից և ամեն ծառի ճյուղ՝
Ձեզ հետ կերգեն Էռլյան քնարի նման,
Այնժամ հեռունները կնայեք աներկյուղ:—

Կէինեք սիրող սրտերի սերտ նշանակ,
Կզարդարեք հերոսների թարմ շերիմներ.
Կզարդարեք Ուկրաինան երգուն ու ծաղկահասակ,
Ուկրաինական ծաղիկներ, քնքռւշ ծաղիկներ:

1943.

Բ Ր Ո Ն Ջ

Քրոնդե կերտվածքով ձեր անկողն հասակի՝
Ահա դուք շանթում եք աչքերիս առաջ,
եվ ես մերթ լսում եմ ձեր անառ դենքի,
Մերթ հըշեկ գոմնայի և մուրճի շառաշ:

Իմ կտրիճ եղբայրներ, իմ քույրեր քաջանուն,
Կորյուններ, դուք, աղջիկ և տղա.
Դուք՝ գնդձ եք, և կնիք եք, և մրրիկ-մղում,
Պայքարի շեփոր և սիրո ծնծղա:

Լենինի թոռներ, զավակներ մեծ Ստալինի.
Կայծակե արծիվներ, երկինքներ անծայր.
Ձեզ սնել է կաթով գործի և պայքարի—
Պարտիան մեր դուռը ազնամայր:

Դուք անցել եք անկողն ուղիով, մրրկով մկրտվել,
Երբ բացվում էր Առաջին Այգը մարդկության.
Դուք քանի՛, քանի՛ հերոս եք տվել—
Հասակով ջանել, բայց սրտով տխտան:

Ռուզակովն իմ սրտից արցունք է քամել,
Եվ Սոսնովսկին՝ ներշնչել վեհություն.
Արգամը՝ ներշնչել ինձ զայրույթ և սեր,
Գաստելլոն՝ դարմանք և քաջություն:

Ձեր կամքն այն պողպատն է, որ կոփվել է կուռ
Կյանքի կռանով շեշտակի.
Դուք մեր հողմահար դրոշմ պուրպուր
Տանում եք զազաթը գալիքի:

Ձեր երթը՝ անշեղ է։ Ընդմիշտ աննահանջ։
Դեպի Արևմուտք է ձգված ձեր ուղին։
Ձեր ամեն մեկիդ մեջ նստած է մի քաջ
Լիզա Չալիկնա և Տալալիլին։

Զի շնչել ոչ մի ալլ սերունդ աշխարհում
Ձեզ նման—դործն ու պայքարը միասին։
Դեռ կդա մեր նոր Ֆրոդուսին մեծանուն
Երգելու ձեր կյանքի մասին։

1943.

Տ Ե Ս Ի Լ Ք

Հուլիսի 1-ին 1944 թ. հունիսի 1-ին կապի դեպ.
ՄԻՍԱԲ ՄԵՍԱՐԵՆՑ

Խնչպես սարից իջնող արծաթ ջուրը ծիծղուն,
Այգիների ոսկե խաղալների վրա,
Դանդաղագիտակ, պայծառ մի մանուկ է խաղում,
Եվ խինդով վառվել են հուր աչքերը նրա:
— Արի զբերես, մանուկ, եկ, իմ զվարթերես.
Ու մինչ կանչում եմ ես, նա, քնարը ձեռքին,
Մտնում է Հայկական Դպրոցի սեմից ներս,
Կանգնում երգնկացու և Զրիկի կողքին.
Կանգնում է իմ կողքին, խնչպես մի հին ընկեր,
Ու թափանցում քաղցր հայացքն իմ հայացքում.—
— Ե՛ս էլ, ահա, ես էլ գրում եմ նոր երգեր,—
Իմ այս անծայրածիր հոգի Հայրենիքում...
Եվ, հանկարծ, աչքիս դեմ, դարձած երիտասարդ,
Սերած հրահանճար հուր գուսաններից,
Երգում է սիրտ ու սեր, երգում է ջանք ու մարտ,—
Ջերմին ու կորովի—Արարատյան հրից:
— Ասա, դու երբ, դու երբ մեծացար այդքան ժիր,
Երգի աստված երբ քնարն ույս տվեց քեզ,
Որ, ելես, արգավանդ, ու Մեսրոպյան անձի
Շեկ ցորյանի անհուն ածունեքը հնձես
Մինչ ես հրճվում էի... նա, քնարը թողած,
Հրացան է առնում, շուրթին՝ հաղթական երգ,
Եվ ընկնում է դիրքում՝ հերոսությամբ վառված,
Հերոսական կրճերն—վարդանման մի վերք...
— Օ, դու, ընկեր, դու, որ պայքար էիր երգում,
Դու, որ ուզում էիր երգել համ հուրհրա,
Ինչու թողեցիր, որ լամ ես—կյանքի ալյուր—
Իմ սրտից վայր ընկած խաղալների վրա...

1944.

ՍԵՂԱՆ

Հայրենի լճակի իմ ժողովրդի
 Խնդրի ու վշտի հստակ արտասուք.
 Դու անմեռ կարոտ մեր անհաղ սրտի,
 Դու երկնանքվեր-հողեզեն մասունք:
 Դու մերթ հագնում ես արևը չքնաղ
 Այ-ծիրանավոր թաղունին ինչպես.
 Մերթ պայծառանում լույսի պես խաղաղ,
 Եվ մերթ մթազնում մութ գիշերվա պես
 Մեզին, գոհար է կղզիդ թովչական,
 Ուր շրջում էին աննյութ դարերի
 Զվարթ աստվածներն հեթանոսական
 Եվ ստվերները մռայլ սուրբերի:
 Ամեն մի ժեռուտ, ամեն արահետ
 Պատմում են հեռու, հեռու անցյալից.—
 Քվում է՝ քայլում եմ պապերիս հետ,
 Արանց ողին է առաջնորդում ինձ:
 Քվում է որ դու, մոր աչքի նման,
 Թափանցում ես իմ խորքերը սրտի.
 Կախարդում ես ինձ, ինչպես մի հման,
 Հանճարի փայլով իմ ժողովրդի:
 Կանցնի աշխարհում—ամեն, ամեն ինչ,
 Ինչպես ամպերի բարդն այս սպիտակ.
 Բայց դու կմնաս հավերժ հմայիչ,—
 Սիրելի Սևան, հայրենի լճակ:

1940.

ՎԵՐՍԴԱՐՁ 7

Երազիս մեջ ես հեկեկում էի,
 Եվ դանոն էր լացըս, և արցունքըս հորդ-
 Եվ հոգուս սրտով ես զգում էի,
 Որ վերագարձուր, դնւ, ճանապարհորդ,
 Ուսիդ մի մախաղ, ձեռքիդ՝ գավազան,
 Ու շոայլ ժպիտ դեմքիդ լուսընկա.
 Ու ես, բերկրանքի լացով սրբադան,
 Մոր կարոտի պես՝ վզովդք ընկա,
 Ամուր գրկեցի թևերով կարոտ,
 Ամուր գրկեցի, ու թոռ քնից...
 ... Օրեր են անցել, բայց դեռ չեմ կարող
 Ազատվել քաղցրը այդ տխուր թյունից։—

1940.

ՍԱՅՍԹ-ՆՈՎԱ

Ձկա մի կյանք, որ չտեսնեմ քեզ նրա մեջ, Սայանթ-Նովա,
Մի հուր հոգի, որ չտեսնեմ քեզ նրա մեջ, Սայանթ-Նովա:

Յար սիրեցիր, յարիդ մատաղ, սիրոնդ մատաղ, մատաղ քեզ, ջան:
Ձկա մի յար, որ չտեսնեմ քեզ նրա մեջ, Սայանթ-Նովա:

Սիրող սրտի, դադող դարդի, վառող վարդի դու խնայ բոլոր,
Ձկա մի ճակ, որ չտեսնեմ քեզ նրա մեջ, Սայանթ-Նովա:

Դու միշտ բացված ոսկի սինի, հաց ու դինի, դու խաղ ու ապր,
Ձկա մի քեֆ, որ չտեսնեմ քեզ նրա մեջ, Սայանթ-Նովա:

Դու անարցունք լացի նման, ավելի խոն, ավելի զոն,
Ձկա մի աչք, որ չտեսնեմ քեզ նրա մեջ, Սայանթ-Նովա:

Սիրող սրտի ազնիվ դավթար, սիրող սրտի դեղ ու դարման,
Ձկա մի վերք, որ չտեսնեմ քեզ նրա մեջ, Սայանթ-Նովա:

Կյանքդ կրակ, սերդ կրակ, հուր-հավիտյան դու կենդանի,
Ձկա մի կյանք, որ չտեսնեմ քեզ նրա մեջ, Սայանթ-Նովա:

1945.

ՌԱՆՍԱՏԵՂԾԻՆ

Ակրոսթիսոս

Անմահըդ մեր գոյրության, կախարդ սխարպետըդ վերջին,
Վարպետ արտի, զգացման, վարպետ խոհի և խոսքի.

Եկար արտի քայլերով՝ անապատից տատասկի՝
Տալգիդ թովիչ հնչյունը խառնելու մեր շառաչին:

Իբրեւ ժյուռնիլ բարձրացար խարույկից հուր ու ոսկի.
Քո հայրենի սերն եղավ հզոր, քան սերն առաջին,
Իրիկվա պես դու եկար, բայց մեր հողի հին լանջին
Մեր եղար և առավիտ, և ուժ՝ հանուր մեր բազկի:

Ահագասիկ մեզ հետ, Մեծ, քայլում ես քանջ ու հզոր,
Հին գանձերովդ հարուստ և գանձերով դեռ տալիք,
Անվերջ գեղմամբ լիուլի, իմաստությամբ խորախոր:

Կախարդ վարպետըդ վերջին, դեպի դարերը գալիք,
Յոթանասուն փառապանծ տարիներով հին ու նոր,
Անմահության մեջ պիտի շողաս հավետ ու հավետ—

Թափառողյան այս Տոնիդ՝ թող համբուրեմ քեզ, Վարպետ:

1945.

Ի Լ Ն Գ Ի Ս.

Աբովյանի կորսւցյան առթիւ

Որպիսի տխրագին եղերդ, որպիսի ծանրը կորուստ,
Եւ մարդը անգոր է գիտնալ գաղտնիքն այս սրտակեղեք:
Գոնե զո՛ւ ասա, Մասիս, լրջախոհ և համըր ծերուկ,
Եւ զո՛ւք, հավիտյան թափառ, ո՛վ ամպեր, ո՛վ ամպեր անդեկ:
Ասան, անկանգ ժամանակ, գաղտնիքի դու անհուն օվկիան,
Ո՞ւր է շիրիմը նրա, որտեղ նա իր սիրտը թաղեց:
Ա՛խ, մի՞թե մուրթ պիտի մնա, չի գալու մի հրանշը վայրկյան,
Որ բացվի սև, խորհրդավոր գաղտնիքն այս սրտակեղեք...

1935.

ՕՇԱԿԱՆՈՒՄ

Այստեղ հանճարն է հանգչում. հավերժական լուսթյուն
Ընկըզմված խոր լուսթյան ժամանակի մեջ անծայր:
Մեարձիկ, սրտի հուր կանթեղ, մտքի անդուլ արթնություն,
Մեր զարթոթյան հզոր Հայկ, ժողովրդիս պես պայծառ:

Այս պաղ, անդորր մատուռում՝ միայն հավերժն է արթուն—
Հսկում քեզ, Մեծ Ընթացիկ, հսկա պապըդ ոսկեքառ.
Բայց բարախում ես դու հարև՝ ծերունու հին սրտում,
Եվ մանկան նո՛ր սրտի մեջ—արևի պես մշտավառ:

Ահա մի ողջ տքնաջան և քաջասիրտ ժողովուրդ,
Որպես երկինք, տանում է քո արևը դարից դար,—
Քո լույսի հետ, լույսի՛դ մեջ,—մի սերունդից մի սերունդ:

Հանդի՛ստ քե՛զ, օ՛, բանի սիրտ, մտքի սեր և մխիթար,
Ահավասիկ քո սրտով ու քո մտքով մշտաբոց՝
Երկրե-երկիր է թևում հանճարեղ հուրը Հայոց:

1944.

ՔԵՌԻ ՄՐՏՈՆ

Ոսկեկազի բարձրակատար բարդիններէ շվաքում,
Քեռի Մրտոն, երկրից բերած, շիմշատ փողն էր նվազում:—

—«Վնյ լե, Մրտո, վնյ լե, Մրտո, վնյ լե, Մրտո, խեղճ մշաղ,
Մրտոն թողեց իր անուշ հող, իր պապու տունը բրինձակ,
Առավ քոլուկ մի ճիժ ու պիժ ու իր կնիկ Հերիքնազ,
Մշու դաշտից եկանվ, եկանվ, հասավ բանձրիկ Ալագյազ:
Հասավ բանձրիկ Ալագյազ սար, Իրինդ գեղի մեջ կայնամ,
Իրինդն, որ կա՝ բանձր գեղ է, ջուրը՝ անուշ, օդը՝ լավ,
Հողն էլ՝ ինչքան սիրտըդ կուգե, համա Մրտոն դատարկ ձեռ,
Ոչ եզ ունի, ոչ խաբազան, ոչ սամի, ոչ սամեթել:

Օ՛ֆ, տե՛ր աստված, դու օգնութիւն դաս անտեր ու նաչարին,
Խաղաղութիւն ու զուժ թայես մարդու մեջ ու աշխարին.
Մրտոն ձեռն ի թայե քու փեշ, բալքի լուս մի բացես նոր,
Ու էզ հուսով, երկինքն ի վեր, զուր կերիշկեք ամեն օր.
Համա աշխար աշխարն էն չէր, աշխար՝ էն էլ մեր սրտով՝
Մրտոն էլի մերկ-անոթի, Մրտոն—էլի էն Մրտոն:

Վնյ լե, Մրտո, վնյ լե, աշխար. վնյ լե տուն տեղ. ճիժ ու պիժ,
Ո՛վ էր տեսել էնպես զուլում, էնպես կրակ ու պատիժ:—
Չորս զին արուն, թոփ ու թվանք, պուլիմեք ու հուր ու սուր,
Խառնըվել է աշխարն իրար, թողնես գնաս, գնաս ո՛ւր...
Մրտոն մալուլ, ձեռն երեսին, բարկութիւն մեջ աչքերուն՝
Գթափեր իր սրտի լեզին էն ժուկվա չար գելերուն:—
Ա՛խպեր, ինչի՞ դատենք-բանենք, խմբապետը դա տանի,
Հասրաթ մնանք մի չոր հացի, հասրաթ՝ մի կով կթանի:
Թե որ կուգե հալալ ապրել՝ աշխարն ի լեն, հողն ի բոլ,
Մարդ էլ դառնա՛ արարից վատ, արուն լցնե բար ու քոլ:

Էսպես խոսքեր ասած-չասած՝ խոսքի վրա դեռ կիսատ,
Մրտոյի պես մարդու դասն, Մրտոյի պես խեղճ հասրաթ,

Մեկ էլ տեսաւ՝ խմբապետը՝ բեխերը ցից, կատաղած,
Հազին ֆրենշ ինգլիզական, մեծ մաուզերը կախած,
Ձենը դցած աշխարհով մեկ, ձեռքի դամիչին թափ տալով,
Կգար էնդա, ու կկանգներ, քուֆը ու կրակ թափելով:
Մըտոն ո՞ւր է, կանչէր թող դա, սե թոֆան տա՛մ իր գլխուն:
Շուն շան ողդին քուֆը կանա ազգի վերկիշ—մեծերուն:
Մարգալարի ապրել կուզե, թուր ու թվանք թող առնի,
Գնա Շարուր, Զանգիշասար, դուշման թուրքին թախանի:

Ասաց-չասաց՝ աչքըդ բարին... Ներս մտան հինգ դինված մարդ,
Դո՛ւ ես Մըտոն, ես քու մեքը, քու երեխեն, քու քուլֆաթ:
Ծեծ ու ջարդով տվին առաջ, սարի ճամբով ժուռ ու մուռ,
Բերին թալին բերդն ի դնդան—Գնա, ասին, Մշու ծուռ,
Դնա՛ տեսներ էլ կմնաս առաջվա պես շատ հաչան,
Դինաս հեշտ է դառնաս Հնչոց ազգին հակառ—գավաճան:
Պինդ պահեք, հա, պինդ պահեք էդ խելք թոցըրած մշեցուն:
Անօրեն է, ոչ ջոջ գիտե, ոչ կճանչե աստըծուն...

Ասին, գացին, Գնա, ասի, դնա, Մըտո, անշառ խեղճ,
Չուր Գրիստոս դա դատաւտան, գնա փտի բերդի մեջ:
Վա՛յ լե, վա՛յ լե, խղճնւկ Մըտո, գլուխըդ ո՛ր քարին տաս.
Թուրքի ձեռքից պըծար եկար, հասար բանձրիկ Ալադյազ,
Բո՛նին, թալին դնդանի մեջ. էս աշխար է, էս աղմթ.
Հապա, էն էլ՝ հայու ձեռքով... սրանից էլ բան կա՛ վատ:
Ձէ, չէ՛, Մըտո, դու Մըտոն ես, տղամարդ ես, դիմացի՛
է՛, Մըտոյի խոսքը խոսք է, ու հաստակող մշեցի...
Աստված մեծ է, օր մի կգա, լուս կրացվի սե օրին,
Ակռաներդ սղմե, Մըտո, չուր լուս բացվի աշխարհին:
Մըտոն գիտեր, աշխար էր, չէ՞, աշխարն էնպես չէր մնա...
էդ օրն եկավ... լուսը բացվա՛վ, լուսը բացվի՛ ձեզ վրա,
Մեր մեծ Լենին, հոգին դրախտ, մարդիկ ճամբեց մեր աշխարհ,
Մեծ Ստալին, արեն երկար, ասաց.—Գացեք, խեղճ-ռանչպար
Ինչքան մարդ կա՛ հող, հաց, տվեք... համա շատ լավ իմանաք,
Որ կըաժենեք՝ ծուռ մշեցի Մըտոյին չը՛ մոռանաք...

Հա՛յ լե, Մըտո, հա՛յ լե աշխար... Մըտոյին ոնց թևեր տաս,
Երկու երեք քայլ ո՛ր արեց՝ ելավ բանձրիկ Ալադյազ,
Հասավ Իրինդ... վա՛յ քո գլխին, Մըտոն ի՞նչ է արել վատ,
Ո՛չ տուն ու տեղ, ոչ ծուխ ու մուխ, ոչ երկխա, ոչ քուլֆաթ,—
Հաղարների հետ էնոնք էլ մեռել էին անթիլ...
Էստեղ Մըտոն նստավ շեմքին, մե կուշտըմ լաց իր սրտի,
Չուլնւմ մարդիկ, ի՛նչ է արել ձեզ՝ խեղճ Մըտոն, խեղճ մշակ,
Ու էդ օրից էլ չմնաց Իրինդի մեջ բրիշակ:

Սիրտն ի կրակ, աչքն ի արցունք, մեջքն ի կոտոր, վիզն ի ծառ
էլավ, եկավ հասավ Արան... Ժուկ մի ընկավ դռնեդուռ,
Դատեց, բանեց... Դու մի ասի, էդ գեղի ջոջը ջահել՝
Ստալինի պատվիրանքը՝ մտքին խորունկ է պահել...
Ու մի օր թե.—Քեռի Մրտո, հերիք մնաս խեղճ էսպես,
Քասախ գետի ափի այգին որոշել ենք տի տանք քեզ.
Որոշել ենք քեզ տուն էլ տալ, ու կարգով էս աշխարհի,
Տուն ունեցողն իրեն պետք է մի լավ կնիկ էլ ճարի:
Մրտոյի սիրտ իր տեղ եկավ, ասաց.—Աստված պահե ձեզ,
Կնիկ ճարելը ղոլայ է, ինչպես աշխարհ՝ էնպես՝ ես...

Հայ լե, Մրտո, հայ լե աշխար... Անցավ ժուկ մի ժամանակ:
Ճեղք-պոթեր խլվացին Մրտոյի հոր հարկի տակ.
Ինչքան ճեղք խլվացին՝ էնքան հոգսը շատացավ.
Ասաց.—Աստված, էս ի՞նչ բան է, Մրտոն ցավից չպրծամի...
Մենակ մարդու օրը կարի. կուզես Մհերն եղի ջոջ,
Բախտը էլի է՛ն կմնա, ինչպես կասեն՝ ուղտի պոչ.
Սրանից էլ ամոթանք բան, մարդ մի տունըդ դա սափաք՝
Ու չկրնաս իր սիրտ շահես, մի բրդուճ հաց ու սոխ տալ.
Կմտածեր քեռիդ էսպես,—բախտի վրեն էս աված,
Ու էլի իր հույս էլեր կտրի, մարդը՝ մարդ է, հույսն՝ աստված:

Աշխար է, չէ՞... Աշխարի մեջ մարդը պիտի իմանա՝
Չարիս ու ֆալաք է աշխարհը, ոչինչ իր տեղ չի մնա...
Ամեն հոգս ու ամեն մի ցավ—ունեն իրենց դեղ դարման,
Դուրբան եմ քեզ... Ստալինից եկավ գեղին մեծ ֆարման,—
Էսպե՛ս, էնպե՛ս... Էսօրվանից պետք է որ մեր գեղացին
Դառնա մի սիրտ, դառնա մի ձեռք, դատի, բանի միասին—
Երբ որ դառնա՝ էն ժամանակ՝ մեզ ոչ մի թոփ չի քանդի:

Էսպես ավեց մարդը ֆարման. Ասի՝ Մրտո, քու բախտի
Դուրք բացվեց... Մրտոս գնաց, ասաց.—Աչքըդ լուս, պտռեմի՝
Էսպե՛ս, էնպե՛ս... Էս անդուխտ իր չոր կողով դեմ առավ,—
Թե ո՞նց տանի իր մածուճը խառնի ուրիշ բանի հետ:
Մրտո կնիկ, շատ չխառն... Էս ձիժ ու պիժ մանր ու բեղ
Կրնաս պահի, ձեն հանի, է՞... Էլ ի՞նչ քեզ թան ու մածուճ...
Դու կող ունես, Մրտոն չունի, ունի, էս էլ՝ մեղեցու...
Խելքըդ ժողվե, բալբի բարի դուռ կրացվի մեր առաջ,
Օգորդ կասեն, կնիկ որ կա՝ մազն երկար է, խելքը՝ կարճ:

Մրտոն կնկան հեչ կլսե... Համա կեսսիրտ, մտածկոտ,
Ելավ գնաց գեղի մեջտեղ, գեղի ջահել ջ ջի մոտ.
Իր մտքի մեջ՝ մեկ՝ հա, մեկ՝ չէ՛, մեկ՝ չէ՛, մեկ՝ հա—կխոտեք:

Վերջը վճռեց.—է՛ս է որ կա. կերթամ իր մօտ ու կասեմ՝
Գրբի, ախպեր, բայքի բարի ճամբեն էս է մեր բախտի,
Որ մեխանանք՝ էն ժուլը մեզ ոչ մի դուր թողի չի քանդի:

Գնաց, կայնալ, ասաց.—Գրբի Ասաց.—Գրեմ, է՛ս աչքիս.
Տեսնի էդտեղ մի ջաղուքար կնիկ՝ եղավ ձուլթ ու փխ,
Ասաց.—Մրտո, հողըս գլխիդ, տղամարդ ես դու, թե՛ փես,
Գրվեցիր, որ կնիկդ երթա, պառկի ուրիշ մարդու հետ...
Երկար բարակ շնահ թվեց էդ շան դիւր անդգամ,
Դիւր ձենից հոգեորոված՝ քանի մի մարդ մօտ եկան,
Չենեքն իրենց փորն ի գցած, աշնան էծի պես խղճուկ,
Ասին.—Մրտո, Մշու խելառ, ով հն ասի՝ դու հն ճուկ,
Ի տեր Հիսուս-Քրիստոսի, ով է տեսել էսպես բան,
Մի տեղ դատեն, մի տեղ քնեն, մի տեղ զավակ ունենան...

Մրտոն կախեց գլուխն ի ցած, պղտոր մտքի մեջ ընկավ,
Կնիան բանի տեղ չգրեց, էս մարդոցից ըոքկավ...
Արուն զարկեց սրտից գլուխ, ասաց.—Սուտ է, շանորդիք,
Էդպես բաներ կրնան խոսեն թաք միտքը ծուռ կնկրտիք.
Քաշվեք, թե չէ՝ ես-իմ հոգին, ձեր կնկրտոց աչքի դեմ՝
Էս գոպալով ձեր ոսկորներ ճանի տոպրակ կշինեմ:

Հայ լե, Մրտո, Մրտոն գիտեր, էնոնք դանդին, միտքը՝ մեկ,
Էդոր հապով, լեղապատառ եկած ընկած ոտ ու ձեռք.
Էն ժամանակ, էդ գեղի ջոջ, առաջ եկավ ասաց.—Թե—
Ի՞նչ կհաջար կնկրտոց պես, ձեր ասածները սուտ է,
Մո գոտով չենք գրի, ախպեր, ուզողները թող գրվին,
Մենք կերթանք է՛ն ճանապարհով, որ ասել է Ստալին:—

Ու գնացինք... Արի ու տես՝ մարդը քիչ էր, գործը շատ,
Էստեղ պետք է, է՛ս գործի մեջ մարդն երևար տղամարդ:
Մրտոյին ինչ... էնպես զվարթ իջավ ջանի մեջ էնոր.
Դավթի տղա Մհերի պես, գլուխն ի կախ, ամեն օր
Հոգ կփորեր, քար կթայեր, կեռթալով ու արտադր,
Մարդկության շուրջ ոտեր գրչի, մոնջ կաշիատեր գլուխկախ:

Հայ լե, ժուկ մի անցավ-չանցավ, տուն տեղ եղավ, հաց ու թաց:—
Օգործի մեր Ստալինի պապու հոգուն օդորմած,
Ճժեղ-պժեղ գույնի եկան, էնոնց ծակ աչք լիացավ,
Քո Մրտոյի պառավն էլ խո ուրից գլուխ թաղացավ:
Քա որ կասենք, խելոք կնիկ, հիմի հնց ես թողնեմ քեզ
Երթամ ուրիշ կնիկ առնեմ՝ հողվի, գուզվի հարսի պես
Ինձի քեռի Մրտո կասեն, էդ բանը լավ իմացի,

Հիմի քեզի երեսնկ չէն տա—հազար դուր ու դրացի:
Մըտոն արե՞ց, թե չէ՝ էնպէս՝ եկավ վերից՝ աստըծուց,
Մըտոն պառնեկ թող սաղ մնա, Մըտոն դարձել է առյուծ:

Մեր բանն էնտեղ հասավ, անպէր, մեր բանն հասավ էն բախտի,
Մի խորոտ օր, էս քու բեռուն թալին ի մեջ գաղեթի:
Անցավ ժուկ մի, մեր գեղի ջոջ, օր մի իր մոտ կանչեց ինձ,
Հապա հասես, բեռն Մըտոն, մեծ խաբար կա Մոսկովից,—
էսպէ՛ս, էնպէ՛ս... հալաքեր բեզ, ոնց որ օրենն է կարգով,
Ելիր գնա մեր Երևան, Երևանից էլ՝ Մոսկով:

էստեղ Մըտոն կայնավ, ասաց.—Մըտոն է, թէ դու իս ծուռ.
Դու հալվորիս ձեռք կառնես, հա՛. քու Մոսկովն ո՛ւր, Մըտոն ո՛ւր...
Ախպեր, որի՞ ցալն է կարել՝ ինձպես մարդուն միտ բերի,
Վերջը տեսավ, որ համոզեց՝ բեռիդ ասաց՝—Համբերի,
Բան մի ասեմ.—Ախպեր, չեղնի՛ իմ տեղ ուրիշ մի գնա,
Մըտոն շատ է Մոսկով տեսլ, համ էլ՝ ուսովար չըգիտա:

Մըտոն, ասաց — Կալինինը քեզ է կանչել, ո՛չ թե ինձ,
Մենակ դու չես, քեզպէսները ավելի են հազարից:
Չարա չեղավ, Մոսկով, ուր ես, Մըտոն եկավ՝ որ եկավ,
Նստեց պոռոգ, ընկավ ճամբա, գնաց քոջքից ներս մտավ,
Հազարի հետ՝ Կալինինի առաջ կայնավ, ձենն ի փոր,
Մեկ էլ տեսնի՛ ներս մտավ մի հասարակ մարդ բեխավոր,
Որ ներս մտավ, ծափ մի փրթավ, Մըտոն դարձավ ընկերոջ,
Հարցուց.—Ո՞վ է ներս մտնողը, էդ երկուսից ո՞րն է ջոջ.
Կողքի մարդն ի խոյր աչեց, ասաց՝ մուխը մարի, մարդ,
Ստալինն է, պատկերը հեշ չէս տեսել, այ տանքանդ:
էն որ ասաց՝ մաթալ Մըտոն ուշքի եկավ, աչքը բաց,
Մշակ Մըտոն էգպես տեղեր շատ էր կերել սոխ ու հաց:

Ինչքան անցավ, ինչքան չանցավ, սահաթ չկար Մըտոն մոտ,
Մեկ էլ անուշն իր կարգացին... Մըտոն գնաց ոտն ի ոտ,
էն տեսավ որ դռին դրին շքանշան մեծ լեւին,
էն որ դրին՝ էն գա իրեն տեղից ելավ Ստալին,
Ասաց.—Ապրես, բեռն Մըտոն, անբաժան քո լեւնիցից,
Գերազանց ես աշխատել շատ, շնորհակալ ենք քեզնից—
Ես կխնդրեմ Կալինինից, որ էս օրին ուրախ տոն՝
Մեր բեռուն տա մի ձընկ սահաթ ու մի զրընդ պատեֆոն:

էն որ ասաց՝ բեռիդ էստեղ չկողքնի՞ ինքն իրեն,
էլ չկարաց ձեն մի հանել, քրաինք տվեց իր վրեն.
Զորս դեհից քեզ մարդիկ կաշեն, էլ լեզու կը բլբլա,
Եկավ իր տեղ, նոր ձեն հանեց.—Ստալին ջան, է՛վալլահ,

Ինչպես որ դու ասիր՝ էնպես կշարժվենք քու խոսքով,
Աստված քու ումբ երկար պահե աշխարի մեջ ի Մոսկովի:
Ներողութիւն կենդրեմ շատ, լեզուս սուսկար չդառնա,
Աշխար մոռնա, իմ մեծ ախպեր, դու Մրտոյին էն մոռնա:
Վեք էս խոսքին՝ ծափ մի փրթալ, ոք ժաժայ քոջը ու սարան:
Մրտոն էդ օր հեշ չը մոռնա, չուրի մտնի գերեզման...:

Ա՛խ, էրնեկ թե Մրտոյի հեր, Մրտոյի պես խեղճ մշակ,
Ելներ իրեն գերեզմանից, դար էն երկրից բրիշակ,
Տեսներ մի ժում, աչքն ի լցվեր, աշխարի բանն իմանար,
Իր առ թեթե, սիրտն ի մուրաղ, էլի հողի մեջ գնար...:

Էսպես եղալ.. Մրտոյի բախտն էսպես բացվեց էն օրին,
Կուգե որ էդ բախտի պես բախտ—բացվի ի վեր բոլորին,—
Ռանչսպար խեղճ մարդն իր գլխի տեր, հաց ու գինով լիանա,
Մրտոյի պես օրնանք ասե, աշխարն իձեն իմանա:

Դառնանք մեր մեծ Ստալինին օրնութիւն տանք, իմ ախպեր,
Ստալինին, որ բոլորին դարձրեց իր հողի տեր:
Դառնանք մեր մեծ Կալինինին օրնութիւն տանք, իմ ախպեր,
Կալինինին, որ բոլորին դարձրեց իր բախտի տեր:
Դառնանք մեր մեծ Մոլոտովին օրնութիւն տանք, իմ ախպեր,
Մոլոտովին, որ բոլորին դարձրեց իր հացի տեր:
Դառնանք մեր մեծ Միկոյանին օրնութիւն տանք, իմ ախպեր,
Միկոյանին, որ բոլորին դարձրեց իր արտի տեր:
Դառնանք հազար օդորմի տանք մեծ Լենինին—քան գմեն,
Թող լուս իջնի էնոր արդար, անմահ հոգու մեջ: Ա՛մեն»:


1940.

ԾՈՎ ԱԶՔԵՐ

Ժողովրդական տաղեր

Զի դադրիր աչքես ի լալու...

ՀԱՅՐԵՆՆԵՐԻՑ



* * *

Երանի բեզ, բաղի բլրու,
Որ չես տեսել սրտի մրմուռ.
Թե որ տեսնես սրտի մրմուռ՝
Կթափի քո սըրմա փետուր,
Թե որ տեսնես սուգ ու կսկիծ՝
Կթափի քո թեք ոսկի.
Թե որ տեսնես ցավեր էսքան՝
Կթափի քո լեզուն խոսկան.
Թե որ տեսնես արյուն լերդ-լերդ՝
Կթափի քո սիրտը փերթ-փերթ
Երանի բեզ, բաղի բլրու,
Որ չես տեսել սրտի մրմուռ:

* * *

✓
 Երթամ թուխ ամպիկ լինեմ,
 Յող ցայեմ երդիկիդ վրա.
 Յաժանամ, ցողի պես իջնեմ
 Սպիտակ քո կրծքի վրա.
 Զարթնես ու հարցում անես,—
 Յողիկ, դու ինչո՞ւ կցողաս.
 Ես հեռու դարիք մի ունեմ,
 Նա կուլա, ու ես կցողամ:—
 Յողան, թուխ ամպիկ, ցողան,
 Յողալու ատենն է հիմա:

Ստ. 387

Բարսեղ

Վր. 307



Ջրիկ, դու ռը ակեն կուգաս,
Պազուկ ջրիկ ու անուշիկ,
Գիշեր ցերեկ՝ կերթամ, կերթամ,
Չունիս դադար, չունիս քնիկ,
Էնոր համար չունիս քնիկ,
Որ բու յարի այգին՝ կերթամ:

Ա՛խ, դարձի՛ր, մեր այգին երթանք,
Ես վարդ ու նուշ ջրեմ պիտի,
Ես վարդ ու նուշ ջրեմ պիտի,
Ռեհունի փունջ կապեմ պիտի,
Հեռո՛ւ յարիս ճամբեմ պիտի,
Ա՛խ, դարձի՛ր, մեր այգին երթանք:

* * *

✓ Թե որ ան անեմ՝
Բերնես կեյնի բոց.
Թե որ ան չանեմ՝
Սիրտըս կեղնի խոց:

Թե որ պատմեմ իմ
Դարգեցը—սարեր,
Մեջից կը կիսվեն
Ապառաժ—քարեր:

Սիրտըս մի կտրած
Կռւժ կը նմանի.
Ինչքան ջուր լցնես՝
Էնքան կը տանի:

9 Յալի մեջ կեցած՝
Ան կը քաշեմ խոր.
Ես դարդոտ եմ քանց,
Աշխարհը բոլոր:

245 Կիւրապետ Ժողովարան

* * *

Ե. Պարս. Կիւր.

Ջուր ու գինի լինելի,
Քո փակ սիրտը մտնելի,
Լեզվիդ ներքե անցնելի,
Մտքերդ իմանայի,
Ա՛խ, լինելի, լինելի,—
Ջուր ու գինի լինելի:

* * *

Յոր, եկ, մարդարիտ շարեմ,
Սակեթե՛կ ծածկոցը վրան:

Ե՛կ, դնեմ քեզ փեսա-աթու,
Քմբուլե խոս բարձը վրան:

Ե՛կ, փռեմ խորասան խալի,
Սակեկար դռշակը վրան:

Ե՛կ, բանամ սեղան ու սինի,
Պորտլաճ կաքավը վրան:

Ե՛կ, խմենք մեղրահամ գինի,
Մեր սերն ու մեր պաչը վրան:

✱ ✱ ✱

Ծով աչք, ձեր փակ դռան դեմ՝
Գայլի ու կանգ առնելի,
Ասելը՝ քեզ սիրում եմ,
Ու հետո նոր մեռնելի,
Էնժամ սրտիս տնավեր՝
Հողը թեթև էր թվեր...

~ 213 Արիւնքս Լայ
* * *

Տարին տասերկու ամիս
Մեջն եմ սառը զնդանիս.
Մի օր չելաք, չեկաք տես,
Հաւցնելը — հնց եմ ես,
Ո՞նց եմ ապրում լուսնի տակ.
Ու, իմ սրտին հակառակ,
Է՛ն ժամանակ եր գալիս,
Երբ որ հոգիս եմ տալիս:

* * *

Ի՞նչ է, ժեռ-քանի եմ ես,
Սա՞րն է ինձ բերել,
Ի՞նչ է, փրփո՞ւր եմ ես,
Ջո՞ւրն է ինձ բերել:
Արի, ա՛յ ազիզ ջան,
Իմ աղբյուրի ջուր.
Քանի՞ կաբոտ միամ,
Արի, հւր ես, հւր,
Սիրուա—մութն է նստել,
Ե՛կ, լո՛ւյս վառիր դուն,
Սիրուա-պատն է փել,
Ե՛կ, շո՛ւտ շարիր դուն:

* * *

Էսօր օր էր ո՛չ բարի,
Հարսանիքն էր իմ յարի.
Յարիս՝ զոռով հարս արին, —
Սրով-թրով՝ հարս արին,
Ա՛խ, տանողը չեմացավ՝
Էսօր — լավ է, վաղը — ցավ, —
Աբաբ աշխարհը գիտե,
Էն անշունչ քարը գիտե,
Սերը — սրով չի՛ լինի,
Սերը — սիրով կը լինի:

Երգ
Հարսանիք
Սրով-թրով



Այ իմ յուսնակ, արծաթե թաշ,
Թասը գլխիդ՝ էդ սէր կերթատ,
Թե որ կերթաս յարև տեսնես,
Ասա դժար հիվանդ եմ ես,
Թող վեր կենա, զա իմ բարձիւ,
Դա, ձեռնիկը զնե սրտիս,
Հերիք չեղան՝ նայեմ էսքան,—
Ցերեկ՝ հետ լույս արեգական,
Գիշեր՝ նայեմ հետ աստղերուն,
Գիւղ-գիւղ էրթա աչքիս առուն,
Դունդ-գունդ արուն կաթե սրտեք,
Տա որ մեռնեմ՝ ամսոս չեմ հաւատ:

* * *

|| Զքվեր էսպես անրախտ տարին, —
|| Ոտքըս առաւ քաւ-քարին.
Ինձի թողել հետ իմ ճարին՝
Բլբուլ յարըս, սմբուլ յարըս —
Կանաչ սարին սեյրան կերթա:

Էն օր կանգնել աղբերակին՝
Շողքը կուտար արեգակին.
Լերդըս գցել մեջ կրակին՝
Բլբուլ յարըս, սմբուլ յարըս —
Մարմար քարին ջեյրան կերթա:

Ախ, իմ սերտը՝ կտտրած ուս է,
Ծանրը ցավից ճաքած նուռ է,
Իմ վատ յարի միտքը ծուռ է,
Բլբուլ յարըս, սմբուլ յարըս —
Ուրիշ յարին հեյրան կերթա:



Առաւոտյան կարաւի սկս
Ձենըդ կուղա հանդ ու արտից·
Քո կարոտով մնում եմ ես,
Ե՛կ, աղատիր ինձ էս դարդից·
Ցերեկ ասին՝ յարըդ եկավ,
Գիշեր ասին՝ յարըդ եկավ,
Եկավ, եկավ, մեր տուն չեկավ:

Սիրաբոս գիժ է, էս սավղեն էլ
Ավելի է գգվացնում ինձ,
Թե ուղենամ կորչել, մեռնել՝
Չեմ աղատվի դարդի ձեռից:—
Ցերեկ ասին՝ յարըդ եկավ,
Գիշեր ասին՝ յարըդ եկավ,
Եկավ, եկավ, մեր տուն չեկավ:

Աչքըս ճամբրիդ ծով է կտրել,
Թե դալու ես՝ շուտ եկ, անգին·
Քանի հոգիս դեռ չեմ տվել,
Ուշ կըհասնես հոգևարբին:—
Ցերեկ ասին՝ յարըդ եկավ,
Գիշեր ասին՝ յարըդ եկավ,
Եկավ, եկավ, մեր տուն չեկավ:

Խաս խատուտիկ կաքավի պես
 Ձենըդ կուգա սարեն անուշ.
 Բլբուլ հավի, էն լավի պես
 Ձենըդ կուգա քարեն անուշ.—
 Քարեն անուշ,
 Սարեն անուշ:

Անուշ-անուշ հոտ կա քո ծոց,
 Ձենըդ կուգա հանդեն անուշ.
 Ծոցըդ՝ ծոց չէ՛, կրակ ու բոց,
 Ձենըդ կուգա արտեն անուշ.—
 Արտեն անուշ,
 Հանդեն անուշ:

Անուշ-անուշ հոտ կա քո բուռ,
 Ձենըդ կուգա հովեն անուշ.
 Բուռըդ՝ բուռ չէ՛, կրակ ու հուր,
 Ձենըդ կուգա ծովեն անուշ.—
 Ծովեն անուշ,
 Հովեն անուշ:

Անուշ-անուշ հոտ կա քո մաղ,
 Ձենըդ կուգա քամուց անուշ.
 Մաղըդ՝ մաղ չէ՛, ոսկի ու խաս,
 Ձենըդ կուգա ժամուց անուշ.—
 Ժամուց անուշ,
 Քամուց անուշ:

Կանչե՛, կանչե՛, բերնիդ մեռնեմ,
 Ձենըդ կուգա սարեն անուշ,
 Կանչե՛, կանչե՛, բոլիդ մեռնեմ.
 Ձենըդ կուգա քարեն անուշ.—
 Քարեն անուշ,
 Սարեն անուշ:



էն ո՞վ էր դարկեց իմ սրտի շուշին,
էն ո՞վ էր ցանեց իմ գլխուն փոշին,
էն ո՞վ էր անցաւ, ան, սե ձիավոր,
Մերըս չը բերեր՝ չըլնեի աստվոր:

Դու ռուսի եկար, ռուր կերթաս, տղա,
Մեկ աչքըս կուլա, մեկել՝ կը ծիծղա.
Էս ի՞նչ աշխար է, մարդը անցնող գետ,
Ջրի պես կերթա, էլ չը դառնա ետ:

Ձիդ շուտ մի՛ քշի, այ տղա, կանգնի,
Ով որ վազնա՝ շատ կը փոշմանի.
Իմ սիրտն էրեցիւր, ան, սե ձիավոր,
Մերըս չը բերեր՝ չըլնեի աստվոր:


Յան, արի զնանք այգին,
Այգին, մեր ծաղկած այգին.
Բլբուլը խաղ է ասում,
Տատրակը տաղ է ասում.
Պաղով մտնենք իրար հետ,
Տաղով մտնենք իրար հետ,
Կարմիր վարդի՛ հետ,
Ճերմակ վարդի՛ հետ:

Տես, մեր այգու բոլորտիք՝
Ծիծեռնակը խորոտիկ,
Արտուտիկը խառուտիկ,
Կաքավը կարմիր տոտիկ.
Երգով մտնենք իրար հետ,
Վերքով մտնենք իրար հետ,
Կարմիր վարդի՛ հետ,
Ճերմակ վարդի՛ հետ:

Ե՛կ, կապասեմ քեզ դռան.
Ծաղկել է ծառը նոտն,
Համն անուշ է, հոտն անուշ.
Հեռուն՝ դառն է, մոտն՝ անուշ.
Սաղով մտնենք իրար հետ,
Նազով մտնենք իրար հետ,
Կարմիր վարդի՛ հետ,
Ճերմակ վարդի՛ հետ:

Գարունն՝ երկար չի մնա,
Արի, էլ չեմ դիմանա,
Արի՝ կանաչ մեր այգին,
Ման գանք մեջ ծիլ ու ծաղկին.
Բարով մտնենք իրար հետ,
Տարով մտնենք իրար հետ,
Կարմիր վարդի՛ հետ,
Ճերմակ վարդի՛ հետ:

ԼԵԳԵՆԴ ԵՎ ԲԱԼԼԱԴ



ՎԱՐԴ ՈՒ ԲԼԵՌԻՆ

Եղեկ է մի ջահել տղա,
Եղեկ է մի կույս:
Տղան—սիրուն, շող-շափուկա,
Կույսը—լուսնի լույս:

Նայել են միշտ իրար անթարթ
Կարոտով մի հուր.
Կույսը—սիրուց դարձել է վարդ,
Իսկ տղան՝ բլրուր:

Դարձել բլրուր, թռել նստել
Կոկոնի վրան.
— Ա՛խ, շուտ բացվիր, իմ սրտի սեր,
Ասել է նրան:—

Բացվիր տեսնեմ բո՛ղեմբը ես
Կոկոնի միջի.
Տեսնեմ, մոտ գամ, համբուրեմ քեզ,
Քոզ կյանքըս հանդչի:

Այսպես ասել, սպասել է
Մի ամբողջ գիշեր.
Լացել, լացել ու քնել է,
Սրտում՝ սուր փշեր:

Լուսադեմին դարթնել է երբ,
Նայել մի վայրկյան՝
Էյ չի տեսել բլրուր հեռ
Երազ աղջկան:

Այդ օրվանից էլ աշխարհում,
Սրտում խորը վիշտ,
Պեղճ բլրուր լաց է լինում,
Լաց է լինում միշտ:

ԶԱՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Կանչեց Աստվածն հրեշտակին,
Կանչեց, ասաց զորովալից,—
— Գնա, հող բեր, Մարդ ստեղծեմ,
Որ բարությամբ նմանվի ինձ:

Հրեշտակը թեթե թռավ,
Անցավ, ինչպես զեփյուսի հեք,
Ե՛վ ցուրտ հյուսիս, և՛ տաք հարավ,
Ե՛վ արևմուտք, և արևելք:

Առած հողի կտորը մեծ,
Դեմքին ժպիտն ուրախության,
Դառնում էր նա... հանկարծ կտրեց
ձանապարհը չար սատանան:

— Ի՞նչ է ձեռքիդ — չո՞ղ է՝ — ասաց, —
Տերը պիտի Մարդ ստեղծի
Եվ նրա մեջ դնի Աստված՝
Բարությունը, չարից բացի...

Արեկոծվեց չարի ոգին,
— Դեմ եմ, — ասավ, — կամքին նրա...
Ու, բռնելով հրեշտակին,
Թքեց կտոր հողի վրա:

Թքեց... Ու շունչը չարադեմ
Անցավ հողին, հողից՝ Մարդուն:
Այդ պահից էլ, բարության հետ —
Ունեցավ մարդը չարություն:

1930

Երբ Մեղտի գետի վրա լուսահորդ
Բացվեց ամառվա մի շեկ առավոտ,
Դավիթ դյուցադնը, Նժույզը հեծած,
Կտրեց Տարսնի դաշտը լայն ու բաց:

Հեռվում ձգվում էր երթը Տավրոսի,
Երթը աղամանդ ձյունեղեն լույսի.
Սարեր՝ կանգունված դաշտի ձեռներում,
Նիզակներն՝ պես ձգված եթերում:

Խաղաց դուցազնի սիրտը վեր ու վեր,
Խթեց Նժույզը, աչքը՝ հեռուներ.
Ու խոր մրմնջաց. — Է՛յ, անտառ ու արա,
Գեղեցիկ եր դուք, վսեմ ու հպարտ:

Երանի՛ հազար կյանք ունենայի,
Հազար հազարով ձեզ ընծայելի,
Որ իմ Սասունը մնար քաջազեն,
Ինչպես լեռնային սրաթե բազեն:

Ու նայեց անհագ, բշեց Նժույզ ձին,
Հասավ ափերը գեղանխտ Խարցին,
Ուր, շամբուներում, վարագները ծուռ
Սրում են իրենց ժանիքները կուռ:

II

Հնու՞թ ասե՛լ են, — առավել չարկամ
Մարդն է՝ վազըրից ու վարազից անդամ.
Կատաղի է նա — քան վարազն անեղ,
Քան ձագը կորցրած վազըր խելահեղ:

Ահա անտառված շամբուտում մթին
Սպասում է մի կտրուտաչյա կին.
Սպասում է նա գեղեր ու ցերեկ,
Ինչպես պատյանից բաշած սուրը մերկ:

Եվ հանկարծ ահա խրխինջ ու դոփյուն,
Նեղ-աղեղն առած, սիրտը տրոփուն,
Զննում է Դավիթին ռաից մինչ գլուխ —
Մու՞թ եղեգնուտի միջից խորամուխ:

Նա է, Դավիթը. — հայրն ու թշնամին. —
Որ լքեց մորը՝ Չմուշկ Սուլթանին,
Որ տարված ուրիշ աչքերի հրով՝
Գերվեց Խանդուկի սիրո խնձորով:

III

Խոր լուսթյունն է նստել քարային.
Եվ յտում է նա հորը՝ գյուլցաղներ: —
— Գնա, իմ անգին Գուռիկ-Ջալալի,
Չկա սրանից լավ օր ավելի: —

Գնա, թավարծի խոտը կեր հատակ,
Ունենք դեռ քանի մարտ ու հաղթանակ:
Գնա, իմ ընկեր, առվայտ կեր բեհեզ,
Իսկ տանը՝ սրսուռ զարի կտամ քեզ:

Գնա, և թող ինձ մի կուշտ յողանալ,
Վաղմւց չեմ եղել այս գետում զուլալ:
Ասաց ու նետվեց նա ջուրը մեկից,
Զիտ տխրալի խրխինջն ետևից...

IV

Ձողանում էր և հին օրերն հիշում, —
Ասես հեքիաթ էր, երազ-մշուշում,
Երբ սրա նման — ամառվա մի օր —
Պատահեց հրաշք մի դեպք ահավոր: —

Լողընկերները սարսափած՝ ասին. —
— Ծուռ Դավիթ, է՞րես պառկել ավաղին.
Վեր կաց, տնաքանդ, ի՞նչ մեծ ձուկ է, տես,
Պոչով զարկում էր, կուլ պլտի տար մեզ...

Եվ ինքը այնժամ արագ նետվեց ջուր,
Կալանեց վիշապ ձկանը զարհուր,
Ու քիմուխներին բռնած՝ քաշ տվեց
Դեպի դետափը ձուկ-հրեշին մեծ:

Երջանիկ օրեր, զվարթ մանկություն,
Եվ խորն հառաչեց... Մինչ եղեղնետում՝
Կինը աղեղը լարեց սոստաղին
Եվ մեխեց նետը Դավթի կռնակին...

Մտրը երեւաց երկրաշարժից մեծ,
 Ո՛չ, այդ Դավիթն էր մոռնչ արձակեց.
 Օ՞ղը շառաչեց մըըրկից արդյոք,
 Ո՛չ, այդ Դավիթն էր հառաչեց խորունկ:

Ու հոսեց արշունհ, արշունհ հըշեկ—
 Գետի լաշնությամբ, երկաբությամբ մեկ.
 Ու վառվեց ջրի պայծառ կապույտում,—
 Ինչպես հըղեհի վազքը բոցկըլտուն:

Ու մեռաւ Սասնա քաջը վեհապանծ,
 Սակայն զրույցը՝ հավիտյան մնաց.
 Եվ ի նշան իր արյան քաղցրաւետ՝
 Մեղաին այդ օրից կոչվեց— Մեղրագետ:—

Զրույցն ասում է՝ թե հնում
Մի բռնակալ թագավոր՝
Շքեղ պալատ էր կառուցում,
Մի նոր պալատ փառավոր:

Բայց ինչքան որ շարում էին
Լուսաճապից մինչ գիշեր,
Առավոտյան տեսնում էին
Պատերը փուլ են եկել:

Զարմանում է և զայրանում
Բռնակալը չարակամ,
Ու զիվան են դալիս նստում
Գուշակոց ու զիտնական.—

Ու մտածում են անընդհատ;
Որ այդ գաղտնիքը դանեն,
Վերջը դալիս է մի կախարդ
Թագավորի դեմ ու դեմ:—

— Ապրած մնաս, դու մեծ արքա,
Ոչ միտք է պետք ու ոչ վեճ.
Թե ուղում ես որ փուլ չդա՝
Մի մարդ թաղիր սլառի մեջ:—

Մի նորատի, ջահել աղջիկ,
Ու թող շարեն, քարձրանան,
Սյնժամ սլառերն էլ չեն փչի
Հավիտենից հավիտյան:

Ու ելնում է մունեակիլը,
Կանչում ամբողջ երկրով նա.
— Ով որ ծախի իր աղջիկը՝
Մի քաշ ոսկի կստանա:

Սարսափում են մարդիկ այնժամ
Ոսկազար այս չար մտքից.
Ու հեռու են փախչում դաժան
Թագավորից ու թաղից:

Այդ ժամանակ մի պառավ կար,
Մի պառավ կին անկշտում,
Ելնում՝ քրոջ որը աղջրկան
Թագավորին է տանում:

Տանում է նա խղճուկ որրին
Թագավորին է տալիս.
Առնում մի քաշ դեղին ոսկին
Ու հանգիստ՝ տուն է գալիս:

Իսկ աղջրկան կանգնեցնում են,
Կանգնեցնում են պատի մեջ.
Ու չորս բոլորը շարում են,
Շարում անվերջ ու անվերջ:

Աղաչում է, բայց չեն խղճում
Ոչ թագավորը կոպիտ,
Ոչ էլ իրա մորաքույրը,
Մորաքույրը չարասիրտ:

Ու երբ շարվածքը հասնում է
Շրթունքներին նրա կես,
Նախքան մեռնելն՝ անիծում է
Մորաքրոջը այսպես:—

— Ազոնիլ դառնաս, չար մորաքույր,
Ու կռիտաս երկնի տակ.
Թռչես, շրջես գիշեր ու գօր
Ավերակից ավերակ:

Երբ ասում է այս խոսքերը՝
Չար մորաքույրը պառավ
Փոխում է իր կերպարանքը —
Դառնում է մի սև ագռավ:—

Դառնում ագռավ սև, սևավոր,
Ու կռիտում երկնի տակ,
Թռչում, շրջում գիշեր ու գօր
Ավերակից ավերակ...

Հաղթարազուկ Տիգրան Մեծը,
 Նախախելով հարազույն
 Թշնամական լեզեոններ
 ու փաղանգներ վիթխարի.
 Փայլ ու փառքով պսակազարդ,
 Տիգրանակերտ քաղաքում—
 Ձեռք էր զարկում խաղաղության,
 աշխարհաշեն գործերի:

Բայց ահա նոր սուրհանդակ է
 շանթում երկաթ դարպասից,
 Ծունըր դնում արեալանց
 արքաների արքային:—
 — Տերըդ ազգին Ասքանազյան,
 որդիդ մեծն Արտաշեսի,
 Բո դեմ այժմ ընդվզել է
 Սելեվկիայի թագունին:

Ոչ Սելեվկիոս նիկանորը,
 ոչ Սելեվկիոսն Նալիփան՝
 Չէին այնքան գոռոզամիտ,
 որքան կլինն այս արնատենչ.
 Ունի բանակ և այրուձի,
 եվ նենգությամբ մոլեկան՝
 Արդեն ճոճում է նիզակը,
 մեր հայրենի հողի մեջ:

Մի մութ ամպ է սահում այնժամ
 Տիգրան Մեծի ճակատին,
 Տեսնում է նա հրաշագեղ
 սրտազրավ թաղուհուն.—
 Հասակը՝ սեզ, և աչքերը՝
 յոթ դիշերից էլ մթին,
 Դեմքը՝ ճերմակ, ինչպես պայծառ
 Լիալուսինն անհունում:

Ասիո քանի՜ երիտասարդ,
Ասիո քանի՜ ծեր արքա
ներագել են տիրել նքան,—
ու ցնորել, ու սիրել.
Բայց երկինք է եղել նա միշտ,
անհաս կամար աստղագահ,
եվ հեռվից է միայն նրանց
տենչանքները հրահրել...

Սակայն օձը՝ օձ է միշտ էլ,
լինի չքնադ, կամ տգեղ:
Թշնամին միշտ թշնամի է—
ամեն մի տեղ ու ժամին:
Հրաման է հանում Մեծը՝
և հրամանը՝ անեղ
Բանակներ է շարժում դեպի
Սելեվկիական թշնամին:

Շարժում, ծածկում է հեռավոր—
դաշտավայրը արևառ,
եվ ճակատում թշնամական
բանակի հետ զինաշաչ,
եվ ճակատում գիշեր ու գօր,
և ջախջախում է իսպառ.
եվ բերում են Սելինելին
Տիգրան Մեծին ընդառաջ:

— Է՛յ, սիրուն օձ, պատասխանիր,—
քեզ Նիկանոր, Եպիփան,
Թե՛ Սելեվկիոս Կայծակ էիք
սեպում, այո՞, գուցե մեծ:
եվ խտաշունչ արքայի դեմ
լուռ է գոռ կինը սակայն,
եվ կանգնել է, որպես գերլայ,
ականակոռ գահին մերձ:

եվ նայում են բազմականներ
փայլ ու զեղոյն հիացած:
Պալատական ու դրանիկ
խեղդում հառաչքը լուին,
լուռ է կինը, գլուխը՝ կախ,
սիրտը դողի տակ կըքած,
Ոչ նայում է բաղմունքյանը,
ոչ նայում է արքային:

Այնժամ Ասուդ ավագանին
շշնջում է,— Ո՛ր վսեմ...
Բայց չի լսում նրան արքան՝
մտքերի մեջ ալեհույզ.
— Ներքը, խնդրում է մի ասպետ,
ազաչելով ակրադեմ:
Չի երևում սահայն Մեծի
զեմքին ներման ոչ մի հույս:

Ասլա ընդհուպ մոռենում է
Արտավազը բանաստեղծ,
Չեոքին բռնած մադադաթյա
մատյանը մեծ Սոփոկլի.
— Հայր իմ, ի սեր Մուսաների,
գերյալին այս, ոտքիդ մերձ,
Ներքը, քանդի չքնաղ է նա
չքնաղներից ավելի:

Հանկարծ մինչ այդ լուծ արքան
իր մտքերից արթնանում
եվ ասում է Արտավազին,—
— Եթե չքնաղ է, ներեմ:
Այո, չքնաղ, բայց թշնամի.
մի հավատա թշնամուն՝
Ով հավատում է թշնամուն՝
կործանում է ինքն իրեն:

Եվ որպեսզի վաղվա օրը
մնա ազատ ու խաղաղ,
Եվ գործերը աշխարհաչեն
նորից նոր թափ ստանան,
Մահապատժի պիտի տանել
Սելեվկունուն այս չքնաղ,
Հանուն իմ Հայ ժողովրդի—
Եվ աշխարհի Հայաստան:

Նախերգ

Դարեր առաջ, մի տաղերգու,
Աշխարհ տեսած իմաստուն ծեր,
Մագաղաթյա մի հին գրքում
Այսպիսի երգ է հորինել:

— Ո՛վ սերունդներ, որ պիտի գաք,
Լսեք զուր իմ խոսքը բարի,
Քանի կապերեք արևի տակ՝
Հիշեք ձեր մեծ նախնիքն արի:

Հիշեք նրանց, որ դարեդար
Պաշտպանել են հացն ու գինին.
Պաշտպանել են հողը արդար,
Պաշտպանել են սուրբ Հայրենին:

Հայրենին է թանգն ամենքից.
Հիշեք նրան՝ զուր ձեր օրում,
Ով առավել իրեն կյանքից
Հայրենին է սրտանց սիրում:

Արդ, լսեք ինձ, իմ հետնորդներ,
Երգըս գրած մագաղաթին.
Փնոք տանք, հիշենք նախնիքը մեր,
Հիշենք Ասպետ Լիպարիտին:

Ելավ Մանչակը խելահեղ,
Զորքին կապեց գեներ ու զրահ,
Ու հանց դարնաւն պղտոր հեղեղ՝
Գրոհ ավեց Սսի վրա:

Եկավ կանգնեց Սսի դիմաց—
Վաթսուն հազար զինված մարդով,
Վաթսուն հազար նիզակ առած,
Վաթսուն հազար անհղ նետով:

— Դուրս եկ, կովենք, արքադ Հայոց,
Գոռաց Մանչակ թուրք ամիրան,
Ու քեց ձին—կրակ ու բոց,
Հասավ մինչև բերդի բերան:

Կոստանդինը դողաց, սարսեց,
Մթնեց աչքում երկինք-դետին
Եվ ընկրճված հայցով նայեց
Քաջ զորավար Լիպարիտին:

— Վերև՝ աստված, ներքեր՝ դու,
Զորավիրդ ես եղել միշտ ինձ.
Ազատի՛ր մեզ՝ արյունաբոու
Տարսոնի թուրք ամիրայից:

Քեզ եմ գիմում, իմ զորավոր,
Քաջ թորոսի հզոր որդի.
Քաջ Վասիլի աղնիվ եղբայր,
Յույց տուր ուժը քո մեծ սրտի—

Պճնել է փառքըդ—Կիլիկիան,
Ամեն պալատ ու ամեն բերդ.
Ամեն ավան ու շահաստան,
Ամեն անտառ ու ամեն դետ:

Լիպարիտը ծնկից խոնարհ,
Արքայի դեմ, ապա կանգնեց
Հպարտ, ինչպես Սասունասար,
Խրոխտ, ինչ լի՛ս Տավրոսը մեծ:

Հազալ իսկույն շող ու շառա
Հանդերձանքը. զլխին դրավ
Սաղավարտը ոսկեճաճանչ,
Կրժրին կապեց ճոշան-զրահ:

Կապեց յախշեղբ սուրը ոսղմի,
Առավ վահանն ու թիկնոցն իր,
Ու դաշտ իջավ պատերազմի՝
Հուր նժույգով բոցակարմիր:

Ու յոթը օր ծանրը թնդաց
Կիլիկիայի հողն հեալով.
Ու յոթը օր զիւ գրնցաց
Կուռ վահանը կոփկոփելով:

Ու յոթը օր, յոթը գիշեր
Իրար զլխին թափեցին բարկ
Իրար մարմնին խրեցին խոր
Արյունաթոր նետ ու նիզակ:

1. րմ. ասյ

Սարի նման վեր բարձրացան
Մարդկանց դիերը զաշտերում—
Մինչև Սսի բերդը հասան,
Որ մխրճված է ամպերում:

Նայեց Մանչակը սևաինած
Պառնիխուժան զորքին իրա.
Ու նստեց մի ծանրը կասկած
Չարությամբ լի սրտի վրա:

— Զուր է, փնչաց գոռ ամիրան,—
Թե զա նույնիսկ ուժըս ետին,
Անհնար է հաղթել նրան,
Այդ քաջ գյավուր Լիպարիտին:

Ասաց. ապա գլխակորույս
Դարձավ հողն իր պարտված, վրհապո-
կանչեց հաղար ճերմակմորուս,
Կանչեց հաղար անմորուս մարդ:

Կանչեց հաղար գեռ անպրսակ,
Կանչեց հաղար նոր պսակված.
Կանչեց հաղար մանկահասակ,
Ու գրոհեց ափից ելած:

Ու նորից նոր, խառնիճադանճ,
Մեծ րանակով, սարսափելի,
Եկավ չոքեց Սսի առաջ,
Ինչպես շունչը անեղ մահի:

Նորից սարսեց Կիլիկիայի
Ծեր թագավորը Կոստանդին—
Սիրտը՝ ախուր, աչքը՝ անի,
Նորից կանչեց Լիպարիտին:

Եվ եկավ նա, զարմը քաջանց,
Վստահամիտ և անալալ.
Ինչպես արեւ ճառագած,
Որ մուլթ սարին տալիս է փայլ:

Եվ ողջունեց պալատը ողջ
Հիացմունքով մեծ քաջին յուր.
Նրան, որի ձեռքն անգողողջ՝
Հաղթանակներ է քաղել բյուր—

Նրան, որի գլուխը քաջ
Ձի կորացել ոչ մի անգամ,
Ոչ մի մարդու սրի առաջ,
Ոչ մի տեղի երկաթադամ:

Ֆիլ թագավորը դողող շուն՝
Ջերմ համբուրեց ուրախառիթ
Թուխ ճակատն ու ստաց. — Ողջմէյ
Մըի ասպետ, քաջ կիպարիտ:

Փանք, հաղան փառք պասկերիդ մեծ,
Որ Մասունի օրբանում հին,
Բեզ նման մի հերոս ծնեց
Ֆիլ նվերեց կրիկեային:

Որդի՛ս, ահա կրկին անգամ
Բարձրացել է Մանչակը չար.
Եկել է՝ մեր շէնը ծաղկած,
Մեր երկիրը տալու ավար:

Եկել է նա ահա կրկին.
Սվաղին ու աստղին թիվ կա,
Բայց թիվ չկա նրա զորքին,
Նրա խուժողով զորքին ազահ:

Ախարիտը ծնկեց խոնարհ,
Արքայի դեմ, ապա կանգնեց
Հպարտ, ինչպես Մասունասար,
Պրոխտ, ինչպես Տավրոսը մեծ:

— Մի տաղնապիր հայր իմ, այդպես.
Ծանր է վայրկյանը չարադետ,
Գիտես և դու, գիտեմ և ես՝
Հեշտ չէ՛ կռվել Մանչակի հետ:

Մեծ է կամքը, հույսը՝ կարող,
Ե՛ր, ողի առ, գոտեպնդվիք,
Դու—գեթ մի օր—բերդը տանող
Մեծ Կամուրջը անառ պահիր:

Թե Մանչակը լինի կայծակ՝
Մենք կլինենք ապառաժ սնր,
Կկանգնենք քաջ ու համարձակ՝
Պիլաներում անհավասար:

Թե Մանչակը լինի հեղեղ՝
Մենք կլինենք ամբարտակ—թումբ,
Կկանգնենք մեկ ու միտեղ՝
Կռվենք ում արյունախում:

Յնծաց հույսով պայտն չայոց,
Յնծաց Միսը մայրաքաղաք,
Նվ հորդեց զորքը ալեկոծ
Գրոհներով բարձրադաշի:

Ու յոթը օր ծանրը թնդաց
Կլկկկայի հողն հեալով,
Ու յոթը օր գիւզը ընդաց
Կուռ վահանը կոփկոփելով:

Ու յոթը օր, յոթը գիշեր
Իրար գլխին թափեցին բարկ,
Իրար մարմինն լսեցին խոր
Արյունաթոր նետ ու նիզակ:

Սարի նման վեր բարձրացան
Մարդկանց գլխերը դաշտերում—
Մինչև Սաի բերդը հասան,
Որ մխրճված է ամպերում:

Կենտրոնից կուռ՝ զրոհեց հորդ
Լիպարիտի գունդը անահ,
Իսկ ձախ թևից, Մեծ Բերդի մոտ,
Կոստանդինը կամը ջալահ:

Կամսուրջը, այդ անցքը միակ
Սաի սիրտն էր տանում գեպի,
Ուր խորդում էր արյունիզակ
Թշնամի գործքը գետափի:

Հրեշավոր հռնդյունով,
Յրված, ցանցառ, խիտ-խիտ, խումբ-խումբ
Դեպի կամուրջն, ինչպես մութ ծով,
Մակընթանում էր թմրից թումբ:

Կաս կարմրերեց կամուրջը քար,
Կաս կարմրերեց ջուրը գետի.
Ու զարկեցին անվերջ իրար—
Մութից մինչ լույսն առավոտի:

Առավոտի լույսից մինչ մութ
Հեղեղեցին բոց ու կրակ,
Խուլ մռնչաց Մա՛հակն անդուլթ
Հանց վերավոր վարազը բարկ:

— Ձեռ դիմանա, դու, Կոստանդին,
Պիտի առնեմ կամուրջն այդ ես,
Այնժամ քո քաջ Լիսյարիտին
Մորթեմ պիտի հավի մի պետ:

Շուտով կզգաս թափն իմ զարկի,
Շուտով քաջիդ քո աննկուն
Գանգը կտամ սուր նիզակի՝
Տարտնի մեծ հրապարակում:

Ասաց, մղեց դեպի կամուրջ
Խառնախռիվ նոր նոր խմբեր,
Բազմություններ հողմամուռնչ,
Կռնչացող բազմու թյուններ:

— Է՛յ, Կոստանդին, առյուծըդ ծեր,
Ամսւր պահիր կամուրջը փակ,
Թե հեռ ուզում թագըդ դնել
Ամիրայի կեռ թրի տակ:—

Ամսւր պահիր... Զիւ կանչեց քաջ
Լիսյարիտն ու ինչ արծիվի՝
Սուր սլացավ դեպի առաջ,
Տրորելով զորքը դեմի:

Ու կոտորեց նա աջ ու ձախ
Բոցակարմիր նժույգի հետ:
Բայց մի թաքուն կասկած ու վախ
Ծագեց սահին այդ չարաղետ:

Թե չպահի կամուրջը նա՝
Կառնի Սիսը Մանչակն անդուլթ.
Եվ՝ հրաժեշտ իմ Կիլիկիան,
Հրաժեշտ քեզ, իմ ժողովուրդ:

Ամսւր պահիր... կանչեց հեռվից,
Շողացնելով սուրբ հատու:
Շրջվեց՝ ահռավ զայրույթալից
Ամիրայի Ասիդ որդուն:

— Կովենք, գլավոր, ասաց նա խիտ,
Ասիդ թուրքը հակամարմին.
Իսկական քաջն հայտնի է միշտ—
Ո՛չ տանը, այլ կովի ժամին:

Ու ձգվեց մի բերտ շարժումով,
Ինչպես հորձանքն ելման գետի,
Ջախջախելու մեծ վահանով
Քանգը Ասպետ Լիպարիտի:

Ու երկուստեք՝ զենք ու զրահ
Շառաչեցին, ու մոլեգնած
Կրճոտեցին ձիերն իրար,
Իրար ընդհուպ ու ծառացած:

Մերթ մզվեցին ետ իրարից,
Փրկու տաք մարդ, երկու տար ձի.
Մերթ մոտեցան ընդհուպ նորից
Զրահներով կուռ պղնձի:

— Քաջ ես, Ասիդ... քայց քաջությանն
Հարկավոր է նաև հնար.
Ի՞նչ կասես դու, եթե հիմա
Քեզ՝ մեկից մեկ գլորեմ վար:

Պատրաստ եղիր... Ահա և քեզ...
Ու վահանովն իր ծանրագին,
Լիպարիտը, մի ժայռի պես,
Քլար գլորեց գոռ Ասիդին:

— Հն, հն, հն, հն... Քաջ ես... դե, առ...
Ա՛ռ, և ասա քո Մանչակին,
Թե կարենա զանգըդ խելառ
Հատտ ուտերիդ պահել կրկին:

Ասաց. ձգեց սուրը շողշող,
Կտրեց նրա վիզը մսոտ,
Խառնըվեցին արյուն ու հող
Խրինջացող նժույգի մոտ:

— Իմ ետևից, քաջեր, առաջ,
Կանչեց ասպետն արի ձայնով,
Եվ զորքը նոր ոգի առած՝
Սուրաց՝ դեբը կոխտեղով:

Եվ հորդեցին արձակ դաշտում
Մարդիկ, ձիեր, քրտինքում կեդ
Եվ երկնքի բաց ոլորտում
Կանգնեց փռչին զորշ ծովի պես:

Նետով, տեղով, սրով լայնշողը
Կոտորեցին իրար անհաշտ.
Որոտացին հովիտ ու ծերպ,
Որոտացին լեռինք ու դաշտ:

Եվ մըրիկի մեջ այդ դժնի,
Մոլուցքի մեջ այդ խելահեղ,
Նա միտ բերեց Կոստանդինի
Եվ կամուրջի վիճակը նեղ:

Ու ետ նայեց... Օ՛, ինչ սարսափ,
Ի՛նչ մեծ օրհաս, ինչ մեծ աղետ,
Զորքը թողած կամուրջ, դետափ,
Նահանջում էր դեպի Մեծ Բերդ:

— Անմիտ ծերուկ, հե՛շտ բացեցիր՝
Հայրենիքի դարպասը լայն.
Քանի անգամ քեզ ասացի՝
Զլսեցիր դու ինձ սակայն:

Կորավ ամենն, օ՛ ամեն ինչ—
Ազատությունը մեր՝ կորավ.
Խնդա՞ս պիտի չարաբրբիջ
Թուրք ամիրան—արյան ծարավ:

Տեսավ այնտեղ որ, սևերկաթ
Դարպասի մոտ, պատերի տակ,
Վայր թափվեցին անզոր, վհատ—
Հաղար հաղար զանգ ու դիակ:

Տեսավ՝ ահա բացվեց և լայն
Երկաթ դարպասը ճոխնչով:
Ու, թշնամին, գետից ելման,
Քաղաք խուժեց չար կռիւնչով:

Ընկավ դարպասը նախաբերդ—
Զորեց սրտին Կիլիկիայի՝
Բռնակալը իր զորքի հետ,
Գերանդու հետ հնձող մահի:

Զորեց ծանրը, դռագոռաց խիստ
Մեծ ամիրան, դեմքը մթին:
— Այն ժամանակ կառնեմ հանդիստ
Երբ կրունքը Լիպարիտին:

Երբ կկանգնի նա գերու պես՝
Ոտքերիս մոտ, աչքիս առաջ,
Այն ժամանակ կասեմ, որ ես
Կիլիկիայի հողը առա:

Զորականներ, Սիս բերդը ձեզ,
Այվըն ամբողջ ձեզ եմ քաշխուհ:
Նրան պիտի ողջ տեսնեմ ես,
Լսում ես դու, իմ քաջ Արխուն:

— Լսում եմ քեզ, տիեզերքի
Անիվ, առանցք և արեգակ:
Կրունքս այդ օձի ձագերն
Եվ քաջ կսամ ոտքերիդ տակ:

Ու քեց ձինն Արխունն այնժամ
Քաղաքից դուրս, դորքով անվերջ:
Ու նոր կռիվ ծաղեց դաժան
Նրա դորքի ու հայոց մեջ:

Մի խումբ քաջեր՝ մի քաջի հետ՝
Կանգնեցին մի մարդու նման,
Մինչև վերջին նիզակ ու նետ,
Մինչև վերջին կաթին արյան:

Մարտնչելով մեռան նրանք,
Մեռան և՛ լուռ, և՛ ցավադին:
Լիպարիտը մնաց մենակ,
Մենակ զարկեց թուրքի դորքին:

Շառաչեց իր ձիով կարմիր,
Շառաչեց իր անկող տեգով:
Շառաչեց իր սրով ռազմի,
Ու վահանով իր ծանրակող:

Սակայն ահա օղակն ամուր՝
Սեղմ նեղացավ իր չորս թևի:
Ու քառասուն զինված ուրուհի՝
Շուրջկալեցին մի արծիվի:

Շուրջկալեցին և նժույգից
Վար բերեցին, և զինաթափ՝
Քաշ տվեցին ազատ դաշտից՝
Ձեռքն ու հոբը շղթայակալ։

Ու գնաց նա, գնաց լոին
Մայր քաղաքով մթնած, մեռած.
Ու տեսավ թուրք ամիրային
Ուրբերին մոտ, աչքի առաջ։

— Է՛յ, դո՛ւ, գյավնւր, շուն, շանընկեց,
Ո՛ւր տի պահես է՛լ քո մորթին.
Այդ դո՛ւ ես, հա՛, որ սպանեց
Միակ որդուս, քաջ Ասիղին։

— Ե՛ս եմ, այո՛, դեբրի դե,
Մի մորյաւ, չես վախեցնի.
Գոսաանդինը չլինեիր թե՛
Ես քո առաջ չէի կանգնի։—

Գրավեցիր դու Կիլիկիան՝
Ո՛չ թե խելքով, ո՛չ թե զենքով,
Ո՛չ թե ուժով հսկայական,
Այլ մի ծերի սխալանքով։

— Ո՛չ թե ուժով... Կեզնում ես ինձ։
— Հեզնում եմ քեզ, մեծ սրիկա.
Մառերն ընկնում են անտառից,
Բայց մշտադո անտառը կա։

Հերսից զողաց Մանշակը չար,
Աչքն՝ արյունոտ, գեմքը՝ դժգուշ.
— Դահի՛ճ, սրա գլխի համար
Նիզակ ցցիր հրապարակում։

Ասաց. նստեց բարձր դրված
Գահի վրա իր թանկագին,
Նայեց ավեր, ավար տրված
Լուռ ձխացող Սիս քաղաքին։

Մինչ խաժամութ, արյան ծարավ,
Զիրանավոր մի բազմություն՝
Քաջին դեպի մահը տարավ,
Տարավ քեպի անմահություն։

ՀԻՆ ԶՐՈՒՅՑ

Հինավուրց մի զրույց կա,—
Թե մի քաջ ասպետ
Սիրել է մի աղջեկա
Սիրով խոր ու խենթ:

Ու չի հայտնել աշխարհին
Սերը—ոչ մի օր.
Ու զղակում մուրթ ու հին՝
Մեռել մենավոր:

Սակայն, նա իր մահից ետ,
Թողել է մի գիրք,
Որի մեջ կա սրտագետ
Բանաստեղծի ձերք:—

Նա երգեր է հորինել
Հույզերով անշեջ.
Սիրել, տանջվել, դեգերել
Անհուսության մեջ:

Եվ վերջ չի եղել նրա
Սրտի հառաչին.
Եվ այսպիս է գրել նա
Երգը առաջին:—

— Սուրբ է սերը, սուրբ-երազ,
Սերն այնժամ է սեր,
Երբ հեռու է, երբ անհաս,
Երբ անմերձ է դեռ...

1935

ԱՐԲԱՆ ՈՒ ԱՂԲԱՏԸ

Անցնում էր արքան իր շքախմբով,
Առաջը կտրեց մի ծերուկ աղքատ,
Երկարեց ձեռքը և ասաց ահով, —
— Մի ողորմություն, մի արդարադատ:

— Մի ողորմություն... Ողորմություն տամ —
Շատ լավ... Այստիկ նվիրում եմ քեզ
Իմ ամբողջ պալատն իր հարստությամբ,
Գնան վերցրու, եթե կարող ես...

Եվ անցավ շքեղ իր շքախմբով,
Սփռելով շուրջը մի փառփառ ծիծաղ:
Մինչ զայրույթն հոգում, վշտի սև ամպով,
Քարի պես լուռ էր աղքատն անսվաղ...

1936

ԱՐԲՍ. ԱՐՏՈՒՐԸ

Վ. ԲՐՅՈՒՍՈՎ

Արքա Արտուրը կովի է շտապում
Եվ ուժգին փչում են ուղմի փողերը.
Բաժանվելով Ջինեվրա յուր կնոջից՝
Համբուրում է ճակատն ու շրթունքները:

— «Մնաս բարով, Ջինեվրա, իմ կին,
Վանիբ սրախըդ դառն մութը»:
Ջինեվրան դողում է և արցունք է թափում:
Նայում, ծիծաղում է Լանցելոտը:

Դեռ չէր ծածկել Արտուրը սաղավարտն իր,
Ու դեռ լավում էին փողերի ձայները,
Ջինեվրան ու Լանցելոտը արդեն
Մոտեցնում են իրար շրթունքները:

— «Քեզ եմ ծառայել ես, քեզ եմ սիրել,
Քեզ եմ նվիրել ես իմ կարոտը.
Հասել է ժամը մեր կրքերին հազուրդ տալ...»:
Նայում, ծիծաղում է Լանցելոտը:

Հաղթում է Արտուրը բոլոր ոսոխներին,
Նրան են գովերգում ուղմի փողերը.
Եվ նա համբուրում է երկրի ամենագեղ
Կույսի կարմիր շրթունքները:

Արքան, տուն դառնալով, ասում է կնոջը,
— «Ձեն դավել քեզ իմ սերն ու կարոտը,
Բայց մնացել ես ինձ հավատարիմ...»:
Նայում, ծիծաղում է Լանցելոտը:

ՍԵՊԱԳԻՐ

Վ. Քոլասով

Ես, արքա Բիլ-Իբուս, ինքս փորագրեցի աստ,
Ես, Աստուրի ուրդին, մեծ եղա ի վերա երկրի.
Ես, քաղաքներ ու ցեղեր մատնեցի հրի և արյան,
Ես, քաղաքներ բարձրացրի, կերտեցի զից մեհյաններ,
Ես, չնաշխարհիկ Նիրգալին վերցրի ինձ կինս.
Դու, կարմրաշուրթ Նիրգալ, լուսին՝ աստղերի բույլքում,
Սև զանգուրներըդ, Նիրգալ, սև էին զիշերվա պես մուրթ.
Քո պտուկները, Նիրգալ, ալ էին ալ ծաղկանց նման,
Սպիտակ զիստերըդ, Նիրգալ, ծածկում էր ծերանին պուրպուր.
Հոտավետ ոտքերիդ, Նիրգալ. հազցրի ոսկյա մուճակներ,
Երբ մեռար, Նիրգալ, հորստանն օր՝ ես ոչինչ չկերա.
Երբ անցար աշխարհից, Նիրգալ, ես տաս բյուր մարդկանց կախեցի՞ք
Ես, արքա Բիլ-Իբուս, մեծ եղա ի վերա երկրի.
Բայց ինչպես երկնքի ասուպ՝ կորչում ես, անցավոր դու մանրդ.

1916

ՄԵՐԱՆԻ

Նիկողոզ Բարաբազիի

Իմ Մերանի սեզ նժույզը վաղու՛մ, սուրու՛մ է, թոչու՛մ,
Ետեիցըս, մութ մտքերով, սև ազուսն է կրոնչում.
Թո՛ւր, սուրան, իմ Մերանի, սահման չկա քո երթին,
Հողմերին տուր սև խոհերըս, խոհերըս չար ու մթին:

Ճեղքի՛ր հողմ ու գոռ փոթորիկ, անվերջ առանջ սլացի՛ր,
Գուցե վազքըդ կտրի արցունքն իմ աչքերից սևածիր.
Փույթ չէ՛, թե ինձ կհանդիպեն խստաշունչ ցուրտ ու սամու՛մ,
Թո՛ւր, և իմ ղեզերումներն ու ցավերը տուր քամուն:

Հայրենական հարկի տակից թող հեռանամ ես ընդմիշտ,
Ծանոթ ընկեր-բարեկամից թեկուզ կարոտ մնամ միշտ.
Ուր գիշերեմ՝ օթեանըս թող որ լինի միայն այն.
Ես իմ վիշտը կհաղորդեմ շող աստղերին միամիայն:

Ես իմ սերո ղեղումները՝ կտամ ծովին սկետարվի,
Սրտիս անմար ցավը կտամ քո ընթացքին հողմաթափ-
Թո՛ւր, սուրան, իմ Մերանի, սահման չկա քո երթին,
Հողմերին տուր սև խոհերըս, խոհերըս չար ու մթին:

Թող որ մահը հառնի, գտնի ինձ անծանոթ երկնի տակ,
Թող չարտասվե վրաս ոչ ոք, թող մնամ անհիշատակ.
Չարագուշակ ագռավները թող կըռնչան անայի,
Թող մըրճիկը տանե փռչիս սփռե չորս կողմն աշխարհի:

Թող սուրբ ցողը իջնե վրաս, կեղծ արցունքի փոխարեն,
Ուրուրն ու բուն վայեն զլխիս և զերեզմանըս փորեն.
Թո՛ւր, սուրան, իմ Մերանի, սուրա անվերջ ու անկանգ,
Չեմ ցանկանում տանել երբեք ստրկական անարդանք:

Թող ես մեռնեմ անհույ, անհայտ հեռուներն ըսց տփում,
Անհայտության մեջ մեռնելուց՝ ես երբեք չեմ սարսափում.
Թո՛ւր, սուրան, իմ Մերանի, սահման չկա քո երթին,
Հողմերին տուր սև խոհերըս, խոհերըս չար ու մթին:


Ֆիտեմ, մի օր, կհատուցվեն և՛ հոգու ցալ, և՛ տազնապ,
Եվ այս ճամբան, — որ հարթում է քո ընթացքը հողմաթափ, —
Կտա արախս թեթևութուն, կտա սրտիս հուր-կրակ,
Ու համարձակ — կտանի ինձ ղեպի սեր ու հաղթանակ:

Իմ Մերանի սեզ նժույզը վաղում, սուրում է, թռչում,
Ետևիցքս, մութ մտքերով, սև ազդարն է կրճնչում.
Քոփը, սուրն, իմ Մերանի, սահման չկա քո երթին,
Հաղմերին տաւր օհ խոհերքս, խոհերքս չար ու մթին:

• ԴԱՎԹԻ ԵՐԳԸ

Հատվածներ վիպերգից

Դիպիրը—իմ հզոր ժողովուրդն է Հայոց,
սողոսոն սարոսի



ԱՌՅՈՒԾԱԶԵՎ ՄՀԵՐ

Քաղաքացիք լացով-կոծով եկան ծերուկ Սանասարին.

—Վա՛յ, հաղա՛ր վա՛յ, ի՞նչ փորձանք է տերը զրկել մեր աշխարհին.
Մարդ չի կարող տեղից ժաժ գալ, չենք էլ բնում գիշերն ամբողջ,
Սովը շուտով կը սաստկանա, կը տարածվի Սասունը ողջ։—

Առյուծ չէ՛, այլ երկնի սլափ, պետք է անել մի ճար, մի բան,
Մնացել ենք ձեռը դատարկ, անջուր, անհաց, անգործ, անբան.
—Անջուր, անհաց, անգործ, անբան, — Սանասարը հառաչեց խուլ,—
Նեղում է իմ ժողովրդին՝ առյուծ-գաղանը մարդակուլ։—

Ես ի՞նչ անեմ, օր ծերության՝ այսպես սլափ ուղարկեց ինձ,
Մարդ էլ չկա՛ թե որ կովի,— ազատի մեղ չար գաղանից.
Թե կլիներ ուժս առաջվա՛... Բայց ի՞նչ անեմ իմ ծեր տեղով,
Ու կախեց իր ճերմակ գլուխն արտասովալի ախ ու վախով։

Հենց այդ պահին, երբ լուռ կեցած նայում էին իրար տրտում,
Ներս վաղեց մի հաղթ պատանի, ինչպես լույսն է երկնից կաթում,
Ուսին գցած աղեղը լայն, կողբից կախած կաքավ ու լոր,
Ձեռքին բռնած կաղնի կողալ —գլուխը մեծ, հաստ ու կոթ։

Պարտիզաներ խուպուպները իջած մինչև ուսերը հաղթ,
Փայլում էին հստակ, ինչպես արշալույսի թարմ ճառագայթ.
Արծրվենի քիթն իջնում էր շրթունքներին կարմիր ու կաս,
Նրա ծլած նոր բեխերին, փափուկ, ինչպես աղափնու մաղ։

Նրա երկար թարթիչներն սև շուրի մեջ, կրակ ու վառ,
Փայլում էին թուխ աչքերը, մեծ աչքերը, ինչպես սլոյժառ
Ծովն է փայլում արևի տակ, ծով, որ ունի խորքում ալիք,
Պաղաղության ժամին՝ ժպիտ, և զայրույթի ժամին՝ մրբիկ...

Նայեց Մհերն իր ծեր հորը, իր շուրջն եղած մարդկանց մեկ-մեկ,
Մթնեց դեմքը մի կասկածով, մթնեց ինչպես նեմրութը սեզ.
— Ասա, հայրի՛կ, ի՞նչ կա, ասա, ի՛նչո՞ւ ես դու դարձել մի բռու,
Դժբախտ մի բան է պատահել, թե՞ մի լուր ես լսել տխուր:

— Ո՛րդի, ասաց Սանասարը, — թե մի մարդու բան պատահե՛ր՝
Քարոզ էինք նրան սիրտ տալ, կարող էինք շահել, պահել.
Բայց ամբողջ մի ժողովուրդ է սովի բերան մնում գերի...
Քո առաջվա հայրը չե՛մ ես... հասե՛լ է ուժն իմ ձեռքերի...
—

Առյուծ զսպող ծուռ սասունցուն՝ մի առյուծ է այսօր դերում,
Կանգնել է մեծ ճամբի վրա, ա՛ն է դցել մեր սրտերում,
Եթե այսպես երկար մնա, վա՛յն եկել է մեր աշխարհին, —
Մարդիկ իրար միսը կուտեն, կուրանա մայրը զավակին...
—

— Առյուժ ախիր, առյուծն ի՞նչ է, ասաց Մհերը միամիտ
— Առյուծը մի կենդանի է, մարդ է ուտում, այ խելամիտ
— Լավ, հասկացա, որ ուտում է, ուտում է նա հեովից, մոտից:
— Մոտից է նա ուտում, սրդի. ազատիր ինձ հարց ու փորձից...
—

Այնժամ Մհերն առաջ եկավ շիտակիրքս ու սիդապանծ,
Նայեց ուղիղ հոր աչքերին, նայեց շուրջը եղած մարդկանց,
— Հեովից լինի, մոտից լինի, թող չլինեմ որդին իմ հոր,
Թե առյուծին, ես տեղն ու տեղ, չանեմ այսպես... երկու կտոր...
—

Սանասարը դողաց ահից: Ասաց.— Որդիս, փոքր ես դու գեռ,
Սե մի բերի իմ ծեր գլխին՝ դառնալով չար առյուծին կեր:
Բայց Մհերը ականջ չաբավ, վրան զարկեց դուռը ամուր,
Վազեց մինչև Սեղանասար, վազեց մինչև սարը Գրգուռ:

Սարի գլխից տեսավ, — և ի՛նչ, ձորում կորչող ճամբի վրա
Նստել է մի հրեշ-առյուծ, առաջ ձգած թաթերն իրա,
Գոհ՝ լիզում է իր շուրթերը և նայում է զայրույթալից,
Նրա ահից, արծիվն անգամ, չի հանդգնում թռչել վերից:

Ու նայում է աչքը սևեռ, կշտությունից ծանր շնչում,
Շունչ, որից օդն աղմրկում է, սարսռում է ու շառաչում.
Նրա բաշի շեկ խարույկը վառվում է արևի տակ,
Արյունակոխ մեծ աչքերից թափվում շուրջը բոց ու կրակ:

— Սա է որ կա. ասաց Մհերն, ու կամացուկ առաջ գնաց,
Եվ ինչքան էլ մե՛ծ է, մի տես, շան նմանվող, բերանը բաց.
— Որ մոտենամ՝ կուտե՞ս դու ինձ... թե՞ հեովից ես ուտել ուզում,
Ի՛նչ ես այդպես չովել այդտեղ. պատասխանիր, չար անասուն:

Պատասխանը եղավ անհղ մի մոնչոյ մեծ ու թնդուն,
Կանգնեց առյուծը կատաղի, մեծ գլուխը ցցած օդում.
Ու որոտաց այնքան դարձուր, որ Գրգուռի կողքին կպած
ժայռերն իրենց տեղից թռան, շառաչելով հոսեցին ցած:

Ներս քաշելով հաստ գլուխը՝ շանթի նման ձգեց առաջ,
Եվ, օդի մեջ, հուրհրավով, դղրդալի, մեծաշառաչ,
Ուղեց ծանրը թաթերով իր՝ սղկել մարմինը Մհերի,
Բայց վայր ընկավ մեջքի վրա, խիվելով մի ժայռաքարի:—

Երկրորդ անգամ ձգեց նորից արնածարավ ու դժնդակ,
Բայց Մհերը, մի բռունցքով, գցեց նրան իր ոտքի տակ.
Գալարվելով, ելավ նորից, գոտեմարտի կանգնեց անհղ,
Ձգեց ետի հաստ ոտքերին, սարսափելի ու խելահեղ:

Թաթերով մերթ հարվածում էր նա՝ կուռ ուսերը Մհերի,
Մերթ սեղմում էր թաթերի մեջ, և մոնչում զարհուրելի,
Հոնդում էր, տնքում ծանրը, թափ տալով իր անոթի ուժին,
Մինչև որ ձեռքը Մհերի — փնջեց նրա գանգի կաշին:

Ագահ երախը բաց մնաց, ինչպես քարայր լայն ու անվերջ,
Ձգված լեզուն, վիշապի պես գալարվում էր բերանի մեջ.
Եվ, ներքևի ծնոտը պիրկ հավաքելով մեկել ձեռքում՝
Դեմնեց ուժգին, ձեղքեց երախն, ինչպես գուլթանն հողն է ձեղքում:

Ճեղքեց գանգից մինչև պուշը, Կոտրները դրած ուսին՝
Ընկավ ճամբա, տուն եկավ շուտ, պայծառ ժպիտը երեսին,
Մտավ բերդը, խոնարհ ծնկեց իր հոր առաջ ծերունագարդ,
Միտը հստակ, միտքը մաքուր, խիղճը հանգիստ, հողին հալարտ:

Այն ժամանակ մեծ ու արդար ժողովուրդը ողջ Սասուն
Օրհնեց հոր հետ ջերմ օրհնանքով իր Մհերին քաջ ու անահ.
Նա, որ ելավ և աղատեց ժողովրդի կյանքը համայն,
Առյուծաձև Մհեր կոչվեց և կը կոչվի հուր-հավիտյան:

ԴԱՎԻԹՆ ՈՒ ՀԱՐՄՆԵՎՈՐՆԵՐԸ

Երբ Դավիթը դաշտից թեքվեց՝ ելավ բարձր մի սարակող,
Հանկարծ լսեց ինչ որ գլուղում զուռնայի ձայն ականջ ծակող,
Զուռնայի հետ դժբախտում էր դհոլի թինդը ծանր ու խոր,
Խոր արձագանքը տարածած մի ձերպից-ձերպի, մի ձորից-ձոր:

— Հարսանիք է, ասաց Դավիթն,— դու զուռնայի ձայնը շատ մոտ,
Ո՞վ գիտի թե ո՞ր ջահելի բախտն է բանել այս առավոտ,
Գնամ, մտնեմ հարսանքատուն, բոլորի հետ ուրախանամ,
Գինով մի րիչ սիրտըս բացեմ, հետո ելնեմ դորձիս գնամ:

Ու շուռ տվեց ձիու գլուխն, ու մտավ բակն հարսանիքի:
— Բարե՛, ասաց.— Թող ծուխն երբեք չկտրվի ձեր երգիկի:
— Բարե՞վ, ասին,— Օտարական, տունը հաշվիր քո տունն ինչպես,
Ի՞նչի՞նչ ձիուց, գինի խմենք, թե չես ուզում մեզ անպատվես...

Թափ Դավիթն իր նժույգից, գնաց գեպի հարսանքատուն,
Զուռնայի ձայնը սուր ու զիլ ու դհոլի թինդն ու թնդյուն
Հաղարաշեն տան առիքը վերցրնում էր մեկից խալառ,
Տան կենտրոնում, թոնրի շուրջը, դառնում էր մի խոլական պար...

Կանգնել էին դեմ ու դիմաց քսան ջահել և ահել մարդ,
Տասը տասի դիմաց ուղիղ, պարում էին «Վահանամարտ»,—
Դալիս թափով զարկում իրար, զարկում արագ ու դառնում ետ,
Ու լուռ, գալով, իրր իրար խրում էին նիզակ ու նետ:

«Վահանամարտ» պարից հետո, աղջիկները եկան հանդարտ
Ու պարեցին պես-պես պարեր, բաշելով մի ծանրը «գլուխնդ».
Եկան պարին խառնվեցին ձեր կնանիք, տղամարդիկ,
Թնդացնելով հաղարաշեն տան առիքը, բակ ու երգիկ:

Փեսան՝ գլխին դրել է ալ, վառ արախչին շքեղ կարած,
Արախչու շուրջը սև փուշին, երկու փետուր փուշում խրած,
Հաղթ արյուրի երկու փետուր՝ ծիածանի գույներով յոթ,
Նստել էր պինդ, հենց կենտրոնում, իրա երկու խաչեղորո մոտ:

Հարսը՝ դեմքին կարմիր քողը՝ նստել մեջտեղը աղջկանց,
Ինչպես վարդն է վառվում կարմիր՝ հասածիկների փնջում ծաղկած, —
Ձեռքերին ալ հինա քսում, օծում յուզով անուշաբույր,
Մերթ հառաչում հովի նման, մերթ կարկաչում ինչպես աղբյուր:

Պարից հետո թասը առավ մի տղամարդ հաղթամկան՝
Ու դիմելով Դավթին, ուրախ, ասաց.— Դու, հյուր, բարձր եկար,
Ո՛վ էլ լինես, ի՛նչ էլ լինես, նստիր, հաց կեր, խմիր գինի.
Նստիր մեկ տեղ ուրախանանք, թող քո սիրտն էլ ուրախ լինի:

Դավթին (ապրի իր արեր), ազատեց մեղ Մսրա ձեռքից,
Էն օրվանից մինչև հիմա՝ աչք չենք բացում հարսանիքից.
Քե՛ֆ է անում ժողովուրդը, քե՛ֆ է անում առանց ափ,
Աստված պահե մեր քաջ Դավթին, սուրբ ձեռքին կտրուկ պահի:

Քո կենացը. Անճու մնաս: Բարձր եկար, մեր հյուր խապեր,
Տղերք, մեր լավ հյուրի կենաց բաժակները լի լցրեք ձեր:
Խմենք մինչև վերջին կաթը, խմենք, պարենք, ուրախանանք,
Ես՝ խմեցի, անուշ արեք: Մեծ ու պստիկ՝ կենոնք մնաք:

— Շնորհակալ եմ, Դավթին ասաց.— Ես էլ Դավթին չեմ ձանաչում,
Ո՛վ գիտի թե ծուռը հիմա, ո՞ր կովումն է, կամ որ քնջում.
Որ խմեցիք իմ կենացը, ես էլ ահա՝ կենացը ձեր,
Ուրախ մնաք դուք բոլորը, փոքրից մինչև ամենածեր:

Ու նստած ձեր մարդու կողքին, խմեց նորից մի քանի թաս.
Նստում էին նրան թաքուն ամեն աղջիկ ու ամեն հարս:
Ո՛վ կլինի այս թիկնավետն, այս սևաչյառ հալալակուռ,
Որ, սրտաբաց, տան մարդու պես, և՛ խմում է, և՛ ժպտում լուռ:

Այսպես, ժամեր, հոսում էին գինին, օղին հեղեղի պես,
Պարում էին թուխ ջահններն ու աղջիկները սևազես.
Երբ հանկարծ ներս ընկավ զուհատ մի տղամարդ, ձայնով ահեղ, —
— Թե կարող եք, հարսին խնդույն շուտ փակցրե՛ք մի ուրիշ տեղ:

Իշխանաձոր բերդի տերը՝ իր ձիավոր մարդկանց հանել,
Եկել, կանգնել բակի մեջտեղն, ուզում է մեր հարսին տանել..
Զուհնայի ձայնն ու դհովի՝ կարկաչուն մեկնն ի մեկ,
Հարսը ընկավ ուղադնաց, բարձրացավ մի կոծ ու հեկեկ..

Փեսան, կողքից թուրը քաշած, դեպի բակն է ուղում թռչել։
Սակայն յոթը ջահել կտրած նրա ամբողջ շուրջ ու առջև՝
ետ են պահում, քաշում, հրում, կախված կռնից ու թիկունքից՝
Բարկուկթյունից դողողում է, հորդ քրտինքը հոսում դեմքից։

Դավիթն հազիվ գտցեց իրեն, ապա դնաց բակը իսկույն,
Տեսալ, որ մի խումբ աղամարդ ու կնանիք խեղճ, հեկեկուռ,
Բերանքսիվայր գետինն ընկած, սրտերի մեջ, կսկիծ կուտակ,
Ե՛վ աղաչում, և՛ լալիս են նրա ձիու ոտքերի տակ...

— Ո՛հ, դռում է իշխանն անեղ, իր ձախ ձեռքը կանթած կողքին,
Թե չեք ուղում, որ ես հիմա սե կապեմ ձեր հարսանիքին,
Իմ ասածը կատարեցեք... ձխավորներ, իսկույն և եթ
Շուտ բերեք ինձ... դիմադրողին՝ չխնայեք նիզակ ու նետ։

Այնժամ Դավիթն առաջ եկավ, սրտում կրակը լավիլիզուն.
Ասաց.— Իշխան, խեղճ մարդիկ ենք, դու մեղանից ի՞նչ ես ուղում—
Մարդը պիտի խիղճ ունենա, փեսայինն է հարսն օրենքով,
Կինը պիտի լինի միայն իրեն ուղած սիրածի քով։

Իշխանն աչքերը ուրեց Դավիթ վրա բոց բարկությամբ,
Եվ որոտաց, ինչպես մռայլ, կայծակնածին, սեպկնած ամալ.
— Շեմքից հեռու, թե չես ուղում, որ գլուխդ հենց այս պահին,
Թրով պոկեմ շաղգամի պես, բաժին դառնաս սատանային։

— Թրով պոկես շաղգամի պես... Գոռաց Դավիթը բարկացկոտ,
Ձգվեց դեպի չար իշխանը, դնաց կանգնեց կիպ, մոտեմոտ.
Մատներով մի պոնկ իջեցրեց նրա մռայլ, սև ճակատին,
Ու յոթն օրվա մեռելի պես՝ մեկին փռեց գետնով գետին։

Ապա դարձավ շուրջն հավարված ժողովրդին ուրախացած.
— Չար իշխանի մարդկանց դատը՝ ձեզ եմ հանձնում հիմա, ասաց.—
Սկսեցեք հարսանիքը, ուրախացեք առաջվա պես.
Սկսեցեք հարսանիքը, Իսկ ե՞ս... Սա՛նա Դավիթն եմ ես։—

ԴԱՎԻԹԸ ՄԱՃԱՆԱԼ

Ամպից պոկված կայծակի պես Դավիթն իջավ Տարոնա դաշտը:
Օրն անուշ էր աշնացանի, երկինքը պարզ, երկիրը հաշտ:
— Բարե՛, ասաց. — Աշխարհ պահող գութնա՛նովոր իմ եղբայրներ, —
Ձեի՛ք թողնի իմ մեղավոր ձեռքով արդար մաճը բռնել:

Ասաց. իջավ նժույգ ձիուց — ջահել հսկան մեծ սրտանի.
Վստահ՝ զնաց դեպի մաճը պապենական հին գութանի.
Ու կարկաչուն հորովելով գեղջուկներին ժիր ու զվարթ, —
Մի ժամվա մեջ հերկեց, ցելեց քառասուն տան քառասուն արտ:

Ճաշին, ինչպես թուխ քարայծեր, երկններով սինոռներին,
Եկան հացվոր աղջիկները, բերին փլավը բլդուրի,
Բերին ապուրն անուշահամ, վարդից կարմիր փրփրուն հաց.
Տեսան՝ արտերն հերկած են ողջ՝ ու մնացին բերանը բաց:

Գերավ Դավիթն իր բաժինը, սրբեց բեկերը նորածիլ.
— Գիտե՛ք, ասաց. — Աշխատանքի քաղցրութունը նոր զգացի.
Գութանն է շեն պահում աշխարհն, այս հացն ու այս հողը զիւս:
Աշխատանքից ավելի լավ — արևի տակ ոչինչ չկա:

— Ա՛յ աղջիկներ, ա՛յ հոտաղներ, կանչեց մաճկալն ամենածեր,
Մեր Դավիթը արտերն հերկեց, զվարթ պահեք սրտերը ձեր.
Գութանն էսօր չէր աշխատի՝ թե չաղատեր ձեռքից Մորա,
Մաճկալ Դավիթին գովերգ ասեք, կանաչ մնա կուռը նրա...

— «Էն ճամբով, որ դու կերթաս՝ քար քաղած, ալաղ մաղած»
էն դաշտով, որ դու կերթաս՝ գոհար ցող ու շող շաղած,
էն դետով, որ դու կանցնես՝ գետ—գինի, կամուրջն—արծաթ,
Սասնա Դավիթին արե՛ ուղենք, Սասնա Դավիթ, արևը շատ: —

Քն ապրով, որ դու կերթաս՝ սարը հարթ—դաշտի նման,
Քն մութով, որ դու կերթաս՝ լուսնյակը—լուսնե լման,
Քն ջուրը, որ դու կառնես՝ թասի մեջ—շաքրաթ ու կաթ,
Սասնա Դավթին արե՛ ուղենք, Սասնա Դավթի, արե՛րդ շատ:

Քն կոխով, որ դու կերթաս՝ չար սուրը քեզ չխոցի,
Քն չարքին, որ դու կերթաս՝ ոտքիդ տակը դառնա խեցի,
Քն կյանքը, որ դու կապրես՝ մեկ օրըդ չլինի վատ.
Սասնա Դավթին արե՛ ուղենք, Սասնա Դավթի, արե՛րդ շատ . . .

Մեր մաճկալը գրկեց Դավթին, սուսաց.—Դավթի, դնաս բարի,
Կյանքըդ որ կա՝ Մեղրսեփեփի ջրի նման թող երկարի,
Հացտուր հողի, վաստակողի վրա շողա արե՛րդ մեծ,—
Խօր-հօր՝ մեր գութանը քառսուն կարաս ոսկի հանեց,

ԿԱՎԹԻ ԶՈՒԼ ՀԱԿԱՆՈՅԸ

Ներք կողքադնի ճակտին շարեց ատամները ուրազ-ուրազ,
Նլավ Դավիթը բարկացայտ, գնաց ամեն գոմ ու մարազ,
Կոտրեց բոլոր կողպեքները, բացեց բոլոր դռները գոց,
Հանեց Սասնա սիրունատես աղջիկներին ճերմակածոց:

Քեռի Թորոսն առավ նրանց.— Այսօրվանից ազատ եք դուք,
Իջեք դաշտը զաւլա բաղեք, բարձրացեք սարը Մաքաթուկ,
Հայրական ձեր երգիկներից պալան-պալան ծուխն ելնի թող,
Արև ուղեք արևաշատ, ազատարար Դավթին հաղթող:

Որի դեմքին վշտի ամպ կար՝ երկնքի պես պայծառացավ,
Որի դեմքին տաք արցունք կար՝ ուրախության գոհար դարձավ,
Որի դեմքին ուրբի ցավ կար՝ ցրվեց դաշտի մշուշի պես,
Որի դեմքին սեր-մուրազ կար՝ սեր-մուրազը եկավ ի տես:

Որի դեմքին մահի ահ կար՝ ընկավ ծանրը քարի նման,
Որի դեմքին մթին քող կար՝ բացվեց ինչպես լուսին լման,
Որի դեմքին դալկություն կար՝ դարձավ կարմիր վարդը ալ-ալ,
Որի դեմքին պղտոր բոց կար՝ բոցն սկսեց պայծառ շողալ:

Թովոացին նրանք, ինչպես աղափնները սպիտակ,
Երախտիբի, սիրո կրակն անթեղած խորը՝ կրճրի տակ,
Շուրջպատեցին հսկա Դավթին, գովեցեցին սրտով անգող,
Դավթիթը՝ սար, աղջիկները՝ ակ ու աղբյուր-սարեց իջնող:

«Մեր քաջ Դավթին արև՝ ուղենք,
Արևը միշտ անդին մնա,
Արևը միշտ անդին մնա,
Մեր գլխին ու կյանքին մնա:

Մեր բաջ Դավթին արե՛ ուղենք,
Արե՛ր միշտ շողին մնա,
Արե՛ր միշտ շողին մնա,
Մեր գլխին ու հողին մնա:

Մեր բաջ Դավթին արե՛ ուղենք,
Մեր մուրաղը պայծառ մնա,
Մեր մուրաղը պայծառ մնա,
Միշտ մեր գլխին շող-ծնո մնա:

Մեր բաջ Դավթին արե՛ ուղենք,
Մեր Դավթը արե մնա,
Մեր Դավթը արե մնա,
Միշտ մեր գլխի վերև մնա...»:

Դավթը խոր դուռն ալեց.—Շնորհակալ եմ, ասաց,—քույրեր,
Ձեր բոլորիդ ծառան եմ ես և հարադատ եղբայրն եմ ձեր,
Մարդն երջանիկ, հողին զվարթ իրեն կղզա ան ժամանակ,
Երբ չի կախած իրեն գլխի վրա ոչ մի վախ ու վտանգ:

Ապա դարձավ իսկույն դեպի քեռի Թորոսը ափահա,
Ասաց.—Քեռի, քեզ եմ հանձնում իմ քույրերին բոլորն անա,
Դադարադղեց ալեկի լավ աշխատանք եմ տալիս սրանց,
Ոչ միայն այս աղջիկներին, այլև պարնայ կին ու արանց:—

Քեզնից կուզեմ քառասուն մարդ, որ հող թալե, խխար կրե,
Քեզնից կուզեմ քառասուն մարդ, որ խիճ ջարդե ու կիր բերե,
Քեզնից կուզեմ քառասուն հյուսն ու քառասուն որմնադիրներ,
Ու քառասուն քարտաշ վարպետ ու քառասուն փայտ կրող ձեռ:—

Քեզնից կուզեմ, որ քաղաքի բերդի առաջ, վերին թաղում,
Որտեղ որ մի ժամանակ քո ծուռ Դավթը ճան էր խաղում,
Որտեղ որ մի ժամանակ կար կաղամբանոց, ձմերկանոց,
Սրանց համար շուտ շինել տաս մի ընդարձակ ջուլհականոց:—

Ու շատ չանցած, բարձրաբարձիկ բերդի առաջ Սասնա հողը,
Երբ արե՛ր դեռ չէր թեքվել, երբ կանգնել էր պայծառ կեսօր,
Ձեռքերի տակ աղջիկների, մասնների հետ վարժ ու արագ,
Պարտվեցին հարյուրավոր իլիկ, մաքոք ու ճախարակ:

ԴԱՎԹԻ ՈՐՄԱՐ

Թողած բարձրում քար ու քարափ, քերձ ու քռա, ծերպ ու ծմակ,
Դավիթն իջավ Անդոկ սարից և բարձրացավ լեռը Մծմակ.
Լեռնալանջին՝ հոտերն էին արածելով բարձրանում վեր,
Ինչպես թանձրը և հոտանուտ սև ու ճերմակ ամպակույտեր:

Հսկամարմին հովիվները, իրենց դայլենդզ շներով մեծ,
Ուսին առած թանձրը կուլապ, ձեռքին կեռման կոպալն իրենց,
Ջախում էին մերթ այս մաքուն, սաստում այծին չար ու կրակ,
Որ քերձերից խոտ պոկելով՝ շարժում էր իր մոլորան արագ:

Ու կանգնել էր Դավիթն այնտեղ՝ բարձրարարձիկ ժայռի վրա,
Մեզ արծիվը իր թևերը ճակատին էր քշում նրա.
Արձանացել, ինչպես ժայռը, շիտակիրան ու կարկառուն,
Արեգակի բովից պոկված մեծ աչքերը սուղած հեռուն:

Ու տեսնում էր՝ ծով ծավալուն հոտերն էին ձգվում ի վեր.
Նայեց Դավիթն ու մրմնջաց. — Երանի՜ ձեզ, այ հովիվներ,
Մեծացել եք սարի վրա, ջրերի մոտ, հոտակ օդում,
Ձեր բարձր՝ քար՝ հովն՝ անկողին, արևը՝ մայր, երկինքը՝ տուն:

Ասաց. թռավ ժայռի գլխից, իջավ մի մութ խորխորատ-վին,
Ուր չէր ծաթում լուսնի շողը, չէր թափանցում քոցն արևի.
Բարձրանալով ձորաշուրթին՝ մոտեցավ նա մի աղբյուրի,
Որի ակում ապրում էին ջրահարսները մարմարի...

Այդ աղբյուրին մոտեցավ մի գալաբաճյուղ եղջերու շեկ,
Փոքրիկ ձագուկն իր հետ առած, որի վզիկը դյուրաթեք,
Եվ մեծ աչքերը գեղեցիկ, և պոզիկները նորարույս,
Երկրորդիցին սառն աղբյուրի ջրերի մեջ արծաթալույս:

Շուքը նրանց դողդողում էր սառն աղբյուրի ձերմակ ջրում,
Որոնց հոսանքը անընդհատ բեկրեկում էր և օրորում,
Երբ կշտացած՝ ուզում էին հեռանալ այդ հայելուց ջինջ,
Լարվեց այնժամ Դավթի ձեռքի աղեղը մեծ և լայնալիճ...

Ձագուկն ընկավ կողքի վրա... Մայր եղջերուն դարհուրեց նախ,
Խորոնեց վախից, պոկվեց տեղից, բայց մոռացած երկյուղ ու վախ,
Սրտակեղեք մի բառաչով մոտեցավ իր ձագուկին խեղճ,
Որ գալարվում, թալրտում էր կարմիր արջան հեղեղի մեջ:

Մայրն հոտոտում, բառաչում էր, լիզում վերքը իր սիրելու,
Որ այդ պահին նվաղում էր մահվան ծանրը դարկին հլու,
Որոնում էր կարծես նրան, որի կապարճն անխղճաբար,
Պոկեց կարծես իրա սիրտը ու շարտեց ժայռերից վար:

Ու նայում էր Դավիթն անվերջ, և քարացած, և ակնապիշ,
Ու նրա մեջ կսկծալի գալարվում էր մի սիրտ ուրիշ:

— Անասունի սիրտն է՛լ է սիրտ, ինչպես մարդու — սիրտը, Աստված,
Նա էլ գիտե սիրել, ցավել, լացել ինչպես մարդ արարած:—

Ու Դավիթը, որ իր կյանքում չէր թափել դեռ ո՛չ մի արցունք,
Ջգաց, որ իր կոկորդն ամուր սեղմում է մի ծանրը փղձուկ:
— Ի՞նչ կանեմ ես՝ եթե մեկը նույն հավածը տա իմ որդուն,—
Այս վերջինը լինի, ասաց, և շուռ գալով՝ շտապեց տուն:

Տանը, Մհերը բնած էր մի երջանիկ քնով խաղաղ,
Ինչպես կորյունն է մրափում վանդակի մեջ երկաթաճաղ,
Իսկ երեսակալ շորը՝ նրա շնչից հոտը և առնածին,
Բարձրանում էր մեկ առաստաղ, մեկ իջնում էր օրորոցին:

Վեր բարձրացրեց երեսկայր, ջերմ համբուրեց որդուն սիրով,
Ապտ ասաց.— Խանդավ խաթուն, էլ չեմ ընկնի սառով, ձորով:
Ահ՛ իմ նետը, իմ աղեղը, ամուր պահիր, սրանից վերջ՝
Որո չեմ անի ես սարերում, բանի լողճի խայթ կա իմ մեջ...

ԳՍԱԿԹԻ ԿՈՒՎԸ ԴԵՎԵՐԻ ՀԵՏ

Նախորդական պարիք առած՝ Դավիթն ելավ լույսը լույսին,
Գերանաչափ կեռ կոպալը դրեց իրեն պողպատ ուսին,
Ու նախրապան ընկերոջ հետ՝ քչեց գեպի Սեղանասար,
Թռավ անցավ քերծ ու քարափ՝ արծիվներին հետ հավասար:

Երկու նախորդդ, մի խղճուկ պարկ, ու պարկի մեջ նրանց բաժին,
Կար մի կտոր քարթու չոր հաց, ու մի բուռը աղի ժաժիկ,
Ճաշին, այն էլ կես-կես բրդուճ, մի բերանով կերան պցճան,
Կաթնաղբյուրի ջուր խմեցին և սվելի սովածացան:

Նախորդը ընկերն ասաց Դավթին.— Կես օր էլ կա դեռ մեք առաջ,
Եթե հիմա մոտըս լինի յոթը գաթա, յոթը բաղարջ,
Յոթը հոխա քաշած պանիր, Կաթնաղբյուրի սառը ջրով,
Գուտեմ ամբողջն ու իրիկվան տուն կգառնամ դատարկ փորով:

Այնինչ՝ հիմա, ժամի բակում ելում են միս ու հարիսա,
Արի նախրին դու մտիկ տուր, գնամ բերեմ երկու քասա:
— Ձե, ախպեր ջան,—ասաց Դավիթն,— և թե դու իմ խոսքը լսես...
Ե՛ս կգնամ ճաշ բերելու, ու կուշտ կուտենք թե՛ դու, թե ես:

Սարի թեթև քամու նման թռավ Դավիթն ու գլուղ հասավ,
Թռավ Դավիթն ու գլուղ հասավ, զարմազ բնաց, ինչ որ տեսավ:
Քառասուն մեծ օջախների լալման բոցին, իրարու կից,
Հարիսայով խլթխլթացող քառասուն մեծ մրոտ պղինձ:

Բարև տվեց ծեր ժամհարին, պղինձները խառնող մարդկանց,
Ասաց.— Ես ու իմ ընկերը անոթի ենք գայլերը քանց:
Մեզ մի պղինձ եփ հարիսա, մեզ մի պղինձ յուղ պիտի տաք:
Նախորդդ մարդ ենք, աշնանը ձեր հարիսայի գլինը կտանք:

Ախտափորներն իրար անցան բռենը քանդած մըջյունի պես,
— Չէ՛, ասացին,— թող եփն տունի՛ զգալն առ կեր, ինչքան կուզես,
էլ ինչ մեկին երկու պղինձ։ զինդ ես քաշել, աղքատ հալարտ,
Փորըդ փոք է, թե չէ հոր է, վիշապ խո՞ւմ չե՞ս, ա՛յ տնաբանդ...

Տեսա՞վ՝ տեղից չեն շարժվում, ծաղրում են ու հոհում դեռ,
Կատարությամբ տարավ քերավ գերանաչափ կոպալը կեռ,
Յոթը օրվա մեռելի պես մի տասը մարդ փռեց երկար,
Ու երկու մեծ պղինձ առած՝ վազեց դեպի Սպիտակ քար։

Տեսա՞վ նախորդը իր բնիկերը լաց է լինում մաղիկ-մաղիկ,
Թեև նախիրն արածում է, բայց շուրջ բոլոր լերդ ու աղիք։
— Դավիթ, ասավ,— Դավիթ ախպեր, գեներն եկան արնաբերան՝
Քառասուն կով, քառասուն եղ ու քառասուն երինջ տարան։

Կրակ կտրեց Դավիթը բարկ, եղնիկի պես վազեց թեթև,
Ելավ ձյունոտ սարի դուռն, տեսավ, որ մի ժայռի ետև՝
Տափն ահալի հսկա դեեր, ծուխը մինչև երկինք տված,
Պղինձներ են խառնում, եփում, խաշում են միս ու խորոված։

Դռնում, գոչում, մոնչում են շրջապատած միս ու պղինձ,
Մեկը ահա մի թերթաշ բուդ կուլ է տալիս միանգամից,
Մեկը ահա ջիլ ու ջիլ է մսից ջոկում, ծամում, զգում,
Մեկը ահա ոսկորներ է բլրի նման առաջ դիզում։

Մեկը ահա եռման յուզոտ մսաջուրն է խմում ագահ,
Մեկը ահա զգրտում է, կերածն ասես ետ պլտի տա...
Տեսա՞վ Դավիթն ու սրտաց, ինչպես ամպն է սրտ հանում,
— Է՛յ, դնեք, դե՛ր, ուրիշների հաշվին նստած քե՞ֆ եք անում։—

Որի ձեռքին ոսկոր կար դեռ, ոսկորն իսկույն գետին ընկավ,
Որի դեմքին դիպային խինդ, ահուդողից հայվեց, հանգավ,
Խառնըվեցին, իրար անցան, ու մոռացած միս ու ոսկոր,
Առա սողացին դեպի հսկան՝ գլուխներն ու մեջքերը կոր...

Առաջ եկավ տգեղագե՞տ ամենամեծ գեր կախարդ,
Ասաց.— Դավիթ, ո՞վ հողածին, ոտքիդ հողն ենք, քաջադարձ մարդ,
Խնայի՛ր մեզ... Թե այս անգամ բոլորին կյանքը խնայես՝
Մենք մեր հուրնիկ ու հրեղեն բույրը կտանք, կբաշխենք քեզ...

— Լավ ես ասում չարահոգի, պատասխանեց Դավիթն հանդարտ,
Չե՛ր բրջըր դեի տվեք, իսկ ես ի՞նչ եմ, դե՛ եմ, թե մարդ։
Ծին՜ջ դեերից մեկը հանկարծ օդակ արած մի հաստ ճուղան՝
Արագ գցեց Դավթի մեջքով, արավ Դավթին կալ ու կապան...

—Հա՛, հա՛, հա՛, խի՛, խի՛, խի՛, քրքշացին դեները չար,
Դե եկ, ասին,—թե կարող ես, պղինձներն ու մսերը տար.
Ու ոռնացին, մռնչացին, վայնասուճնով, աղաղակով,
Հարձակվեցին Դավթի վրա—սրով, քարով ու մահակով...

Ու զարկեցին կրակ կտրած հսկա դեներն արյունախում,
Ու զարկեցին կրակ կտրած, կորած փոշում, թանձր մըլուում.
Բայց Դավիթը պիրկ ոլորեց հաստ թևերը հակադարձան:
Ճոսպանն եղավ հազար կտոր, կտորները գետին ընկան:

Յանդնեց Դավիթն ինչպես մթին ամպեր հազած սարը Գրգուռ,
Շողացնելով աչքերի մեջ կայծակների խուրձերը հուր,
Բաշեց կողքից կեռ դանակը, վրա պրծավ, բռնեց, ջարդեց—
Փոքրիկ դեկի մինչև միջնակ, մինչև գեղ ամենամեծ:—

Քերթեց նրանց ոտքից գլուխ: Պղինձն ու մորթն առավ մի մի,
Ուսին զցեց, իջավ դյուղը, գնաց ուղիղ բակը ժամի,
Կանչեց, ասաց.— Ումից որ ես տարել էի ճաշ ու պղինձ՝
Առանց վախի թող մոտենա, ստանա իր գինը ինձնից:

Պղինձները տվեց նրան, հարիսա էր առել որից.
Կաշին՝ նրանց, որոնք տրեխ չէին հազել ծնված մորից.
Տվեց բոլորն, շտապ վազեց, կորավ Սասնա բարձրը սարում,
Տեսավ, հեռվից, որ, ծանրաքայլ Չենով Հովանն հաց է բերում...

ԿԱՎԹԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ.

Կանգնեց Դավիթն այն ժամանակ Մսրա ամբողջ զորքի առաջ՝
Մբբեց, ապա պատյան դրեց թուր-Կայծակին մեծաշառնչ,
Արեւի պէս րացվեց, փայլեց կանգնած զորքի ծովի վրա,
Ասաց.—կյանք եմ բաշխում ես ձեզ, վերադարձեք հողը Մսրա։

Ընկավ Մսրա թագավորը։ Էլ չեն լինի կռիվ, թալան։
Հայրական ձեր երգիկներն թող ծուխն ելնի պալան-պալան.
Պառավ մայրերն ու հայրերը՝ սրբեն իրենց արցունքը տաք,
Խաղաղությո՛ւն թող ծալալվի ձեր սրտի մեջ, ձեր հարկի տակ։

Կյանք եմ բաշխում ձեր աղջկանց, որ մնում են դեռ մուրազին,
Ձեր հարսներին, որ կարոտով ուղասում են քողն երեսին։
Ձեր արտերին, ձեր հանգերին, ձեր սարերին, ծովերին ձեր,
Այսօրվանից ազատ են միշտ Մսրա ամեն մանուկ ու ծեր։

Ուրախացավ զորքը Մսրա, թնդաց ինչպէս ծովն ալեծուխի.
Խնդաց դաշտի ամեն մի ծեղն, ամեն մի հարթն, ամեն մի դուր-
— Ապրի՛ Դավիթն ազատարար, ապրի՛ Սասնա հերոսն հզոր,
Որ բոլորիս արեւ բաշխեց, ուրախություն տվեց այսօր։

Խնդաց Դավիթն իր նժույգին, բարձր կանչեց,— Դնաք բարով։
Թող կյանքն ամեն մեկիս տանի իրեն տված ճանապարհով,
Ասաց, քեց, ու նրա հետ քեց քեռի Թորոսը քաջ,
Մինչև Սասնա Անդոկ սարի Կաթնաղբյուրը քաղցրակարկաչ։

Անդոկ սարի գլխից տեսան, որ դեպի սարն, ինչպէս հեղեղ.
Հսկայական մի թափոր է հեղեղվում խենթ ու խելահեղ,
Ու բոլորի առաջն ընկած Ձենով Հովանը վիթխարի,
Քաշում է ծով ժողովրդին դեպի լանջը Անդոկ սարի։

Դաշտերով մեկ տարածվում է զուռնայի զիւ ձայնը բարակ,
Հօկայական դհոլների ծանրը թնդունը ներդաշնակ,
Գուսանները երգերն ուրախ, օրոնք եզան գանգերից վար
Ձգվող յոթը լարերից պիրի—դաշնակում են ուրախ ու վառ:

Հնչում է երգն աղջիկների մարգարիտե շուրթերից ալ,
Խնչպես լեռան աղբյուրները, որ հոսում են մեղմ ու զուլալ,
Կորյուն, աչեղ տղաների, որոնց հրե հայացքներում
Սիրո բոցն է լոցկլտում վառ, ինչպես հուրը քուրաներում:

Ծերուկները ճերմակգլուխ, ուժ են տալիս թույլ ոտքերին,
Հենված իրենց գլուխը կեռ ու օստաշատ ճոկաններին,
Պառավ կանայք, ջահել հարսներ և մանուկներ բոց ու բորբոք՝
Խաղով, տաղով շտապում են դեպի բարձրը սարը Անդոկ:

Դեպի սարն են դիմում անհ հազար-հազար ճերմակմորուս,
Հազար-հազար լիսամորուս, թուխ կորյուններ արեգնալույս,
Հազար-հազար նախ ու նանե, հազար-հազար սիրուն կանայք,
Հազար-հազար սիրուն աղջիկ ու տղաներ դեռ անպսակ:

Հազար-հազար նոր նորածին — մոր մեջքերին ամուր կպած,
Հազար-հազար հարս չխոսկան, դեմքը կարմիր քողով ծածկած,
Հազար-հազար նորապսակ՝ դրած քոլով և արախչի,
Հազար-հազար մաճկալ մշակ, հոտաղ, ջուլհակ ու նախընչի:

Դալիս են ու անվերջ դալիս սարից պոկված հեղեղի պես,
Ծաղիկներով, պսակներով դարդարված ու արեւեղատ:
Դավիթն ասաց.— Քեռի թորոս, մեր ծռերին նայիր, հապա,
Դեպի մեզ են գալիս, գլտեմ, բռնած քուս, քար ու կապան:

Քեռի թորոսն հեծավ իր ձին, քչեց դեպի երթը հոսուն,
Ասաց.— Հովան, էլ մարդ չկամ, հավաքել ես ամբողջ Սասուն,
— Հավաքել եմ, հավաքել եմ, թնդաց Ձենով Հովանն անահ,
Դավիթն ուր է, Դավիթն բեր, թող Ժողովուրդը ուրախանա...

Ու ծովացած Ժողովուրդը—եկած հասած սարահարթին,
Արձագանքեց որոտածայն.— Մենք ուզում ենք տեսնել Դավթին.
Մենք ուզում ենք տեսնել Դավթին, ուր է, թող գա, խոսի՝ մեզ հետ՝
Դավիթ, Դավիթ, ու թնդում են ամեն քարափ ու արահետ:

Նշան արավ քեռի թորոսն, ու Դավիթը եկավ առաջ,
Վեհատեսիլ, պայծառատես, գվարթասիրտ, զինաշառաչ.
Ցոլաց Քուռկիկ-Ջալալին քաջ, սաղավարտը ցոլաց Դավթի,
Խնչպես արեն է ճառագում սարի լանջին կպած բերդի:

Նրա խոշոր թուլն աչքերում, թավ հոնքերի աղեղի տակ,
Խաղում էին ժպիտները հանց արևի շողերը տաք,
Գանգուրածածկ ու գեղեցիկ լայն ճակատը զուսատ էր քիչ,
Հոգնության մեջ ցուցում էր հաղթության հուրը ամօքիչ:

Եկավ կանգնեց նա մոտեմոտ ու բարեկեց ժիր ու զվարթ:
Ձենով Հովանն աղաղակեց.— Տե՛ր, քո փառքը թող լինի շատ:
Այա ուրախ, աչքումն արցունք, դիմեց իրեն՝ հերոս Դավթին.
— Դավթ, որդի, մի՛ բանի խոսք ասա Սասնա ժողովրդին:—

Քեզ համար ծերն աղոթում էր, աղոթում էր պառավը միշտ,
Ջահերների սիրտն ընկել էր սև կասկած ու սարսափ ու վիշտ:
Լալիս էր ողջ ժողովուրդը, թե մի գուցե Մելիքը բեզ...
Ի՞նչ իմանաս, մարդու գլխով հազար ժիրք էր անցնում այսպես:

Ժպտաց Դավթն, ապա ասաց.— Իմ հորեղբայր, իմ հերահոտ,
Քանի դեռ կամ՝ ժողովուրդը չի տեսնելու աղետ ու բոթ,
Ու դառնալով ծով ամբոխին, կանչեց,— Լռե՛ք, Սասնա ծռե՛ր,
Էլ ոչ մի թաղ ու թագավոր չի կարող ձեր մեջքը ծռել:

Ընկավ Մելիքն, — աղատ եք դուք և ժողովուրդն ամբողջ Մարա,
Էլ այսօրից՝ և ոչ մեկըդ սուր չեք քաշի իրար վրա.
Թագավորն էր ուժով բերել լցրել Սասունն իր ծով զորքին,
Ուր չկա թագ ու թագավոր՝ ժողովուրդն է տերն իր կյանքին:

Դարձեք հիմա տները ձեր, վա՛ր վարեցեք, հունձ հնձեցեք,
Կն՛կ կախեցեք, շեղձ հանեցեք, խն՛ղ կանչեցեք, տան՛ղ հնչեցեք,
Ձերն է հողը, ձերն է ջուրը, ձերն է հացը սուրբ ու արդար,—
Սասնա աշխարհը աղատ է — այսօրվանից դարեհդար:

ԴԱՎԻԹՆ ՈՒ ԴՋԲՍՐՆԵՐԸ

Եկան Մոկոսից երկու գղրար հագած մազոտ հագո արա,
Գլուխներին ճերմակ քոլոզ, քոլոզներին փուշի կապած.
Խարուկ էին հագել նրանք, խարուկ, որոնց չէր կտրտի
Արոսոս սարել սև կայծքարը — նման ամուր սուր երկաթի:

Վերի հողում նստել էին Ջենով Հովան, Թորոս Գեռին,
Պարոն Աստղիկ, Վերապը Ճող, Վախկոտ Վերգոն, Ճնճղափորին,
Եվ ինչպես մի վիթխարի սար, բլուրների հենց կենտրոնում,
Կորյուն, աչեղ Մհերի հետ՝ Դավիթն ուրախ խաղ էր անում:

Գղրարները վար բերեցին անեղները փոշոտ ուսից,
Ջահելը՝ Թուխ Թեթև մի ամպ, ծերը՝ ինչպես ճերմակ լուսին.
Ու կանգնեցին նրանց առաջ, ասես չքնաղ մի երազում.
Մինչ Դավիթը ասաց. — Բարո՞ւմ, բարեկամներ, ի՞նչ կա Մոկոսում:—

Ի՞նչ կա Մոկոսում... մի հարցրնի, մի հարցրնի, Դավիթ ախպե՛ր,
Բո քաջության ձայնն հասել է մինչև Մոկոս բարձր սարեր,
Բո անունն են տալիս ամենքն — աղջիկ, տղա և հարսը նոր,
Մեր ծերերը — տարիների հոգսերի տակ մեջքները կոր:—

Բոլորի մի աչքում արցունք ու մի աչքում ուրախություն,
Սպասում են քաջիդ, մի օր, որ գա մահին Մոկաց մեծ տուն,
Որ գա, ման գա, տեսնի, զգա ժողովրդի ցավը ամեն, —
Որ լըրացած իշխանները ժողովրդին էլ չքամեն:—

Ա՛խ, ո՞րն ասենք, Դավիթ ախպեր, հագած կապած զենք ու զրահ,
Մոկաց բոլոր իշխանները ծանրանում են դեռ մեղ վրա.
Զիե՛ր հեծած, տուն են մտնում, քաշում են հարս ու աղջիկներ,
Զարկում նախրից, հոտից ջոկում հորթ ու ոչխարն ամենագեր:—

Քալիս գոռող կանգնում են մեր այգիները, կալի միջին,
Գալիս մտնում զոմ ու մարագ, տանում խոտն ու հարդը վերջին,
Գալիս ցցվում նորապսակ հողի առաջ խեղճ տղայի,
Թե առաջին գիշերը՝ քո կինը... պլտի մեծիս նայի...

Ե՛րբ պլտի մենք ազատվենք հայ իշխանադուռն պարապներից,
Հազար անգամ վատ են նրանք թաթառները, արաքները...
Եվ արցունքը հազիվ դադարձ՝ զարկեց ուժգին լարերին պլրի,
Ամեն զարկում դնելով լաց ու պայքարի կատաղի կերք:

«Զարկում են մեր կամը, Դավիթ,
Հանում են մեր շամը, Դավիթ,
Անօրեն են, խիստ անօրեն,
Տանում են մեր մամը, Դավիթ...»:

Զարկում են մեր ամբը, Դավիթ,
Կտրում են մեր վարդը, Դավիթ,
Անօրեն են, խիստ անօրեն,
Արյուն է մեր դամը, Դավիթ...»:

Դղբերների լացող երգից Դավիթի աչքերն արցունքեցին:
Ասաց.— Թորոս, պատրաստիր շուտ Թուր Կայծակին, Հրեդեն ձին:
Ու բերեցին Հրեդեն ձին, Թուր Կայծակին, դենք ու զրահ,
Ոտքը դրեց ասպանդակին, կանգնեց Մոկաց սարի վրա:

Մարից ներքև ձգվում էին Մոկաց ձորերը կանաչած,
Մոկաց անծայր այգիները, կապույտ ու շեկ մշուշ հադած,
Ու գլուղները մոտ ու հեռու, ձմռան ցրտին, ամռան տապին,
Որոնք, ինչպես արծավի բույն, կանգնել են ժայռ ու քարափին:

Կանչեց Դավիթն Արտոս սարից, ու թնդացին հզոր ու զոռ,
Ողջ սարերը բարձրաբարձիկ, ողջ ձորերը անդնդախոր.
Դողաց տունը հազարաշեն, և սյուներից, պատերից ցած,—
Հողը, ինչպես սրսուռ ցորեն՝ ցլիքներից վար սարսռաց:—

— Է՛յ, վռշիկներ, մի վախենաք, Դավիթն եմ ես, Մասնա տնից.
Ելեք, կանգներ ոտքի վրա, ելեք շտապ խորը քնից.
Ո՛ւր են ձեր չար իշխանները. մահ չունեին՝ բերել եմ մահ.
Ասացեք թող շուտ հավաքվեն, ներկայանան Դավիթին հիմա...

Հազար գլուղից ելան շտապ ու գլմեցին սարը դեպի,
Տեսան՝ հսկա մի տղամարդ՝ գլուխն ի մեջ ճերմակ ամպի՝
Խրխնջում ու վնչում է ձին, դովում է խոլ ու ահադնած,
Դողդողում է սմբակի տակ սարը հազիվ ոտքի կանգնած:

Փուր Կայծակին շողշողում է ինչպես ամպից խփված կայծակ,
Փողփողում է սաղավարտը, ինչպես արեն արևածագ,
Քառասուն փաթ ոսկի գոտին՝ լույս է սփռում ծով մշուշում,—
Ոսկեզօծած անդին կաբեն, անդին կաբեն սև արբեշում:

—Ո՞րտեղ են ձեր իշխանները, ասաց Դավիթը բարկացկոտ,—
Քնչո՞ւ ոչ ոք մոտ չի դալիս, այդ ինչո՞ւ չեն դալիս ինձ մոտ
—Իշխանները, Դավիթ ավալեր, քեֆ են անում, քնած են կամ,
Քեֆն էլ որ կա՝ մի անգամ չէ, ո՞վ գիտե թե քանի անգամ...

Ասպանդակեց Դավիթն իր ձին, Մոկսի ամեն մի բերդ մտավ,
Մի վայրկյանում հարյուր հոգի արյունաբուր իշխան գտավ,
Որին հանեց քեֆի միջից, որին գտավ քնած տեղում,
Որին հանեց բերդի բուրդից, որին գտավ մուկ նկուղում:

Որին հանեց թոնրի միջից, որին գտավ կարասում մեծ,
Որին հանեց խսրի միջից, որին գտավ ախոռի մեջ,
Որին հանեց ցան ամրոցից, որին խավար ծակ ու ծուկից,
Որին հարդից, խոտի դեղից, որին կնչա փեշի տակից:

Հանեց տարավ լցրեց մի մեծ բերդի զնդան մուկ ու ցրտին,
Ու դառնալով իրա շուրջը ծփացող ծով ժողովրդին.
Ասաց—էլ չար իշխանները լույս չեն տեսնի այս աշխարհում,
Ազատ եք դուք ձեր հարկի տակ, ձեր այգու մեջ, ձեր սարերում:

Նրանց հողը, դանձը ամբողջ ձերն է այժմ և հավիտյան,
Ձեր վաստակն են խել նրանք, ապրել կյանքում առատության.
Իշխանների անունն իսպառ ջնջենք միջից ժողովրդի.
Հիմա գնանք այդ խոզերին՝ ուժը ցույց տանք Սասնա Դավիթի....

ԴԱՎԻԹՆ ՈՒ ԳՅՈՐԳԻՆ

Քառասուն օր, որսի ետնեն, վազվըղելով բռաքարից,
Դավիթն հողնած և ուժասպառ, ներքև իջավ Անդոկ սարից՝
Մտավ բերդի նախշուն հողեն, հաց էլ չառավ բերանն իրա,
Քնեց յսթն օր, յոթը գիշեր՝ անշարժ ընկած մեջքի վրա:

Քնեց ու մի երազ տեսավ:— Իբրև հեռու Վրաստանում,
Քառասուն դև եկել ահա, լցվել ձորի մեծ զնգանում,
Պաշարել են Վրաց հսկա Գյորգիի բերդը բարակերտ,
Ու կռիվ է մղում Գյորգին՝ քառասուն բաջ դեբերի հետ:

Ինքն ուզում է գնալ օգնել, բայց չի պոկվում պառկած տեղից:
Մինչդեռ Գյորգին զրկվում է վերջին նետից ու աղեղից,
Ու զարկում են դեբերն անվերջ, բաբան գցում, նիզակ նետում,
Ու մեռնում է ահա Գյորգին մեն ու մենակ իրեն բերդում:

Ճշաց Դավիթն ու վեր թռավ ծանր ու տանջող երազից այդ,
Նստեց, թաղված մտքերի մեջ, կասկածների մեջ չար ու վատ:
Մտավ քեռի Թորոսն այնժամ, տեսավ Դավթին գունատ ու լուռ,
Ժպտաց, ասավ.— է՞ր ես թթվել, է՞ր ես տխուր, Մասունցի ծուռ:

— Երնդ տեսա, քեռի Թորոս:— Ու պատմեց իր երազը չար,
Գնա Քուռկիկ-Ջալալին բեր, և ինձ իսկույն Վրաստան տար:
Հեծան իրենց նժուլգները, կուռ կապեցին գենք ու զրահ,
Արևը թիզ չբարձրացած՝ ելան Վրաց սարի վրա:

— Էհե՛յ, Գյորգի, ո՞ր ես, Գյորգի, ինչ ես անում, ընկեր-ախպեր,
Դավիթն եմ ես, մեր անցկացրած լավ օրերը քո միտը բեր:

Անցավ Դավթի ձայնը թնդուն Վրաց երկրի մի ծայրից ծայր,

— Հայ, հայ, ասավ հսկա Գյորգին, — Դավիթն է դա իմ խաչեղբայր:

— Դավիթ, բարձի, կանչեց Գյորգին, — մինչև քո մի աչքը թարթես,
Վրաց կանաչ սարի գլխին կհանդիպի եղբայրդ քեզ:

Մինչև Դավիթն աչքը թարթեց, տեսավ կանգնեց իրեն առաջ,
Մի գեղեցիկ երիտասարդ, հաղթանդամ ու զինաշուռաչ:

Արծըվենի բլիթն իջնում էր կեռ բեխերին նրա բարակ,
Դեղանկար ու կարմրաշող շրթունքներին կարմիր կրակ-
Սև աչքերը՝ սև էին քանց հազար գիշեր առած ի մի,
Դեմքն սպիտակ ու թափանցիկ—նման նրբին մեղրամոմի:

Հորդ մագերը—ջրվեժի պես, սևավայլուն ու սևահուր,
Ոլոր-ոլոր թափվում էին, իջնում մինչև ուտերը կուռ,
Ոսկեգեղին սաղավարտը, ամուր նստած գլխի վրա,—
Արեգակի ճառագումն էր բարձրագագաթ սարի վրա:

Ու դեմ ու դեմ ելան սիրով երկու հսկա վիթխարի սար,
Որոնց նույն հողմն է ծեծել միշտ, նույն արևն է արևել վառ,
Որոնց բախտը նույնն է եղել. վիշտը որոնց եղել է նույն.
Բաժանել են միշտ իրար հետ—թե խնդություն, թե դառնություն:

Համբուրեցին նրանք իրար, զրկախառնված ու կաթոգին,
Համբուլյի մեջ դրած իրենց ամբողջ ուժը, սիրտն ու հոգին,
Մեկը մեկի թևն արյունեց, ու խմեցին, խաչաձևված,
Ուրախության արցունքն աչքում՝ այն ժամանակ Դավիթն ասաց:

— Դավ է նյութում կինը հաճախ, դավ է նյութում եղբայրն եղորոք՝
Դեմ է գնում հայրը որդուն, որդին դեմ է գնում իր հոր.
Բայց՝ երկուսիս աղն ու հացը, մեր երկուսիս սերը վիա,
Արևի տակ, լավ ընկերից—թանկ-թանկազին ոչինչ չկա:—

Ի՞նչ լավ է, որ աչքիս առաջ քեզ քաջառողջ եմ տեսնում ես,
Երազ էի տեսել ես վառ... Մեր Թորոսը կպատմի քեզ:
Խնդաց Գյորգին, երբ որ լսեց, ապա ասաց.—Դավիթ ախպեր,
Մեզ իրարից չի բաժանի ոչ մի չար սիրտ, ոչ մի սև ձեռ:—

Իսկ այժմ դու և սիրելի Դեռի Թորոսը պատվական,
Իմ աչքի լույս, իմ թանկազին, իմ հյուրերն եք անդուգական.
Այսպիսի բախտ ով կտար ինձ, նույնիսկ չքնաղ մի երագում,
Դե, քեցեք, կը պատահի՝ մի օր էլ ես կգամ Սասուն:

Ու քեցին երեք հսկա ձիերն իրենց քառաորդով,
Վրաց բարձր սարից իջան, արագ, ինչպես շանթ ու որոտ.
Ու շրկամորթ եղնիկների մի մեծ երամ առաջն արած՝
Հաղթ ուտերին երեք արծիվ՝ հասան Բարձր Բերդը Վրաց:

Ու գիլ գնաց, անցավ լուրը—Վրաց երկրի մի ծայրից ծայր՝
Թե՛ եկել է քաջ Գյորգիի Սասնա Դավիթը լաչեղբայր.
Եվ, սկսած Բարձր Բերդից, խրճիթներից մոտ ու հեռուն,
Կախեթի թունդ գինին՝ լցվեց ուրախարար բաժակներում:

ԴԱՎԹԻ ՍԵՐԸ

Կապույտ Բերդից եկան հապճեպ, երկու գուտան ձերմականեր,
Սասնա հզոր Մայր-Աթոռը, որ ձգվում էր երկինքն ի վեր,
Մտան բերդը, և լուսեցին քաջըն Դավթին սեր ու ողջույն,
Նվ լարեցին յոթլարանի քնարները քաղցրահնչուն —

Շվ նվագեց սրտասարսուռ Մեր Գուտանը առաջնահերթ,
Որ նման էր ձյունը գլխին մի դարևոր կիսավեր բերդ,
Նվագակեց ընկերը դեռ լուռ նայում էր Դավթին առյուծ
Շվ հիացքը թափանցում էր լույսի նման մինչ ուղն ու ծուծ:

— Դավթի, Սասնա քաջ ազատիչ, պայծառ մնա արևը վառ,
Մեղրադեպի ջրի նման միշտ անցամաք ու միշտ երկար.
ձախ մի պահ հալեորիս, թե իմ այս երգը ականջես՝
Այնքան պիտի փոխվես դու, որ հենց ինքրդ քեզ չճանաչես:

Ու դարկելով սրտադրավ իր քնարին յոթլարանի՝
Աղբյուրի պես թափեց խոսքը մարդարտահոս իր բերանի.
Սրեց Դավթին ականջ և ուշք ու պարփակվեց ինքը իր մեջ,
Փայլի նման կախվեց երգի զուլալ գետին հնչուն ու պերճ:—

— Թե Խանդուծի անոնն ասեմ՝ հասել է մինչ Հինդ ու Սաթայ.
Մարդու սրտի սև գիշերին նրա անունն արև կտա.
Թե Խանդուծի համբալն ասեմ՝ ով ուժ ունի նրա նման.
Նրա հզոր բազկի առաջ չի կանգնի ոչ մի փանկան:

Թե Խանդուծի հասակն ասեմ՝ դրախտային դալար նոճին,—
Ծծեքն երկու քուլա բամբակ՝ արեճնոդ ծոցի միջին.
Թե Խանդուծի շուրթերն ասեմ՝ նոռենի են, մեղրածորան,
Թշերն երկու կարմիր խնձոր՝ ոսկուց մեծ սև խալը վրան:—

Թե Խանդուծի աչքերն ասեմ՝ երկու ծով են շողով խառնած,
Թարթիչները քարին դիպչեն՝ քարը՝ փափուկ մոմ կդառնա.
Թե Խանդուծի ունքերն ասեմ՝ ծխածան են կամար ու կեռ,
Դեմքը ձերմակ Մարաթուկի-գլխի ձերմակ ձյունից էլ դեռ:—

Թե խանդութի ճակատն ասեմ՝ դաշտի նման մաքուր ու լայն,
Կրունկին են իջնում ծամերն առլի գունակ ալեծածան,
Թե խանդութի զիք վիզն ասեմ՝ ավելի է երկու թղից,
Նրա շուրթերը բարակ են արեգակի շողշող մաղից։—

Թե խանդութի ձեռքերն ասեմ՝ հոտավետ են շուշանը քանց,
Ռանգով տաշած եղունգները ապակու պես լուսաթափանց,
Թե խանդութի ակռեքն ասեմ՝ շարիշար են սադափ ու լալ,
Շաքար լեզուն՝ սարից իջնող առլի կարկաչն ունի գուլալ։

Թե խանդութի բերանն ասեմ՝ աղբյուրակ է արծաթ ջրի՛,
Զինմաչինի կտր կթխա՝ հնուք գինու մեղրածորի,
Թե խանդութի մարմինն ասեմ՝ փափուկ է քանց զգած բամբակ,
Խանդութ խաթուն—մեկ է, Դա՛վիթ, մեկ է որ կա—արևի տակ...

Երբ գուսանը վերջացրեց իր թուլիչ գուլքը սրտասալսուո՛ւ՝
Կանգնեց ոտքի Դավիթ հսկան, սիրտը ուրախ, աչքը տխուր,
Մոտեցավ և ջերմ համբուրեց գուսաններին ձեռմակահեր,
Առավ մեկից գաթակըղիչ քնարը, որ հնչում էր դեռ

Մինչև հոգու խորքն արեկո՞ծ նվազեց և նրանց ասավ,—
— Փոխվե՛ց Դավիթն այսօրվանից, Դավիթն ուրիշ աշխարհ տեսավ,
Սասնա Դավթի սիրտը որ կար՝ քարից, բերդից ամուր էր, փակ,
Դուք բաց արիք ու քանդեցիք — նրա հիմքերը — անթիակ։—

Սասնա Դավթի սիրտը որ կար՝ խաղաղ էր, դուք կախարդեցիք,—
Գցեցիք կաթ — սրտին մերան, սիրտըս մեկեն մակարդեցիք,
Սասնա Դավթի սիրտը որ կար՝ գուլալ էր քանց մանուկն անմեղ,
Կավ ու փոշի, ցեխ խառնեցիք ու զարձրիք զարնան հեղեղ։

Սասնա Դավթի սիրտը որ կար՝ անարատ էր մերկ ի մորեն,
Ուշք ու մխտըս առաք այսօր ու գցեցիք սարեն, ձորեն,
Սասնա Դավթի սիրտը որ կար՝ պարզ երկինք էր, պայծառ արև,
Դուք սև ամպեր կուտակեցիք նրա անամպ գլխի վերև։

Բարձր եկաք մեր աշխարհը, բարձր եկաք, հազար բարի,
Թող ձեր կյանքի ճանապարհը Մեղրագետի պես երկարի,
Ի՞նչ կրակ էր, որ գցեցիք ջահել Դավթի սիրտը սերսուփ,
Եկեք, ի սեր իմ խանդութի՝ համբուրեմ ձեր ճակատը սուրբ։—

Առաց, կապեց գենք ու զրահ, ելավ հեծավ իր նժույգ ձին,
Կտրեց Սահնա սարերն անդիկ, ինչպես հզոր Թուր Կայծակին,
Միտքը՝ վրդով, սիրտը՝ կարոտ, սիրով բացված աչքը՝ արթուն,
Կանգնեց Կապույտ Բերդի առաջ—փահլանալի խանդութ խաթուն...

ՍԵՐՈՒ ԽԵՉՈՐ

Ամպերի մեջ կորած բարձրիկ Կապույտ Բերդի դռան առաջ
Յոթը տարի կանգնել էին փահլեաններ քառասուն քաջ,
Բայց խանդուկը փակած ամուր դուռ ու դարբասն իրա սրտի՝
Հուր կարոտով գալստյանն էր սղասում քաջ Սասնա Դավթի:

Քեռի Թորոսն ասաց.— Դավիթ, հիմի պիտի ուսակվես դուն,
Խանդուկ խաթունն յոթը տարի սղասում է Կապույտ Բերդում:
Սղասում է քեզ ամբողջ օր,— գիշերին, թե լուսաբացին,
Գնա՛, Իսկ ես՝ կհասնեմ քեզ: Ու Դավիթը հեծավ իր ձին:

Գնաց համբավն աշխարհով մեկ, զընդաց մեծ Բերդը Կապույտ,
Խանդուկ խաթունն խնձորն առավ ու զիմեց դեպի լուսամուտ,
Որի առաջ, յոթը տարի, մնում էին սիրո խոսքի
Քառասուն քաջ փահլեաններ, հազած գեներ ու զրահ ոսկի:

Բերդի ամպից դուրս եկավ նա, սիրտը կարոտ, աչքը անքուն,
Փռվեց նրա շողքն ամենուր, ինչպես արեն է ճառագում,
Խոնքվեցին գլխակորույս կտրիճները իրար անցած,
Միայն Դավիթն է անհողող՝ ձիու իրա արձանացած: —

Մի գեղեցիկ աժգահա մարդ, գանգուրները լայն ճակատին,
Կայծակնաշող սև աչքերը տալիս էին հուրհրատին,
Եվ իջնում էր դեմքից նրա մի առնական արծըվաքիթ
Սև բեխերի նորածիրին, շրթունքներին ալ-մարգարիտ:

Ու խանդուկի սիրտը դողաց, աչքը շողաց Դավթի վրա.
Զգեց ձյունից էլ ճեփճեթմալ, յուզից փափուկ ձերքը՝ իրա,
Քառասուն քաջ տղամարդու հայացքի տակ սև ու մթին՝
Սիրտը դրած խնձորի մեջ—սիրո խնձոր գարկեց Դավթին:

Քարձրացալ մի խուլ հառաչանք, դժգոհության մի դեղին բոց,
Ու բոլորի կրծքերի տակ դալարվեց սև նախանձը օձ.
Կատաղության հորձանքն եռաց, ինչպես դարնան հեղեղը մուլթ,
Մի աչքից աչք, մի սրտից սիրտ, ու բոց դարձած Ֆի շուրթից շուրթ։

— Յոթը տարի քառասուն քաջ փահլեաններ այստեղ նստած,
Միւտը կոտոր, միտքը մոլոր, աչք և ունքը արցունքով թաց,
Մեզ չափեց նույնիսկ մի խոսք, չհանեց ոչ մի ձեն ու ձուն,
Այնինչ՝ սիրո խնձոր դարկեց շաղգամակեր ծուռ սասունցուն։

Խանդութ Խաթունն առաջ եկալ, ասաց.— Լսեք, փահլեաններ.
Սրբո խնձոր—սիրած մարդուն։ Պայծառ պահեք սրտերը ձեր.
Դուր բոլորըդ հյուրերն եք իմ, վեր բարձրացե՛ք՝ ուտենք խմենք,
Յոթը օր և յոթը գիշեր—գինու բաժակ պիտի քամենք։

Եվ, կոչունքի ուրախ ձայնից ցնծաց, թնդաց Բերդը Կապույտ,
Ամեն մեկի առաջ կար մի գեր ոչխարի խարկված բուռ,
Ամեն մեկի առաջ կար մի հողե քասա մեծ, թրծրված,
Ամեն մեկի առաջ կար մի փրփրուն դեղ—Տարոնա հաց։

Ու մեկ արած խոսքը իրենց՝ փահլեանները ահալլալ՝
Հանել էին զրահ ու զենք, կրծքակալները զեղնափալ,
Պահել երկար սեղանի տակ իրենց լայնշեղբ թրերն ամեն,
Որ երբ Դավիթը արբենա՝ դարկեն, գլուխը թռցնեն։

Փահլեանները ամբողջ օր լափում էին, լիմում, հարբում,
Սեղանի շուրջբոլորն անվերջ գինի ու միս ու հաց թափում.
Հրում էին իրար կոպիտ, աղաղակում ձայնով խոպոտ,
Եվ աղաղակը հասնում էր մինչև բերդի զազալթն ամպոտ։

Եկալ Դավիթն ու լուռ նստեց մեծ սեղանի ծայրը վերի,
Տեսալ կիսկեր պատառները—նման երկար գերանների,
Քասաները կիսակոտոր, թափված գինին, բուրդերը խարկ,
Փրփուր հացի փըշրանքները տրորվում են ոտքերի տակ։

Տեսալ նրանց կողերից կախ կային անշեղբ սև պատյաններ,
Եվ ինչո՞ւ են նրանք այսօր իրենց բոլոր թրերն հանել.
Թագավիկի սուրն ի՞նչ մոտն է միշտ, ասում էր նա ու մտմտում.
Ու կասկածի օձը սողաց նրա անահ ու մեծ սրտում։

Եկալ կորած քրտիների մեջ Քեռի Թորոսն իսկույն լեթ,
Ասաց.—Արժի՛կ, գո՞րծ ես բռնել դու քառասուն ագռավի հետ
Ու լուռ նստեց սեղանի մոտ, Դավիթի կողքին զգաստ, արթուն.
Զգալով մի չար դավի հոտ այդ խառնամած մթնոլորտում։

Դավիթն առավ երկու քասա, քաշեց գլուխն ումպերով մեծ,
Ապա դարձավ և Խանդուբի հին ծառային հրամայեց.
— Հավաքիր շատ շուրջը թողնված հացի փշրանքը ահադին,
Հացը, որ կա՝ մեղք է ու սուրբ՝ պետք է՝ թողնել ոտքի տակին։

Նորից լամեց յոթը քասա, ինչպես ջրի կում հասարակ,
Գլուխն զգաց պտտովում է, աչքը պտտում մուժը բարակ,
Հոգնուժթուլն ու նինջը ահա, ծանրածանրը ժայռերի պես,
Դեպի վար են բերում նրա կրոն գլուխը դանդաղեղ։

Քեռի Թորոսը լսում է սուր շշուռներ շնչակտուր...
Հանկարծ Դավիթն ձայն է տալիս. — Ի՞նչ ես քնում, սասուկցի ծուռ,
Երկու անգամ տասը հոգի եկան շուրջը շարժվեցին չար.
Սպասում, որ դու քնեիր և գլուխը բերեին վար։

Բացեց Դավիթն ընդարձացած կարմիր աչքերն արծրվային.
— Այս ճնճուղներն, ասավ, — պիտի լինձ, արծրվիս մատենն մահին.
Ելավ, ձգվեց իր աներեր սարի նման հաղթ հասակով,
Գնաց դեպի փահլեաններն, ապա գննեց իր շուրջն ու քով։

Տեսավ ճերմակ սուփրի ներքո, խառնիխուռն սեղանի տակ,
Պառկել էին քառասուն թուր մերկամարմին ու փայտառակ.
Կճեց Դավիթն ու քառասուն թրերն առավ լայնշեղր ու մեծ,
Արավ մի խուրձ, ավեց ծնկան, ցողունների նման ջարդեց։

— Վեր առ, ասաց նա ծառային, — լցրու մեջը մի մեծ պարկի,
Դրանք ընտիր պողպատից են և Սասունում շատ են հարդի.
Խարդալի մարդու ձեռքին՝ կյանքում՝ սուրը երբեք սուր չի մնալ.
Այն պատվական թրերից ես շինել կտամ ձերերին նալ։

Իսկ ձեզ, ասաց Դավիթ հսկան, ապուշ կտրած կտրիճներին, —
Քանի շուտ է, լավ կանեք, որ տեր դառնաք ձեր գլուխներին.
Ու նրա բարի, ահադարձուր հայացքի տակ կայծակնադեղ,
Նույն վայրկյանին՝ քառասուն մարդ անհետացան գոլորշու պես։

ԴԱՎԹԻ ՈՒ ՀԱՄԱԳԱՅԻ ԵՌԻՎԸ

Տոսպա ծովից մինչև Նլաթ, մինչև բարձր Լաթարա քերծ,
Մինչև կապույտ Նազուկա ծով, Սիփանա սարը բարձրարեքծ,
Մինչև չքնաղ Նաչլըվա լիճ, Բլեջանի բերդը ամուր,
Իշխում էր դե Համզա հսկան, Համզա իշխանը մարդակուլ:

Ուներ նա խիստ ահեղի դեմք, քարայրի պես մի մեծ բերան,
Արյունախառն պղտոր աչքեր, ու հաստ թևեր, ինչպես գերան,
Ամուր կռնակ, անկոտոր մեջք, երեք կանգուն բարձրը հասակ,
Ժայռի պես չոր մի մեծ գլուխ, վրան՝ դեղին թուշե թասակ:

Ու ելավ այս Համզա հսկան՝ մի թուղթ ճամբեց մեծ Կապույտ Բերդ,
Թե՛ երեք օր ձեզ ժամանակ, հաշիվ տեսեք հիմա ձեզ հետ,—
Սիրուն խանդութ ձեր խաթունին,—ձեր սեփական զենք ու զորքով,—
Հարսանեկան շնր հագցրեք, ուղարկեցեք Համզայի քով...

Առավ թուղթը դռնապանը՝ ձեր Համտուր բարձրացավ վեր,
Տվեց խոսույն խանդութի հոր, և խանդութի հայրիկը ձեր՝
Կանչեց շտապ իր աղջիկան, ճեպ-հապճեպով պատվեր տվեց,
Ասաց.— Հագվիր խառ հագուստներ, պատրաստվիր քո սնդուկը մեծ:—

Քեզ հետ պիտի ճանապարհովի մի ուժեղ խումբ լիմ զորական,—
Քեզ, աղջիկըս, կին է ուզում Նլաթ երկրի Համզա հսկան.
Շո՛ւտ պատրաստվիր, թե չէ կգա—այդ չար դեմ զորքով իրա,
Կբանդի մեր Կապույտ Բերդը, քար չի թողնի քարի վրա:

Գնաց Կիուր խանդութ խաթունն, ընկավ ծանրը մտքերի մեջ,
Հանեց մեկ-մեկ հագուստները, ու լաց ու կոծ արավ անվերջ,
—Դավիթն այնտեղ քեֆ է քաշում—սարում, ձորում որս անելով,
Իսկ ես այստեղ շվար մնամ, սիրտըս կոտոր, աչքըս լալով:

Այսպես լալիս, արցունքում էր, օրորում էր գլուխն իրա,
Երբ Դավիթը, էրեներով, ուրախ, մտավ հողեն նրա.
— Խանդութ Խաթուն, լաց ես լինում, նախ ես տեսել դու քո Դավթի,
Ո՞վ և թթու խոսք ասել քեզ, ասա, ու իմ ձեռքը զիտի:

Թե հյուր եմ ես քո հերանցը, թե փեսացու՝ ինքըդ զիտե՛ս,
Թե որ հայրդդ նեղսրտել է՝ ե՛տ կզառնամ հենց հիմի ես: .
Ասաց, զնաց զեպի դուռը, սիրտը կոտոր, աչքը խոտի,
Երբ այդ պահին մտավ Համտուն հուզումնալից ժպտներով:

— Դավիթ, ասաց ծեր Համտունը. — հա՛վատում ես քո խոսքերին.
Հյուրը որ կա՝ աստըծունն է. մեր աչքերին, մեր ունքերին.
Հաց է լինում նրա համար, կորցրել է ինքը իրան,
Որովհետև Համգա զեղ՝ կին է ուզում առնել սրան: —

Թուղթ է ճամբել Համգա զեղ — Խլաթ երկրից մեր Կապույտ Բերդ,
Հետն էլ սաստիկ սպառնալիք, ծանրը խոսքեր՝ նիդակ ու նետ, —
— Սիրուն Խանդութ Խաթունին ձեռ, հենց ձեռ երկրի զենք ու զորքով,
Հարսանեկան շնր հազցլրեք, ուղարկեցեք Համգայի քով...

Ա՛խ, քնջ Դավիթ, թեև զիտեմ, քաջ ես ինքըդ, Սասնա տանից,
Բայց չգնան, Համգան չար է, և անցել է բանը բանից.
Ջահե՛լ ես շատ. երբ էլ լինի, կգտնես մի կին նազանի, —
Իզուր պետք է կեր դառնաս դու այդ մարդակուլ զե դադանի...

Կրակ կտրած Դավիթն ասաց. — Թեկուղ լինեմ ես շան բաժնն,
Իմ Խանդութի լացի համար՝ պիտի քերթեմ նրա կաշին:
Հեծալ Բուռլիկ-Ջալալին և բռնց մինչև հողը Խլաթ,
Կանգնեց զևի երկինք ձգվող բերդի առաջ պարըսպապատ:

Կանգնեց, գոփեց, հողը դողաց. և խրխնջաց նժույզն հուրհեռ,
Գոռաց կանգնած զինվորներին — Տանն է Համգա իշխանը ձեռ.
— Տանն է, ասին կանգնածները, — ու դողացին շրթունք ու կուռ —
Դե մենք որ կանք՝ ծառաներ ենք, է՞ր ես նայում մեզ էդքան ծուռ:

Ու ներս մտավ: Մի ծանրը հոտ ծով ծավալվեց շուրջը իրա,
Համգա հսկան ճաշ էր ուտում նստած քարե քուրսու վրա:
Երբ որ աչքը Դավթին կպավ՝ էլ պատառը չգնաց ներս,
Գլխի մազերը ցցվեցին — ոգնու սուր-սուր փշերի պես:

Առաջն հուրնիկ մի հրեղեն, մեծ բաժակով ճերմակ չինի,
Վարդերանդ նուրբ ձեռնիկներով մատուցում էր ընտիր գինի,
Նայեց Դավթի թուխ աչքերին ու տեղն ու տեղ դամվեց հլու,
Ու թվաց որ սուղվեց այնտեղ—ու է՛լ երբեք չի դառնալու...

Մինչ այդ, Համդան, մեծ պատառը կուլ տալով մի մեծ ծանրությամբ՝
—Ո՞վ ես, գոռաց, —որ աշխարհից, ու մթնեց ինչ սեպնած ամպ:
—Ո՞վ եմ, ասի՞ր.—Դավիթն եմ ես, Սասնա Դավիթ են ինձ ասում,
Հյուր եմ եկել քեզ, հսկայիդ, և ահա թե ի՞նչ եմ ուզում:—

Ուզում եմ գուշդ աշարանջան ոսկեջրած, ոսկու պես խառ,
Ուզում եմ ես մի մատանի, ամբողջ ոսկուց. ակը ալմաս.
Ուզում եմ ես արծաթ քամար նշանածիս մեջքին համար,
Ուզում եմ ես ոսկե գինդեր, ոսկե գինդեր մարդարտաշար:

—Ու՞մ համար ես տանում դրանք. տնքաց Համդան դառն ու դաժան,
—Կապույտ բերդի իմ խանդութին, պատասխանեց Դավթն այնժամ:
Ու մատանին իր ձկութից հանեց Համդան անեղասաստ,
Առավ Դավիթը մատանին և անցկացրեց իր թեղ հաստ:

Առավ Դավիթը՝ մատանին, ժպտաց. ապա ասաց նրան.
— Մնաս բարով, էլ քեզանից չեմ պահանջի և ոչ մի բան.
Թե ասելու բան ունես ինձ, ասա. ինքըս նշանված մարդ.
Նշանվածը՝ անհամբեր է, իսկ հարսնացուն՝ ավելի շատ...

Մտում զսպած՝ անեղ սաստը՝ Համդան թափեց միանգամից.
Խոլ մոնչաց՝ Կռիվ անենք, կռիվ անենք, կամ քեզ, կամ ինձ:
— Կռի՛վ անենք, ասաց Դավիթն.— հազի՛ր խկույն գենք ու գրահ,
Իսկական կինն, այս աշխարհում, պիտի որ մի մանրդ ունենա...

Ու կանգնեցին բերդի առաջ, ու քաշեցին լախտերն իրենց,
Ու զարկեցին, ու զարկեցին ահագնաթափ ու մեծամեծ.
Այնքան քրտինք հոսեց նրանց մարմիններից շառաչածայն,
Որ կոշտ հողն ու փափուկ փոշին թրջըվեցին ու ցեխ դարձան:

Երբ լախտ-օղերը մնացին, նրանք՝ իրենց կուռ կողքերից
Դուրս քաշեցին հսկայաշեղդ սուր-թրերը շառաչալից.
Ու զարկեցին, ու զարկեցին այնքան սաստիկ ու մեծամեծ,
Որ շիկացած երկաթի պես վառվում էին թրերն իրենց:

Մոնչում էր հսկա Համդան, ինչպես առյուծը կատաղի,
Կորած արջան ու փոշու մեջ, քրտինքի մեջ տաք ու արի-
Գալարվում էր փղի մարմնով, գալիս ինչպես սարը հսկա.
Ասես հիմի Դավթի փոքրիկ մարմնի վրա փնւլ պիտի դաւ:

— Ժամօք է ահեղ, Ժամօք է լինում, ասին մարդիկ ահադարձուր:
— Ժամօք չէ՛, երկիրն ազատվում է չոր հրեշից այդ մարդակուլ-
Վերջին անգամ երբ որ ցոլաց Թուր-Կայծակին կայծակնակեղ:
Դե Համդայի գլուխն ընկավ իր ուսերէց կաղամբի պես:

Ընկավ նրա մարմինն ինչպես կաղնի ծառը արմատահան.
Դավիթն առավ նրա գլուխն, ու հեծավ ձին, շանթի նման
Շողաց մինչև Կապույտ Բերդը, և նիզակի վրա ցցեց—
Չար մարդակուլ դե Համդայի կոշտ ու կոպիտ գլուխը մեծ:

ԴԱՎԹԻ ԵՎ ԽԱՆԴՈՒԹԻ ՄԵՆԱՄԱՐՏԸ

Պանդուխտ խաթունն ամբողջ գիշեր սպասում էր կրակ կտրած,
Կասկածի սև օձը սրտում, միտքը խռով, աչքերը թաց,
Ծանր էր հոսում ժամանակը, ու վերջապես լույսը բացվեց,
Ալ-ժիրանի հագան Մանա ճերմակ սարերը բարձրաբերձ։—

Ելան քնից արջն ու դայլը, եղնիկները ցողաշաղալ,
Նախիրն հոսեց, հաչեց շունը, հովիվն առավ կոպալ, մախաղ,
Թուխ ամպի պես հոտը բոնեց ամեն մի քերձ ու սարակոդ,
Պլլըրոացին բակերի մեջ Մանա ճոխը աղմուկով։—

Պանդուխտ խաթունը տխրադեմ, կարոտ Դավթի քաղցր դարձին՝
Տղամարդու հագուստ հագավ, ելավ հեծավ հրեղեն ձին,
Ու իմանա՝ հանդիպել է ինչ նիզակի, գուրդի, նետի,
Գնամ, ասավ, գնամ բերեմ, դիակը իմ առյուծ Դավթի։

Քշեց, հասավ դաշտն արյունի, ու ման եկավ, միտքը մոլոր,
Սարի նման իրար թափված գիակները նայեց բոլոր,
Բայց չերեաց ոչ մի նշան, ոչ մի նշան նրա աչքին,
Ոչ քամարը, ոչ վահանը, ոչ էլ կրակ թուր Կայծակին։

Իսկ քիչ հեռվում, մի սեպ ժայռին, աներևույթ աչքից նրա—
Լուռ կանգնել էր Դավթի հսկան, ինչպես սարը սարի վրա։
Ձեռքը դրած լայն ձախտին, արձրվեցին աչքով արթուն
Տեսավ, որ մի հաղթ տղամարդ ման է գալիս կավի դաշտում։

Հնոյ, հնոյ, ասավ, կա ու չկա՝ դա իմ Պանդուխտ խաթունն է քաջ,
Եկել է ինձ որոնելու, եկել է նա ինձ ընդառաջ,
Բայց կարծելով սպանվել եմ՝ ման է գալիս աղեկտուր,
Գնամ, Դավթի, տղամարդի շոր հագածին պատասխան տուր։

Հանեց Դավիթն իր հագուստը, որսորդական շորեր հագալ,
Կեղծ թշնամու կերպար մտած, խրոխտ ձայնով առաջ եկավ:
— Դու, որին որ փնտռում ես, մայրդ, չես հանդիպի ամբողջ կյանքում,
Թե ուզում ես տեսնել նրան՝ պիտի տեսնես անյն աշխարհքում:

Ու ծիծաղեց իր մտքի մեջ: Ու խոտադեմ առաջ գնաց:
Ու կանգնեցին երկու հսկա, վիթխարի սար իրար դիմաց:
— Շատ լավ, առաց խանդութն այնժամ:— Որ անպակաս է՝ դե՛ եկ, կովենք՝
Հանել քուրջըդ, հեծիր քո ձին, կապիր վրադ դրան ու գնա՛ք:—

— Ես պատրաստ եմ, առաց Դավիթն ու ավելի ընդհուպ գնաց:
Ու կանգնեցին երկու հսկա, վիթխարի սար իրար դիմաց:
Տվին ամուր ձեռքերն իրար, ողջունեցին մեկը մեկու,
Քիչ հեռացան, եկան թափով, որպես բախվող սարեր երկու:

Դավիթն իրեն թույլ էր պահում, բայց որտեղ որ ձեռք էր գցում՝
Ջգում էր, որ վառվում է ինքն արեղակի այրող բոցում:
Պեղացնոր ջերմությունը թափանցում էր մարմինը ողջ,
Դողում, ինչպես աշնանային եղեգնիկը նուրբ ու զոդդոջ:

Մերթ կտրում էր նրան գետնից, բայց չէր գնում նրան գետին:
Մերթ ամփոփում թևքերի մեջ, ասես հուպ է տալիս պատին:
Կամբըրել էր խանդութ խաթունն, ինչպես շողուն նուան հատիկ,
Գալարվելով Դավթի հզոր ձեռքերում մեծ ու պողպատիկ:

Ծիծաղում էր իր մտքի մեջ առյուծ Դավիթը առնական,
Պանդութ խաթունն հանկարծ պոկվեց ու ետ եկավ սպառնական՝
Դուրդի նման իջեցրեց խիստ էր բռունցքը ծանրադողորդ,
Ու բերանից կանգնած Դավթի՝ հոսեց կարմիր արյունը հորդ:

Կողքից խսկոյն բաշեց սուրբ, լայնշեղք սուրբ կաթնակնակդ:
Առաց.— Հիմա քո գլուխը կթոցնեմ կաղամբի պես:
Բայց Դավիթը ոտանեց առաջ, քամեց նրա դաստակը աջ,—
Այնքան քամեց՝ մինչև ընկավ սուրբ իրա ոտքի առաջ:..

Գրկեց խանդութ խաթունին պինդ բազուկներով իր ահագին,
Ոլորեցով՝ գետնեց, ապա ծանր չոքը դրավ կրծքին:
Ու մոռնաց, հեաց խրոխտ իր լայն կրծքով պողպատի,
Ինչպես հզոր ու մեծաբաշ ահեղ առյուծ անապատի:

— Խանդակի խաթուն, երկու անգամ դու մոռացար սարսափ ու ահ,
Բիշ էր մնում որ ինձ համար դառնայիր սև գրող ու մահ,
Հիմա վեր կաց, դեմքդ լվա՛ Կաթնադրյուրի սառը ջրով,
Քաջի դեմ քաջ կռվողն է, որ արժանի է կյանքի, սիրո...

— Այդ դժու ես, իմ կտրիճ Դավիթ, դու առյուծի առյուծ որդի,
Բո՛ւ կուռ մեջքը չի ծալելու հյանքում ոչ մի աղամորդի,
Բառասուն քաջ ջահելներին իդուր չէր որ մերժեցի ես,
Սիրտըս դրած խնձորի մեջ՝ սիրո խնձոր դարկեցի քեզ:

Համբուրեցին նրանք իրար, ինչպես արև ու լուսնահան,
Սունկ ու սիպեխ հավաքելով՝ անուշ խոսքով ճամբա ընկան,
Որ շուտ հասնեն բերդը Սասնա, մտնեն իրենց նախշուն հողեն,
Եվ յոթը մեծ բուզի վրա՝ սունկե ընտիր ապուր ուտեն: —

ԴԱՎԹԻ ԿՈՒՎԸ ՎԱԳՐԻ ՀԵՏ

Առափոտյան արևը երբ վեր բարձրացավ լույսով պայծառ,
Դավիթն հեծավ, կտրեց ամբողջ Տարոնս դաշտը ծայրեծայր.
Հասավ նա մի մեծ շամբուտի, որտեղ վայրի վխտում էին—
Դեր վարպետներն ու խոզերը ու թռչունները ճահճային:

Լարեց աղեղն ու ճայթյունը թնդաց ամբողջ շամբուտով մեկ.
Թաքնվեցին վարպետները և ճահճային ճայերը հեզ,
Գորտ ու գորտուկ, կարկուտի պես, շուր նետվեցին ահազարհուր,
Ու թռան մի օտի կանգնած արագիւնները գորտակուր:

Տիրեց ծանրը ու կարճատև մեռելային մի լուռթյուն.
Բայց շամբուտի միջից ահա, աչքերում հուր կատաղություն,
Փեռեկ երախը լայն բացած, գայլույթալից մոնչյունով,
Ոստնեց հայնկարծ մի ահալի վազը, մորթից կայծ ու բոց ցանելով:

Նրա ահեղ մոնչյունից դողաց դաշտը ամբողջութեամբ,
Եվ ժայռերը արձագանքով դղրդացին ինչպես սև ամպ,
Կատվի նման ճարպիկ, ճապուկ իր առջևի երկու թաթի
Վրա ձգված՝ սուրաց առաջ, ինչպես շեկ շերտը երկաթի:

Դավիթն ամբողջ ուժը լարած՝ ուղեց նրան դարկել նետով,
Վրա հասած վազըը զարհուր, գետին գցեց նետը թաթով,
Եվ փեռեկոտած իր երախով,—լայն բաց արած քաբայրի պես,—
Մեկեն ի մեկ ուղեց Դավիթին, խմել, կուլ տալ, ուղարկել ներս:

Ձգեց ձեռքը Դավիթն շտապ, վազըի գլխի կաշին բռնեց,
Փնջեց բոսումն այնքան ամուր, որ նա լայն երախը մեծ,
Առամենբով իր ահագին, բացված ֆնաց ինչպես որ կալ:
Շրջեց մարմինը դյուրաթեք, ամբողջ թափով ուրեց վար:

Ծնկեց վրան, սեղմեց, քամեց վազրի կոկորդը լայնափող,
Պոկեց գլխից մինչև պոչը—նրա կաշին հրափողփող,
Գցեց ուսին, նժուլդն հեծավ, տուն շտապեց, հաղթ և արի,
Ասաց.—Ոսնդուրթ, մու այս մորթին, ծուռ Մհերիդ մուշտակ կարի:—

ԴԱՎԹԻ ԵՎ ՄՀԵՐԻ ՄԵՆԱՄԱՐՏԸ

Պրբ Մհերը դարձավ արդեն, դարձավ տղա հինգ տարեկան,
Քեռի Թորոսն ու Դավիթը և Հովանը շտապ եկան,
Նրան զսպող գութանի կուռ ծանրը շղթան քանդոտեցին,—
Եվ Մհերի հաստ թևերը կապկապանքից ազատեցին:

Ով որ տարով էր մեծանում՝ մեծանում էր Մհերն օրով,
Մեծաիրտ այգ ծուռը ուներ առյուծային ուժ ու կորով:
Ով որ տարով էր մեծանում՝ մեծանում էր Մհերն ամսով,
Յոթը թոնրի հաց էր ուտում, կաթ էր խմում հարյուր թասով:

—Օրհնյալ է տերն, ասաց Թորոսն,—օրհնյալ է կամքը երկընքի,
Դեմքը քնն է, իսկ թիկունքը Մհերին է լուսահոգի,
Բոց աչքերը՝ մոր աչքերն են, ճակատը լայն, մազը գանգուր,
Հասակը սյուն է պողպատիկ—վեր բարձրացած յոթը կանգուն:

Ու վերցրին շենսիրտ սուրբից նոսն գինին հնուց պահված,
Խորովածը բրդուճ արին ու կերան կուշտ Տարոնա հաց,
Ու խմեցին Մեծ Մհերի հիշատակին նվիրական,
Ու կենացը նո՛ր Մհերի, ու Սասնա Տանն հերոսական:

Մինչ Մհերը թև ու թիկունքն ազատած ծանր շղթայից,
Գնաց, կանգնեց քաղաքի մեջ, գտավ ընկեր ու խաղակից,
Թխլիկ ու սև Սասնա ճժերն հավաքվեցին շուրջը նրա,—
Խնչպես ժայռեր, որ կախվում են կամ ընկնում են սարի վրա:

Նախ՝ ճան խաղալը սովորեց, հետո հուլ ու պահմտոցի,
Ճանը նրա մասների մեջ փշրվում էր, ինչպես խեցի,
Հախտախաղին՝ ում դարկում էր, գլորում էր, ուշքից գցում,
Իրեն տանող խաղընկերին ըննոտում էր, քամում, ծեծում:

Աժդահա ձեռքը երկարած, կռացնում էր ձերմակ բարդին
եվ հասցնում նրա ամբողջ գլխածայրը մինչև գետին,
Շարում պռակած բարդու վրա ընկերներին հարածձի՝
Բաց թողնելով՝ շարտում էր թաղերն հեռու ծայրավերջի:

Որն ձեռք ու ոտքը ջարդում, ջուր ու արյուն իրար խառնում,
Որն ուսը, կուռք մատղաշ, որի թևը տեղից հանում,
Որի դեմքը արյունոտում, ատամները սղկում հանց աղ,
Լաց, աղաղակը տարածում քաղաքի մեջ—մի թաղից թաղ:

Մհերն ուբախ ծիծաղում էր մեծափառփառ ու լիաթոք,
Նորից գնում լախտ էր զարկում, նորից ճան էր խաղում անհոգ,
Մութն իջնելիս ճանն ու լախտը հավաքում էր, բերում էր տուն,
Անհիշաչար, ուբախ սրտով, կաթ էր խմում, հաց էր ուտում:

Ուղադատելից նա ոստյունով թռչում էր մեծ թափով իրա
Իջնում ձորը, դերաններից կամուրջ կապում գետի վրա,
Ճամբորդներին ծեծ էր տալիս՝ կանգնած գլխին իր կամուրջի՝
Չէր թողնում, որ մարդիկ անցնեն, չէր թողնում, որ հավքը թռչի:

Քաղաքացիքն եկան Դավթին՝ աղի արցունքը աչքերին,
—Դավթ, ասին,—մի խրատ տուր քո տնավեր ծուռ Մհերին,
Ճան է խլում, լախտ է զարկում, կռացնում է բարդին բարակ,
Ճամբորդներին ծեծ է տալիս, որդի՞ է, թե աստծու կրակ...

Ելավ Դավթն շտապ գնաց, սիրտը պղտոր ու բարկացկոտ,
Գնաց աչքերն արյունով լի՝ կապը կտրած Մհերի մոտ,
—Ասավ, Մհեր, աստծու տակին մի թույլ մեղք կատեղծես դու,
Որ հանում ես այս խեղճերին երկինք հասած ծայրը բարդու—

Ճան ես խլում, լախտ ես զարկում, ծեծում, ջարդում անմեղ ճամբորդ
Մարդիկ մարդ են, թե ոտքիդ տակ տրորվող խեղճ ճիճու և որդի
Գոռաց ու մի ապտակ տվեց ափսոսան հզոր ու զայրածին,
Որ Մհերի դեմքի վրա հինգ մատները երկացին:

Քաղաքացի ու վառիկ Մհերն, ու ինչպես սուրբ պատյանից՝
Շողաց, ոստնեց վազրի նման, պինդ շուլալվեց հոր փողպատից.
Ու գարկեցին, ու գարկեցին, ու գարկեցին իրար ափսոսան,
Որ թանձրախիտ փոշին ելավ, ծածկեց երեսն արեգական:

Ու գարկեցին, ու գարկեցին, ու գարկեցին ափսոսան իրար,
Որ լողացին արյան ծովում, և արյունը հոսեց վարար.
Եվ գարկեցին, որոտացին սարերի սլան հիմնակործան,
Նրանց գարկի ձախից շատերն զարգանդեցին ու խլացան:

Այն ժամանակ համբավ տարան.— Ելիր, ասին,— Խանդուկ խաթուն,
Թե չես ուզում, որ հենց այսօր երկու մեռել ունենաս դուն,
Քո Մհերն ու Դավիթն իրար կոտորեցին, սպանեցին,
Տաքացել են ու չեն լսում ոչ աստըծուն ու ոչ մեծին:

Մարերն արձակ, խելակորույս վազեց Խանդուկ խաթունն արագ,—
Տեսավ՝ Դավթի ու Մհերի մարմիններին բոց ու կրակ,
Պողպատածույլ բազուկներին շաշ-շունդ է լցվում չորս կողմ,
Կուռ կոները ոլորվում են, ինչպես անեղ պտուտահողմ:

Կանգնեց, երգով կանչեց, ասաց.— Դավիթ, Դավիթ, դու մի՛ զարկի՛ր
Դու մի՛ զարկի՛ մատաղ մեջքին իմ նորեկուկ թուխ մանուկի,
Դավիթ, Դավիթ, դու մի՛ զարկի՛ր, Դավիթ, մեռնեմ քո ոտքերին,
Դու մի՛ զարկի՛ր, դու մի՛ զարկի՛ր— իմ մինուճար, մեկ Մհերին:

Կանգնեց երգով կանչեց, ասաց.— Մհեր, Մհեր, դու մի՛ զարկի՛ր,
Դու մի՛ զարկի՛ հասուն մեջքին իմ թուխ մորուս Դավթին հարգի՛ր,
Մհեր, Մհեր, դու մի՛ զարկի՛ր, Մհեր, մատաղ քո ձեռներին,
Դու մի՛ զարկի՛ հասուն մեջքին, իմ քաջ Դավթի կուռ-կոներին:

Լսեց Դավիթն ու կանգ առավ, ինչպես սարը մառախուղում.
Այն ինչ՝ Մհերն է՛լ գաղաղած՝ հարվածներ էր անվերջ տեղում.
Խանդուկ խաթունն արցունքի մեջ երգեց նորից սրտակտուր,—
Ասաց.— Աստված, հրեշտակ ղրկի, այս երկուսին հաշտութուն տուր:

Եվ, աստըծու հրամանով, այդ քաջերի վրա անվախ՝
Երկընթից վայր իջավ իսկույն մի հրեշտակ լուսաթաթախ,
Հորն ու որդուն բաժանելով՝ ձխի նման անհետացավ,
Այն ժամանակ՝ սիրտը կոտոր, խոր կսկիծով Դավիթն ասավ:

— Աղաչանք եմ անում երկնի բարերարին ամենագութ,
Քանի որ դու, Մհեր, իմ դեմ եղար այսքան չար ու անգութ,
Քաշվի՛ մեջքիդ երակն իսպառ, օր չտեսնես դու խնդրի՛քան,
Մահ չլինի քեզ մինչև ի Քրիստոսը դա դատաստան:

Ամենագոր բարերարը լսեց Դավթի խոսքը արդար.—
Մհերն ապրեց մինչև հիմա, ու դեռ կապրի՛ր դարե ի դար.
Եվ, նրանից, ինչպես ստերջ և անկենդան հոգը անհունդ,
Սասնա տունը էլ չունեցավ ոչ մի ժառանգ, սեր ու սերունդ:

ԴԱՎԹԻ ԵՎ ՊԱՐՈՆ ԱՍՏՂԻՆԻ ԿՌԻՎԸ

Պարոն Աստղիկն զորք հավաքեց, ելավ հեծավ հրեղեն ձին,
Հրեղեն ձին, որ թռչում էր գետնից մինչև խորն երկնքին,
Ձեռքի թուրը շողացնելով, լաղացնելով նետ ու նիզակ՝
Կանգնեց կռվի դաշտի վրա, գոռաց, զոչեց պայքարի դարկ։

Կանգնեց Դավիթն ընդդեմ նրա, ձեռքում բռնած թուրը հրկեղ,
Որի լույսի շառավիղը ցոլցվում էր տան երդից ներս.
Սանդուխ Սաթուհն ասավ մտքում՝ մութն է՝ մթնում ճրագ չկա,
Ամպ է երկինքն՝ անձրև չկա, մութն է՝ կայծ ու կայծակ չկա։

Բացեց բերդի լուսամուտը, տեսավ, դաշտում՝ երկու տխրան՝
Ճախտ են փարտում մեկը մեկի, սրտերն իրենց արած զնգան.
Նետ են նետում մեկը մեկի, գուրգերն արած կռան իրենց)
Սուր են սրում մեկը մեկի—կուռ թիկունքին հակադասեծ։—

Քալիս իրար սարի նման, ետ են դառնում, թռչում հեռուն,
Կորչում կայծ ու կրակի մեջ, ծովի նման ելնում, եռում,
Հավիկ է լայն թրի շեղրը, մնացել է կռթը միայն,
Հավիկ է կուռ գունդը գուրգի, մնացել է օղը միայն։

Պարոն Աստղիկը կատաղի հարվածում է արագ, արագ,
Դավթի սարին շողացնելով բարկությունը բոց ու կրակ,
Բիշ է մնում նրան բռնի, ճգմի, գցի անգունդն անոթի.
Սանդուխն երգեց, ձայնեց, ասաց.— Հերիք գարկես, Պարոն Աստղիկ։

Դավիթն առավ ձայնը նրա. ասաց.— Բախտըք կտրի, կնիկ,
Երդում էիր արեւ դու ինձ, որ երբեք զուրս չես դա տնից,
Ձեռ բաց անի դուռ ու երդիկ, ճախարակի մոտ կնստես,
Մինչև կռիվը վերջանա, մինչև կռվից տուն դառնամ ես։

Ասաց, դարիկեց թափով ուժգին, ամուր դարկեց նիզակ ու գուրգ,
Նիզակն անցավ ձիու փորով և Աստղիկա գազաթից դուրս.
Պարոն Աստղիկն օրորվեց ու շաշ-շառաչով ընկավ գետին,
—Այս հարվածը, ասաց,—միայն կվայելեր Սասնա Դավթին:

—Դավթին, ասիր: Իսկ ո՞վ ես դու, որ հեծած քո ձին հրեղեն...
—Ես, քաջ Դավթի, ձեր Աստղիկն եմ, քո Աստղիկը, Վերգո տղեն...
Սասնա մեծ տան սովորութքով՝ առ գլուխըս, դիր քո ծնկին,
Հետո հանգիստ կմեռնեմ ես... կավանդեմ իմ թշվառ հոգին:

Երբ որ մեռավ Պարոն Աստղիկն, այն ժամանակ շվար Դավթի
կրակ աչքերը սևացան, ուշքը գնաց, ընկավ գետին,
Կանգնած գորքը Դավթի վրա դուռյթ տվեց կատաղաբար,
Բայց նժույզը, իր հաստ պոչով, հազար զինվոր զլորեց վառ:

Զթողեց որ մարդ մոտենաւ. մինչև Դավթին աչքը քացեց,
Կանգնեց նորից, ինչպես Գրգուռ սարը հզոր ու երկնամերձ,
Թռավ հեծավ իր նժույզ ձին, քաշեց իրա թուրը շողշող,
Ու մնացած զինվորներին քշեց մինչև Հալաբա հող...

«ԴԱՎԹԻ ԴԱՐԸ»

Աշնանային մի պայծառ օր, հովիվ Դավիթը վիթխարի,
Սասնա Տան հոտը իջեցրեց ստորոտը Սեղանսարի,
Այնտեղ, ուր որ երկճեղք ժայռից Կաթնաղբյուր է բխում պաղ-պաղ,
Երկճեղք ժայռից, որ նման է որձ առյուծի բացված երակս:

Ահա հեռու և մոտակա ճերմակածիզ շավիղներէց.
Խնչպես թեթև այծեմիկներ, ինչպես հովը իջած սարից,
Եկան Սասնա սեզ հարսները, աղջիկները թուխ, սպիտակ,
Ոչխարի կիթն սկսեցին վերից կախված ժայռերի տակ:

Ու ոչխարի կաթը հորդեց պտուկներէց լի-կարմրուն,
Հանց սառույցի բարակ ձողեր՝ փոփալտով կթոցներում,
Ճերմակ ու շեկ աղինձներում և փայտակող դուլերի մեջ,
Հանց երկնքից թափվող անհուն, անհատներ շանձր անվերջ:

Կթվորներէց ոմանք իրենց սև լաջուրն ուր բոցաբծած
Նայում էին թաքուն՝ Դավիթին՝ Կաթնաղբյուրի ակին նստած.
Նայում էին, հուլողով լցվում, լցվում մի խոր դադանիքով վես,
Բարձր՝ Սասնա լեռանց նման, խորը՝ Սասնա վիհերի պես:

Եվ հերթի հերթ, հաղար լի կուրծ, երբ որ պիտի դատարկվեին,
Պիտի հաղար ճաբպիկ մատներ լի կուրծերիցն աղատվեին,
Ու երբ պիտի բացվեր աշնժամ սրտապարար մի տեսաբան՝
Դառը պիտի իր մորը գար, մայրը պիտի գտներ գառան,—

Հանկարծ բարձր սարի գլխից պոկվեց հսկա մի բարաժայռ.
Պոկվեց, թնդյուն-դզրդյունով, գլոր-գլոր հոնդաց վայր,
Կթվոր կանայք և աղջիկներ և ոչխարներն իրար անցած,—
Բարձրացրին մի լաց ու մայուն,—մեկը մեկի մեջքը մտած:

Ու շուռ եկան հազարավոր հիթոցները ձյան շերտի պես,
Ստորոտը մի ծայրից ծայր սպիտակեց ամբողջապես.
Ու մինչ ժայռը դեպի ներքև գլորվում էր անագնությամբ,
Հսկայական վիշապի պես, անաղին մի բլուրի չափ:—

Դավիթն ամբողջ ուժն համարած՝ վազեց դեպի ժայռը եկող,
Դղրդացին նրա վազքից գազաթ ու վին ու սարակող.
Պարզեց ուժգին սողսկառ ձեռքը, և վեհ ժայռը հռնդալով,—
Կանգնեց խկույն Դավթի առաջ,— շուրջը փռլի, խիճ ցանելով:—

Կանգնեց: Մնաց: Մինչև հիմա այն ժայռը կա, և մեծագոր
Դավթի ձեռքի հինգ մատների գրոշմը կա մինչև այսօր:
Եվ, կթվորը, կիթ անելիս, այդ գեպքն է միշտ մտարերում,—
Ահով հիշում «Դավթի քարը» որ կանգնած է Սեդանսարում:

ՄՀԵՐ ԵՎ ԴՈՂՍԻՐ

Մհերն ելավ ընկավ համբա, կտրեց հասավ դաշտը դուբան,
Վեր բարձրացավ քար բարակերտ Առյուծաբերդ բերդի բերան
Տեսավ խոշոր մի ժայռի տակ նստել է մի հրեշգեմ կին,
Կրծքից մինչև մեջքն է զցել ծծերն երկաշ ու ահագին:

Աջ թևին՝ ձախ ծիծն է նեաեւ, ձախ թևին՝ աջ ծիծն է զցել,
Ու, տախտակից ավելի չոր, մրոտած իր կուրծքը բացել,
Վառել է մի հակա խարդուկ, ծխի սյունը երկինք տված,
Ու ժանգոտած սաջի վրա աղանձում է սխեռ ու հաց:—

Տեսավ Մհերն ու վախեցավ, ու մտածեց ինքը իրան,—
Թե որ ձեռքս երկարացնեմ, միանգամից բռնեմ սրան,
Կովի մահնեմ հրեշի հեռ՝ վախենում եմ թե ինձ հաղթի,
Էն ժամանակ կլինի ցավ՝ կծանրանա վեր իմ սրտի:

Սիրան հավաքած՝ մոռեցավ նա ու երկարեց ձեռքը երկաթ,
Զգեց, բռնեց, պինդ ոլորեց նրա երկու ծծերն անկաթ,
Գամեց աշնքան, որ արյունը, արյունջուրը հոսեցին վար,
Ու քիչ մնաց, որ պառավի սիրտը պայթեր, ուշքը գնար:

Պառավ հրեշը մեմնջաց, ասաց.—Տղա, ծծերըս թող,
Ես գիտեի, որ չեմ տեսնի Սասնա Դավթի ձեռքը հաղթող,
Ուժդդ որ կա՝ Դավթի ո՛ւժն է, զարկդդ որ կա՝ զսրկն է Դավթի,
Ծծերըս թող, աղջիկըս տամ, կտերանաս սիրո՞ւ բախտի:

Ես մի խորոտ աղջիկ ունեմ, իր անունը Գոհար Խաթուն,
Թե որ ժպտա, հաղար կյանք ու հաղաբան սեր կտա մարդուն,
Յոթը տարի, դեռքը ձեռքին, կանգնել է իմ բերդի դռան
Հալերի քաջ թագավորը... Բայց աղջիկս չեմ տա նրան:

Իմ Գոհարը՝ Դավթի տղա, աչքերը ունի երկու լուսին,
Շեկ խոպոպները իջնում են ճերմակ ծոցին, փափուկ ուսին,
Իմ Գոհարը՝ ճակատ ունի դաշտի պես լայն, ձյուն ու ճերմակ:
Ունքերը ունի կամար ու կեռ, ձեռքերը ունի կակուղ կարագ:

Իմ Գոհարը՝ հասակ ունի ոնց որ Սասնա բարակ բարդին,
Բերան ունի, որ չի պաշել հողածինը, աղամորդին,
Իմ Գոհարը մի կուրծք ունի՝ մարգարտի պես լույս կշողա,
Քեզ եմ տալիս իմ Գոհարը, թող ծծերես, Դավթի տղա:—

Քաշեց Մհերն իր ձեռքը ետ Սրտում խաղաց ինչ որ մի բան:
Պառավն ելավ, Մհերի հետ, բռնեց իրա բերդի ճամբան,
Ու գնացին. տեսավ Մհերն ու աչքերին չհավատաց՝
Մի աղջիկ էր նստել այնտեղ՝ լուսամուտի մեջ կիսաբաց:

— Բարե՛, աղջիկ, ասաց Մհերն ու մեծաբայլ գնաց շտապ.
Մինչ Գոհարը կորավ իսկույն սրտի մեջ մի ջերմ ու տաքնապ,
Փախավ մտավ սաղափ սենյակին ու հարդարեց գլուխ-վրան՝
Ցույց չտես Մհերի դեմ՝ ինչպես արեւը հուրհրան:

Պառավն ասաց, — Տես, ծնւո տղա, ի՛նչ աղջիկ եմ տալիս ես քեզ:
Հիմա նստիւր, կեր ու խմիւր իմ կաթնակեր զավակի պես
Նստեց Մհերն ու կուշտի կուշտ կերավ խմեց մինչ լուսաբաց,
Լուսաբացին՝ քաջ Մհերի ականջն ի վար՝ Գոհարն ասաց:

— Մհեր վեր կաց, գնեքերդ ան, գնա մինչև Հալեք քաղաք,
Ասա նրա թագավորին՝ ով որ ունի գլխին գդակ,
Ով կարող է գդալ բռնել, թող շուտ կապի գենք ու գրահ.
Թող գա իսկույն կովի մտնենք, կռիվ բացենք դաշտի վրա:

Մհերն ելավ, վազեց, վազեց, գնաց հասավ Հալեք քաղաք,
Ասաց նրա թագավորին՝ ով որ ունի գլխին գդակ,
Ով կարող է գդալ բռնել, թող շուտ հագնի գենք ու գրահ,
Թող գա իսկույն կովի մտնենք, կռիվ բացենք դաշտի վրա:

Մուսնտիկի ձայնը հնչեց, ծածկեց ամբողջ Հալեք քաղաք,
— Թագավորի հրաման է. — ով որ ունի գլխին գդակ,
Ով կարող է գդալ բռնել, թող շուտ հագնի գենք ու գրահ,
Կռիվ դնանք Գոհարի դեմ, կռիվ բացենք դաշտի վրա:

Եվ Հալեքից դուրք հոսեց զարնան պղտոր հեղեղի պես,
Եկավ լցվեց Տաբոնա դաշտ, Սասնա սարերը վեր ու վեա.
Քառասուն օր նեւո նետեցին, ու զարկեցին բարան ու սուր.
Ու քիչ մնաց խորտակին Վիրապական բերդը ամուր:

Քարկ բարկացալ Մհերն այնժամ, քչեց իր ձին, սուրը ձեռքին,
Քչեց, զարկեց, ջարդեց, թափեց թաղավորի դենք ու զորքին,
Չարկեց Գոհարն իր մեծ սրով թափով խիստ ու հսկայական,
Նրա զարկից ողջ մնացած զորքերն իրար վրա ընկան։—

Ու զարկեցին քառասուն օր, արյունն ելալ գոչ-գոչ քնաց,
Ծածկեց ամբողջ զաշտ ու զուրան ու սեպ սարերը երկնամբարձ,
Վերջին զարկին, փոշուժ, ծխում և արյան մեջ լերդ ու վարար,
Քաջ Մհերն ու Գոհարը քաջ—հաղթանակով դտան իրար։—

Գտան իրար։ Գնացին բերդ, ու կանչեցին դհուլ-դուսան,
Ու կանչեցին հարսնիկորներ, կանչեցին երգ ու երգասան,
Եբդ ու պարով, խաղ ու տաղով Սասնա սարերը թնդացին,—
Վրիվ յոթն օր, յոթը գիշեր հարսանիք ու քեֆ արեցին։

ՄՀԵՐԸ ՄՇԱԿ

Քրտինքում ու փռում կորած Մհերն հասավ Հալաբա հող,
Հոգնած ծարավ և անոթի—մտավ մի մեծ շինական գյուղ.
Շող ու կրակ ամռան օր էր, ծանր ու խեղդուկ տոթ էր կանգնած,
Դեմքի բրտինքը սրբելով՝ մի սանչալարի մոտիկ գնաց—

—Բարե՛, ասավ,—սանչալար ախպեր,—արդար գործիդ հաջողություն,
Կարող ես ինձ մի գործ ճարել, որ չքաշեմ անոթություն.
Ռանչալարը թե՛ արտատիրոջ մոտ որ տանեմ՝ քեզ կվարձի.
Քաղի, Թափի, խուրձեր կապի, ցորեն հնձի, մշակ դարձի:

Դարձավ մշակ. առավոտից մինչև մութը—բանում, դատում,
Երեկոյան առնում վարձը, գնում էր մի պառավի տուն,
Դատածն ամբողջ տալիս էր ու առնում կտոր մի գարեհաց,
Ջուրը կապում գարեհացին, սովի նման մնում սոված...

Ամբողջ օրեր՝ միտք էր անում, միտքը չափում, բռնում, գցում,—
Ով հնձում է օրը մի արտ, ես քառասուն արտ եմ հնձում,
Ով կապում է օրը մի խուրձ, ես քառասուն խուրձ եմ կապում,
Ով թափում է օրը մի բարդ, ես քառասուն բարդ եմ թափում...

Մի օր, վարձի ժամանակին, արտատիրոջն ասաց հանդիստ,—
—Ամբողջ օրը աշխատում եմ, մեջքըս չունի դադար ու նիստ,
Ամռան կրակ արևի տակ պլոկվում է մեջքիս կաշին.
Դու ինչո՞ւ ես ինձ վարձ տալիս, հաց ես տալիս ճնճդաբաժին...

—Ձայնդդ կարբի, Սասունա ծնւն, արտատիրոջ քուսակ խոլոր,—
Վարձաչափդ այն է, ինչ իմ մշակներն են առնում բոլոր.
Ճնճդաբաժին, յեզվին մտիկ, աչքիցըս շուտ դնա՛, կորի՛,
Թե չէ՛՝ էդուց վզիդ կտամ, կվերցնեմ, զրկեմ կոռի...

—Կսո՛ր-մոռի չեմ հասկանա, վարձքս չտաս՝ ողջ չես գնա,
Ո՛վ որ շատ է քանուճ-դատում, շատ էլ պիտի վարձ ստանա:
Ու մոտեցավ արտատիրոջն, ինչպես ցուրուն կրակը կեղ,
Ձեռը վերև տարավ բերավ, փռեց գետին մեռելի պես:

—Ի՛նչ աշխարհ է, խեղճը բանի, լիրը հարուստը խլի տանի:
Ձոքի մարդուս շնչի վրա, խեղճի սիրտն ու հոգին հանի:
Ձէ՛, չեմ մնա, պիտի գնամ, քանի մարդը չար է ու գող:
Սիրտը խռով, գլուխն առավ, գնաց հասավ Լաթաքա հող:

ՄԱՆԵՐՆ ՍՊԱՆՈՒՄ Է ՉՄՇԿԻՆ ՍՈՒԼԹԱՆԻՆ

Բոթը հասավ Սասնա լեռներ. սպանե՛լ են արեւ Դավթին:
Ելան Ձենով Հովանն ու քաջ Քեռի Թորոսն արեւմուտին
Գնացին սար, սարի գլխից Ձենով Հովանը որոտաց.
— Մհե՛ր, ո՛ւր ես, ողջ Սասունը սո՛ւգ է անում աչքերը թաց:—

Սպանել են քու հեր Դավթին. վեր կաց, արի, այ անգուման:
Ձայնը դնաց ու Մհերի սրտում խրվեց սրի նման.
— Սպանել են իմ հեր Դավթին, զաթթո՛ւն եմ ես, թե՛ երազում...
Թռավ հեծավ հրեղեն ձին, խոտաց դեպի հողը Սասուն:

Եկավ հասավ հողը Սասուն, կանգնեց ձիով, հողը դողաց:
Քեռի Թորոսն ասաց. — Մհե՛ր, չլինես դու Դավթի տղան՝
Թե Չմշկիկ չար Սուլթանին՝ չկապես քո ձիու պոչից, —
Ու քաջ հտաս սարով ձորով, ու չգարկես խութ ու խոչից...

Խուլ մոնչաց Մհերն ու հուր-կրակ կտրեց իր սրտում բորբ.
— Վայ քեզ, Մհե՛ր, հազար վայ քեզ, վայ քո գլխին, մնացիր որբ.
Չլինեմ ես իմ հոր տղան, թե չգնամ հիմա եեթ
Ու հաշիվը չը մաքրեմ շուտ բող Չմշկիկ Սուլթանի հետ:

Ասաց, քչեց կայծակնաթափ, հասավ գետը Բենգումահի,
Կտրեց սահմանը Իրանի, ու լեռներ մեծ ու ամեհի,
Հասավ հողը Չմշկիկի, բերդը մռայլ ու դժնառես,
Սրտում վրեժը սաստկագին՝ բարկ որոտաց սև ամպի պես:—

Բարկ որոտաց սև ամպի պես, ինչպես ջրվեժն արագահոս՝
Թնդաց. — Բերդից դո՛ւրս արի շուտ, դուրս արի շուտ, Չմշկիկ բո՛գ,
Եկավ, բերդի լուսամուտից նայեց, ասաց ծաղրով փառփառ,
— Քաջ արծիվին սպանողը՝ ագռավին էլ կրերի վար...

Գնաց, կապեց զենք ու զրահ, ելավ հեծավ իր կապույտ ձին.
— Հիմա, Մհեր, կուգես կանչիր՝ Մարութա սուրբ աստվածածին,
Կանչիր ինչքան սուրբ կա ձեզ մոտ, միենուլյն է, իմ ձեռքից էլ,
Ողջ սրբերը օգնեն թեկուզ, — էլ չես կարող դու ազատվել...

Սեղմեց Մհերն ատամները, հաստ ծնոտը զայրուլթով մեծ,
Ու դեպի նա ոտներից արագ, ու կաշվե հաստ լախտը փարտեց,
Ջարկեց երկու անեղ հարված աֆնքան ծանրը, շառաչալից,
Որ Չմըշկիկ Սուլթանի մեծ աչքերը դուրս թռան բնից...

— Կենդանի՛ հմ, ազնավի ճնւտ, կենդանի՛ հմ, նորից արի,
Ու իր կողքից քաշեց սուրը հսկայաշեղբ ու վիթխարի.
Բայց Մհերը իրեն սրով՝ սուրը արավ փշուր-փշուր, —
Չմըշկիկի աջ ձեռքի մեջ թողնելով մի չոր փայտե բուռ —

Հասավ, բռնեց Չմըշկիկի շեկ մազերից փարթամ ու պերճ,
Ձիու թամբից պոկեց նրան ու շարտեց բարերի մեջ,
Ապա իջավ, կալեց կապեց իրա նժույգ ձիու պոչից,
Եվ արշավեց դեպի Սասուն, տալով նրան խութ ու խոչից...

Տեսավ, հեռվում լըխնջում է Դավթի նժույգն անտիրական,
Լացեց Մհերը կսկիծից ու հին օրերը միտքն ընկան.
Իջավ, բռնեց հոր իմաստուն նժույգին ու համբուրեց վառ՝
Բոց աչքերը, որոնցից հորդ, լույս արցունքը հոսում էր վար:

Քեռի թորոսն ընդառաջեց, ու հայրարար ու սրտաբուխ,
Երեք անգամ ջերմ համբուրեց քաջ Մհերի ճակատը թուխ.
Ապա ասաց. — Դավիթը կն, քանի կա մեր Դավթի տղան՝
Մասնա հորը ծան ճրագը վաճ կմնա հո՛ւր-հավիտյան —

ՄՀԵՐԻ ԼԱՅԸ

Մեռան Դավիթն ու Խանդութը, մանուկ Մհեր մնաց անտեր:
Ձենով Հովանն իրեն կարգեց ամբողջ երկրի՝ Սասունա տեր:
— Դձուս կորի իմ քաղաքից, ծնւո, — դուռաց նա խիստ Դավթի որդուն, —
Սասնա դարմը հունենար քեզ, մեկել անգամ հմտնես տուն:

Թունդ ելալ սիրտը Մհերի և աչքերը արցունքվեցին.
— Քհնն է, ասալ, իմ հոր հացը, Թուր Կայծակին, Հրեղեն Ձին,
Քհնն է Սասնա բարձրիկ սարը, քհնն է դաշտը, ոսկին մեր դեզ,
Որ զրկում ես ինձ իմ հացից, որ թողել է իմ հայրը քեզ...

Կարող եմ ես իմ Դավիթ հոր — Թուր Կայծակին ձեռքս առնել՝
Մինչև կոթը խրել կուրծքըդ, սիրտ ու թոքրդ իրար խառնել,
Կարող եմ ես պապ Մհերի մկունդն առնել, գունդը գուրդի,
Բայց չեմ ուզում արյուն թափել, մեղը ծանրացնել վեր իմ վզի: —

Նայում եմ մեկ իմ հասակին, մեկ՝ միրուրիդ ճերմակոտած,
Խնայում եմ, և զայրույթըս իր գեղեցիկը դնում է ցած:

Վաճառ եկել է տաբել որբին, որբն՝ աշխարհում՝ սրբ կամա —
Թեկուզ ապրի վայելքի մեջ, արքայութիւն թեկուզ գնա...

Ասաց, ելալ գնաց Դավթի գերեզմանի վրա կանգնեց,
Ու հեկիկաց որբի լացով, աղեկտուր կանչեց, կոծեց.

— Անդին հերիկ, ես ի՞նչ անեմ, դու քնել ես, չես իմանում,
Քո Մհերին Սասնա երկրի հող ու ջրից դուրս ես անում:

Ու Մհերի ձայնը գնաց հասալ մինչև խոր գերեզման.
Գերեզմանից Դավիթն առաց. — Ա՛խ իմ որդի, սրբ անգուման,
Հատե՛լ է իմ ուժը ձեռքի, հատե՛լ է իմ ուժը ձեռքի,
Թափե՛լ է իմ մազը դեմքի, կոտրե՛լ իմ ուժը բազկի: —

Վրաս սև հոգին է ծանրացել, վրաս սև հոգին է ծանրացել,
Նրա համար իմ Մհերը անտուն ու սրբ է մնացել.
Գնահ, որդի, Հալեք քաղաք, գնահ, որդի, Հալեք քաղաք,
Սուրբ քրտինքով հնոց վաստակիր Սասնա լեղի հացի տեղակ:

Ու Մհերի ձայնը գնաց, հասավ մինչև խոր դերեզման:
Գերեզմանից Խանդուծն ասաց.— Ա՛խ, իմ որդի, ո՛րք-անգուման.
Անցե՛լ է իմ ուժն աշխարհի, անցե՛լ է իմ ուժն աշխարհի,
Թափե՛լ է իմ մաղը գլխի, կոտրե՛լ է ուժն իմ թևերի:—

Վրաս սև հոգին է ծանրացել, վրաս սև հոգին է ծանրացել,
Նրա համար իմ Մհերը անտուն ու սրբ է մնացել.
Գնահ, որդի, Հալեք քաղաք, գնահ, որդի, Հալեք քաղաք,
Սուրբ քրտինքով տուն ու տեղ դիր՝ Սասնա սիրուն բերդի տեղակ...

Ու լսց եղավ, ձայնեց կրկին, էլ ձայն չեկավ դերեզմանից.
Աղի արցունք թափեց, կոծեց սգվոր, մենակ, անկարեկից.
Ու կռացած՝ սիրագործով հոգն համբուրեց երեք անգամ,
Ոտքի կանգնեց մղկըտալի, դեմքն արցունքոտ, լեզուն կարկամ...

Նայեց վերը, ամպի փեշով մի երամ էր երգով գնում:
— Է՛յ կողունկներ, ինձ էլ ձեզ պես, ճանապարհ է միայն մնում.
Բայց չգիտեմ՝ թե Հալերը, ո՞ր ծայրումն է այս աշխարհի,
Դեռ կաթնակեր մանուկ եմ ես, ի՞նչ կա դեմքս՝ չա՛ր թե բարի:

Ամպի միջից մեծ կռունկը ձայնեց, ասաց.— Մանուկ Մհեր,
Հետևիր մեզ, կեջնես դաշտը, կբարձրանաս սարեն իվեր,
Ցած կգցենք մի-մի փետուր ճանապարհիդ ամեն տեղանք,
Փետուրների հետքով գնա և կհասնես Հալեք քաղաք:—

Սիրտը տխուր ու խռոված, գլուխը կախ կրծքի վրա,
Սրբեց Մհերն դառն արցունքը, իսկույն ընկավ ճամբան իրա.
Վերջին անգամ Սասնա հողին նայեց, նայեց սիրով անշեջ,
Թռավ իջավ Տալոնա դաշտ, բերդը թողած ամպերի մեջ:—

ԲՐՋՍ.—ԲԱԼԱՔ

Մանուկ Մհերն անցալ երկար ճար ու ճամբա թե լալ, թե վատ,
Հոգնած, ծարալ ու անոթի՝ եկալ հասալ Զգիրու Շատ:
Զգիրու Շատ, հարյուր քառսուն գետ-գետակի հետ միացած՝
Ափից ելած ծովի նման՝ հորդ իջնում է սարերից ցած:

Ամեն գարնան, գետը կնում շառաչում է ու որոտում,
Ավերում է դյուղ ու քաղաք ու ծով կտրում գուրան դաշտում.
Սարերի սուր կատարները ծածկում խորը, թաղում անհետ,
Ու խեղդում է սեգ արծիվին իր նոր հանած ձագերի հետ:

Երբ որ հասալ Զգիրու Շատ, Զգիրու մեծ քաղաք մտալ,
Գնաց վերջին աղքատ թաղը, մի անգամակ պառալ գտալ,
Կերալ կտոր մի գարեհաց, թան քաշեց իր սրտի բովուն,
Ձեռքը դրեց լալն ճակատին ու ընկալ իր մտքի ծովում:

— Աշխարհն առա ես ոտքի տակ ու չտեսա արդարութուն,
Մարդը գայլ է մարդու համար և ուտում է մարդը մարդուն,
Պեղճը դառի՝ հարուստն ուտի՝ խեղճը շահի՝ հարուստն՝ առնի,
Էս աշխարհք չէ՛, էս դժոխք է, որքի համար՝ փուշ ու կռնի:

Շահի համար՝ թագավորը՝ զորք է հանում, կռիվ անում,
Շահի համար՝ չար հարուստը՝ խեղճ աղքատի հոգին հանում,
Ոսկի, արծաթ թեղում, շեղում, շոր է հագնում թանկ-թանկագին,
Աղքատները՝ մի հասարակ շիլա շապիկ չունեն հագին...

Էս աշխարհք չէ՛, էս դժոխք է... Ու մնում է մենակ մի ճար,—
Ով անտուն է ու անոթի, ով ուտում է սոխ ու բանջար,
Շենեն, գարկեն թագավորին, հարուստներին չար ու խորը,
Դառնան իրենց աշխատանքի, իրավունքի տերը բոլոր...

Այս մտքերի մեջն էր Մհերն, երբ լսվեց մի խուլ զղբոցոց՝
Բարձրացավ մի վայ-վայնասուն, լաց ու կական, ճիչ ու գոռոց,
Ու դուրս թռավ, ու տեսավ, որ տեղից պոկված մի խուռն ամբողջ
Նեղիկի ու ծուռ փողոցներով խուճապում է կրճնկակոխ:

Զղիբու Շատն, ինչպես սարից պոկված ջրվեժ մի անաղին,
Ինչպես ծովի կատաղի եյր, հորձանքն հեծած մի հորձանքին,
Հեղեղում է մի ամբողջ թաղ, ծածկում խրճիթ ու աշտարակ,
Հոբնեղում է, յափում, կորցում հանց հրդեհի անդուսպ կրակ:

Ու փախչում են մարդիկ անա ալյալված ու խելակորույս,
Թողած մանկանն օրորոցում, ու պապիկին ճեմակոտորես,
Թողած տուն, տեղ, կահ-կարասի, մոլեգնում են խենթ, մթագնած,
Իրար կոխում ու տըրում՝ մեկը մեկի մեջքը մտած:

Տեսավ, աչքերը վառվեցին, վաղեց դեմի սարը շտապ,
Սարի գլխից պոկեց մի ժայռ, պոկեց մի ժայռ նա սարի չափ,
Վեր բարձրացրեց պիրի թեկերով, ամբողջ ուժով շարտեց վար,
Նա դարձրեց խենթ հեղեղը, ժայռը արած պատ ու պատվար:

Ասես հաղար-հաղար առյուծ մոլորչացին միանգամից,
Ջուրն երկճղվեց՝ կատաղորեն նահանջելով դեմված թաղից,
Երկճյուղ հունով հոսեց դեպի դաշտերը՝ չոր ու անջրդի,
Ուր ոչ մի հող՝ հուր-հավիտյան էլ անձրևի չկարոտի:

— Դարձե՛ք, գոռաց սարի գլխից, — դարձեք, շինեք տները ձեր,
Շուտ, ետ դարձեք, քաղքեցիներ, շտապ դարձե՛ք, մանուկ ու ծեր,
Էլ Զղիբու Շատը երեք ձեր քաղաքը չի հեղեղի,
Քանի որ կա սարից գցած պատվար քաղը Դավթի տղի:—

Քաղքեցիներ՝, չվախենա՛ք, ժայռեր պիտի գցե՛մ նորից,
Ժայռեր պիտի գցե՛մ նորից, պիտի իջնե՛մ բարձր սարից,
Բերդ շինելու գետի ափին, որտեղից որ հեղեղը միշտ
Բարձրանում է, մտնում քաղաք, պատճառելով ձեզ մահ ու վիշտ:

Առաց, պոկեց տասը սև ժայռ, պոկեց տասը սպիտակ ժայռ,
Սարի գլխից դղրդալի, ամբողջ ուժով շարտեց վար,
Ապա իջավ, դարսեց մեկ-մեկ, շինեց բերդի հիմքը ամուր,
Հիմքի վրա վեր բարձրացրեց բերդ—աշտարակը քարակուռ:

Այն օրվանից, մինչև հիմա, Զղիբու Շատն ամեն տարի
Թեև հորդում, ափից ելնում, բայց զիպչում է այն վիթխարի
Քաղաքայուց ամուր կոկված աշտարակին կուռ, երկնառաք,
Մհերաչեն բերդի պատին, որ կոչվում է Բրջա-Բալաք:

ՍՍԱՍՈՒՆՅԱԻ ԶՈՒԼՆԱԿԻ ՍՈՒԳԸ ՄՀԵՐԻ ՎՐԱ

Շարին բռնեց խարդախաբար, և Մհերին գցեց ի հոր,
Ապա ելավ, իր մարդկանցով, յոթը գիշեր ու յոթը օր,
Ինչքան արձիճ կար՝ հավաքեց, ողջ կուտակեց իրար վրա,
Ու քառասուն խարույկ վառեց, ու քառասուն թեժ-թեժ քուրա

— Շնուտ, հալեցե՛ք արձիճն ամբողջ, հոհոաց նա արյունախում,
Այնպես խարկեմ, որ այս ծուռից հետք չմնա այս աշխարհում
Ու հալեցին արձիճն ամբողջ, ու փողրակներ դրին երկաթ,
Ու հոհոաց ամբոխն անսիրտ, ամբոխը չար ու կոռապաշտ

Այդ ալեկոծ ամբոխի մեջ կար մի պառավ խեղճ ու քարի,
Եկավ, կանգնեց հորի բերան ու ձայն տվեց խեղճ Մհերին,—
— Յո՛թը գիշեր ու յո՛թը օր, հավաքել են արձիճ բերել,
Հավաքել են արձիճ բերել, ուղու՛մ են քո մուկը մարել...

Մհերն ասաց.— Բարի մամիկ, գնա մի բահ բեր ինձ խկույն.
Գնաց սպառավն, առավ բահը ու հորի մեջ գցեց թաքուն.
— Էս հորին կից, Մհեր տղա, ուրիշ դատարկ հոր մի կա խոր,
Ծակիր, անցիր էդ հորի մեջ, ծակիր, անցիր ազատվես որ:

Բահը բացեց մի խոշոր անցք: Մհերն հորից ձայնեց նորից.—
— Գնա յոթը լիզըր բուրդ բեր, յոթը լիզըր կուպըր բեր ինձ:
Յոթը լիզըր բուրդ ու կուպըր—գնաց բերեց պառավն խկույն,
Գնաց բերեց նա մի շնչով ու հորի մեջ գցեց թաքուն...

Բրդով ծածկեց անցքը ամբողջ, կուպըրը ձեփեց բրդի վրա.
Ու կուպըրին կիպ, ինչպես վե՛մ քար, դե՛մ տվեց լայն մեջքը իրան:
Այն ժամանակ խարդախ Շարին հրամայեց գոռոզ ու խենթ.
— Լցրե՛ք հորը, թող Մհերը մի բիշ խաղա արձիճի հետ...

Շար-շար դրած փողբաղներով հոսեց արձիճը հուրհրան,
Հոսեց, ինչպես սպիտակ գետ, լցրեց հորը բերնեքերան:
Կանգնեց Շարին հորի կողքին, մինչև սառեց արձիճն հորի՝
Ու տուն գնաց թեթևացած, ու խնձույքի նստեց նորից:—

Ժպտաց Մհերն ու կոնակը պոկեց կուպրից, նայեց վերև,
Խորը հորից չէր երևում ոչ մի երկինք, ոչ մի արև:
— Պառափն ասաց.— Այ ծուռ Մհեր, հորից արի հանեմ, աղաս,
Պայմանով, որ սառն արձիճի վրա նստես, սաղրինջ խաղաս:

Ու գցեց խորը հորի մեջ մի հաստ ճոպան պինդ ու երկար,
Կապեց Մհերն իր լայն մեջքին, ու պառափը, ինչքան ուժ կար,
Քաշեց, տնքաց, հեաց, դողաց, ու Մհերին հանեց հորից,
Սափպեց, որ սաղրինջ խաղա, նոր հեռանա այդ աշխարհից:

Սաղրինջ խաղաց: Ապա ելավ, գնաց քաղաք, սիրտը՝ ցասում,
Ու լսեց, որ մի տնակում, մի ծեր ջուհակ երգ էր ասում,
Երգ էր ասում, մաքուր հետ, շարժում գլուխն իր սպիտակ,
Աղի արցունքն աչքերի մեջ, ահագին վիշտը կրճրի տակ:

Լսեց Մհերն երկան, երկան, ու զսպած իր վիշտը մրմուռ,
Դուռը րացեց, ասաց.— Այ մանրդ, է՞ր ես լալիս աղեկտուր,
Է՞ր է հենքիդ կեսն սպիտակ, ու կեսը սև, ինչի՞ համար,
Ասա, ցավիդ գուցե գտնեմ, գուցե գտնեմ ճամբա ու ճար:

Ծեր ջուհակը լալով ասաց.— Հենքըս սև է ու սպիտակ—
Նրա համար, որ սասունցին՝ խոր ցավ ունի իր կրծքի տակ,—
Մեր քաջ Դավթին սպանեցին, նրա ուրջին մեռավ հորում,
Նրանց համար եմ լաց լինում և ամբողջ օրը երեւում:—

Կանաչ-կարմիր հինեմ հենքըս, երբ սղում է հողը Սասուն.
Դեղին-կապույտ հինեմ հենքըս, երբ որ մահի ձայն եմ լսում.
Բռնեցին մեր քաջ Մհերին, հորին ավին խոր ու խավար,
Նրա համար հենքըս սև ու սպիտակ եմ հինում, եղբայր:

Մհերի սիրտը պղտորվեց նման աշնան առավոտի:
— Ջուհակ եղբայր, անցնում էի այս քաղաքով օտարոտի.
Լսեցի սիրտ քանդող երգըդ ու թվաց ինձ, որ երազում՝
Իմ հարազատ, իմ սրտալի հորըս քաղցր ձայնն եմ լսում:—

Բեր համբուրեմ քո ճակատը, քո սպիտակ մազերը սուրբ,
Քո ձեռքերը հալիտրի, քո աչքերը սեր ու սերսուփ,
Քանդի՛ր հենքդ սև-սպիտակ, մի արձակի՛ր ողբ ու հառաչ,
Սասունցի քաջ Դավթի տղան՝ կանգնած է քո աչքի առաջ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔ

Առաջին ցերեկը	էջ 5
Իմ հայրենիք	6
Արեային երևան	7
Սովետական մայրեր	8
Փոստատար	9
Վերադարձ	10
Ձեռքերը	11
Հոկտեմբեր	12
Հայ մարտիկներին	14
Հատուցում	15
Որոտան, իմ երգ	17
Ուկրաինական ծաղիկներ	19
Բրոնզ	20
Տեսիլք	22
Սեփան	23
Վերադարձ	24
Սայաթ-Նովա	25
Բանաստեղծին	26
Էլեգիա	27
Օշականում	28
Քեռի Մրտոն	29

ԾՈՎ ԱԶՔԵՐ

Երանի քեզ, բաղի բլրում	37
Երթամ թուխ ամպիկ լինեմ	38
Ջրիկ, դու ձր ակեն կուգաս	39
Թե որ ան անեմ	40
Ջուր ու գինի լինելի	41
Յամ, եկ, մարգարիտ շարեմ	42
Ծով աչք, ձեր փակ դռան դեմ	43
Տարին տառնեմի ու աթիս	44


Ինչ է, ժեռ քար եմ ես	45
Հսօր օր էր ոչ բարի	46
Այ իմ լուսնակ, արծաթե թաս	47
Չքվեր հսպես անբախտ տարին	48
Առավոտյան կաքավի պես	49
Խաս խառուտիկ կաքավի պես	50
Էն ով էր զարկեց	51
Յար, արի գնանք	52

ԼԵԳԵՆԴ ԵՎ ԲԱԼԼԱԴ

Վարդ և բլբուլ	55
Չարի ծագումը	56
Մեղրագետ	57
Ազոավը	60
Սելինե թագունու մահը	62
Ասպես Լիպարիտ	65
Հին զրույց	75
Արքան ու աղքատը	76
Արքա Արտուրը	77
Սեպագիր	78
Մերանի	79

ԴԱՎԹԻ ԵՐԴԸ

Առյուծաձև Մհեր	83
Դավիթն ու հարսնեորենքը	85
Դավիթը մաճկալ	89
Դավթի ջուլհականոցը	91
Դավթի որսը	93
Դավթի կռիվը Դեհրի հետ	95
Դավթի վերադարձը	98
Դավիթն ու զգրարները	101
Դավիթն ու Գյուրդին	104
Դավթի սերը	106
Սիրո խնձոր	108
Դավթի ու Համգայի կռիվը	111
Դավթի ու Խանդութի մենամարտը	115
Դավթի կռիվը վազրի հետ	118
Դավթի և Մհերի մենամարտը	119
Դավթի և Պարոն Ասաղիկի կռիվը	122
«Դավթի քարը»	124
Մհեր և Գոհար	126
Մհերը մշակ	129
Մհերն սպանում է Չմշիկի Սուլթանին	131
Մհերի լացը	133
Բրջա-բալաք	135
Սասունցի ջուլհակի սուգը Մհերի մահից հետո	137




Պատ. խմբագիր՝ Էդ. Քոփլան

ՎՖ. 10726: Պ. 123 Տիրաժ 4000 9 տպ. մամ.


Ստորագրված է տպագրության 19 VI—46 թ.

ՀՍՍՌ Մինիստր. Սովետին կից Պրիզրաֆ. և Հրատար. վարչ. № 1 տպարան
Երևան, 1946

1576y - hnefu







ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220029913

ԳԻՆԸ 10 Ռ.

A $\frac{II}{29913}$